

Բարձր

Ճ. Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 9


ՍԵՊՏԵՄԲԵՐ 1973

by R.A.R. ©

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- Վ. ՕՇԱԿԱՆ Երեւ փայլեամ
- Ա. ՆՈՒՐԵԱՆ Շիշը...
- » » Անդրադարձ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ Հարիզմէ հորիզոն
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Օտարականի պէս
- » » Անհարսնացեալ մտերմութիւն
- » » Հրաշալիք ուքերոյդ
- Բ. ԿՌԱՆԵԱՆ Տպարտութիւններ
- Գ. ՃԻՆՊԱՇԵԱՆ Ա. Ադամովի «Փրոֆետոր Թարան»ը
- Ա. ԱԿԱՄՈՎ Փրոֆետոր Թարան (Թարգմ. Վ. Գ.)
- * * * Իւրացումներու եւ ուրացումներու
գառիթափին
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ Պատմութեամբ արուեստի
միջազգային շարք հսկաները
- Ս. ԿՐԱՆՆԵԱՆ Լիբանանեան անհիշական
բանաստեղծութիւնը
- Բ. Փ. «Պարոյր Սեւակ» ճայնագանկը
- * * * «Ինքնաշարժի արկածով»...
- * * * «Իմաստուն հասկում»...
- * * * «Հնարար է»...
- * * * Հազար արիւնք...
- * * * Այս քիչ ծանօթ քերթումը...



Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Ր. ՑԱՐԻ. ԽԻՒՑ Ս Ե Պ Յ Ե Մ Բ Ե Ր 1978 ԳԼՕԳՈՒԹ

Վ. ՕՇԱԿԱՆ

ԵՐԵՐ ՎԱՅՐԿԵԱՆ

Գիրքին եզու ամուսնին վերջին երկու շաբաթներու շաբաթանքը պարտկել իր լուռ, մանրուք, աննշան օրերու դանդաղ իրարանցումին մէջ: Բերանը կզպուած, կարճուկ, հսկայ միջատի մը նման խորհրդաւոր շարժող՝ ան պտըացուց իր ներկայութիւնը հիւանդին շուրջ անսխալ, դրեթէ կրօնական ճիշտագոյնութեան մը խտտութեամբ ու կշռոյթով: Մէկ անգամ միայն բժիշկը այցելած էր անոնց միջին, խոնաւ սենեակը: Ամբողջ 45 օտարիներու ընդհանուր զբոսած տուրքակի մը պէս անկարեւոր դարձեր էր այլեւս: Յաւն ու հանդիման անդին, միայն մէկ-երկու բառ ու շարժում մնացեր էին ու կտոր մը անբացատրելի իմաստութիւն, երբ ատանմին բլլային, ջովը նըստէր, մտքն իստէր անոր հետ, հետեւելով փեղկէն ներս ինկած լոյսի շիւղին, ճակատագրի պէս անդրդուելի, անդիմադրող:

— Ազնիւ... մսիմ կոր տաւա:

Ա՛յնքան տկար, որքան երեխայի մը ձայնը: Սեղճուկ սենեակին մէջ-տեղը կայնած՝ ջննեց շուրջը: Ջաւահ չէին ունեցած, բայց ո՛չ մեծ ցաւ մը,

ուչ ալ աւանդական, զրեթէ պարտադիր կտրուող կրծեր էին միօրինակ շարքը տարիներուն: Տեղ մը, իրմէ անկտիս, անասման, անպղծելի դուրդուրանք մը կար ու հ'ապրէր իրմէ իսկ աւելի թրական, սիրոյ պէս բան մը՝ այդ խոչար, հանդարտ, բարի մարդուն համար: Տեղ մը հայր աստուած մին ալ կար, ճիշդ իր շտեմած հօրը նման ու ամէն ինչ կեանքի մէջ կը դիւրանար, ձեռքերու պէս պարզ կ'ըլլար շնորհիւ անոր: Կեանքը, այսպէս նկատար, բարի սենեակին մէջ, պարզ արարողութիւն մըն էր, յուզումի ծփանք մը, որ շորս կողմը կը լեցնէր ու կը յորդէր դուրս մինչեւ հոն՝ ուր աչքը հասնէր: Աւետիս կը մեռնէր այսօր, ու անկասկած կեանքը կը շարունակուէր ուրիշ, նոր, պարզ օրէնքով մը — ասկէ անդին չէր անցնէր Տիկին Ազնիւի երեւակայութիւնը, ոչ ալ փորձառութիւնը: Կեանքը դիւրին էր:

Ազնիւն էր, որ դժուար էր, մարդոց հետ խօսիլ ու հասկցուիլ, համոզել, որոշում առնել, չկորսուիլ սէրլիւսին ու փոստային հետ, չխաբուիլ Պուրճ Համուտի կուսակցան շրջուն վաճառողներէն: Աշխարհ աւելորդ տեղը խնդրած էր ու չէր հասկնար ինչու մարդիկ իրար հրմշակելով կ'սփռուէին հոս-հոն, կ'ընդունէին վարի սինեմայի մուտքին, կը պոռային ու բանտ կ'ընկնային, տապիւն նման, ինչո՞ւ տղայ, կը մեռնէին ու կու լային: Ինք ալ երբեմն կու լար, բայց շատ լաւ չէր գիտեր ինչու:

— Ազնիւ...

Տարօրինակօրէն բնական, անճիգ, սկիզբէն պատրաստուած կը թուէր ստեղծի սա պահը հիմա: Զէր դիտեր մահը ինչ է ու չէր վախնար: Կը լընթիւնայ կար, անցաւ միտքէն ու տխրութեան պէս բան մը զինք անփառաց շուրջէն: Կարի մեքենան, քառակուսի մեծ հայելին, սեղանը, բազմոցը, պատին պատկերը: Հիւանդութեան առաջին օրէն իսկ զոցեր կ'ընդունէր ու աշխարհը: Քաղցր է նկ թող ինչ մարդ շի գայ, բար էր՝ առանց դիտնալու ինչու ու անդիտակից անհամբերութեամբ մը մահուան սկսեր էր սպասել: Ինքը անանձին էր հիմա էրկանը հետ, աշխատանքի ու յոգնութեան քսան ծանր, անտրտունջ տարիներէ ի վեր զրեթէ առօրին անգամ: Մարդու պէտք չունէր, ոչ իսկ տղեթորին: Կիսամութիւն մէջ աւելի ապահով կը զգար: Ներսը, մէջը տեղ մը այնքան սէր, բարութիւն, այնքան անծանօթ բանի մը ծարուր կար պահուած, որ կը բաւէր շարժիլ, կը բաւէր մէկ-երկու բառ ըսել անոր կամ իրեն, առանց մտածելու կամ ուզելու, որպէսզի ամէն ինչ աղօթքի պէս, երես լուարու, սուրճ եփելու պէս պարզ ըլլար:

Վերցուց բազմոցին ծածկոցը ու փռեց ամուսնին գրայ: Յետոյ կայնեցաւ ջովը: Տխրութիւնը միշտ ետ բերած էր անցեալը իր տարտամ յիշատակներով, ուր որքանոցի հոտը ու ջրով լացը ու Աւետիսին ծանր մարմինը միշտէւ հոս կը հասնէին, սա մարդը սակար ու մորթ երեսը, որուն նայել էր առտունները պատահամբ, սուրճի ատեն եւ յետոյ ալ ուշ գիշերը, երբ ան սըրճարանը գոցելէ ետք հազարով, երբեմն ալ խմած՝ տուն կը հասնէր, բառ ու նայուածք սպասած, ու կ'ապաստանէր բազմոցին անկիւնը, մթին, անհասկնալի ցաւ մը դէմքին գրայ: Այդ պահերուն ինք կը վախնար անոր մօտենալու, նայելու իսկ աչքերուն, մեծ, կարծր ձեռքերուն, խոհանոց կ'երթար ու կը նստէր, արգիլուած, արտում: Կը սիրէր իր տունը, սակայն ոչ մէկ կողմ կը զգար առարկաներուն հետ ու ժամանակ ալ չունէր շատ զբաղելու ատով: Ինչպէ՞ր կը լեցնուի տուն մը, կը հարցնէր երբեմն: Միայն երբ ծիրայրը մեկնէր՝ կը զգար տունին պարապութիւնը, լուռ օտարութիւնը, որոնք մէջտեղ կ'ընկնէին յանկարծ: Այն ատենները, Աւետիս աւելի ազմկոտ կ'ըլլար, ինքնիրեն կը խօսէր, աննպատակ կ'երթար-կու դար երկու պզտիկ

սեննակներուն մէջ, մինչ ինք կը սպասէր, որ պատկէր անոր հսկայ մարմինը ու ինք երթար քոյր մտնէր, պահուելու, հանգարտէր առանց մտածումի, խօսքի կամ շարժումի կամ նոյնիսկ սիրոյ, բացի պատիկ աղու մը պատկերէն, որ, անորոշ ձեւով մը դիտէր ինք, կը խաղար անոր բաց աչքերուն տուօն: Բայց իրեն համար ուրիշ ոչինչ կար- սա էր ամէն ինչը, — գաւակ, էրիկ ու քոյր բուրբ մէկ հիմա դինքը զբեկած էին լուսթեան կարծր թեւերուն մէջ:

Դուրս գարնուեցաւ:

Երկիր մը խլրտաց մէջը: Դրացի, ազգական, բարեկամ ու ծանօթ պիտի դային հիմա, յետոյ առթորը, Տէր Հայրը ու Պէլլէտիէի անհատկանոյի մարդիկը, բոլորն ալ աւելորդ, անկարեւոր ու պիտի աւրուէր, փոխուէր ապրելու մայր, պիտի շուարէր իր շարժումը, լաց ու հարցում ու խօսքի փրշորանք պիտի թափէին իր ու Աւետիսին միջև: ստեղծուած զազանի պարտպութեան մէջ, պիտի դոցէին ու լեցնէին աշխարհը ու կոխկոտէին, սպաննէին մահուան ու կեանքի այս մտերմութիւնը, զոր սէր կը կոչէր ինք: Այս բոլորին տարտամ դպանութիւնը եկաւ ու լեցուց սեննակը:

Քացաւ: Ժիրայրն էր, իր մանրուք դէմքով, մարած աչքերով, Նիհար, անձայն:

— Էկու, ես վրուս:

Բոնեց ձեռքէն, ներս քաշեց:

— Ամձոն քեզի կը սպասէր կոր:

Հիմա մերի յարկէն դուռ մը ուժգին դոցուեցաւ, կին մը Ծօ Արթօ', ս՛ր ես, կը պոռար, մէկը ներս մտաւ ու իրեն թուեցաւ, հոն պատկած սառանդակներն մէջ, ամայի առաստաղին տակ թէ մէկ օր է ումոզը կեանքը, որ ասանկ պիտի շարունակուէր մինչև ամէն ինչի ծայրը, կէս-մութ, կէս-տառածին ջրուկով ցաւէ ցաւ, որովհետև դեռ ներս չէր մտեր իր գաւակը, ասօր տարեկան, արեւէն այրած, խելացի, մաքուր, պզտիկ, կակուղ մատնեքով իր տղան...: Տեղ մը սխալ մը կար, խելքէ միտքէ դուրս բան մը ու կը բաւէր, որ ինք շարունակէր սպասել, պատկած կամ սօքի նոյն բանն է, սպասէր, որ պէտքի կեանքն ու աշխարհը մնային ինչպէս որ էին, մինչև իր տղուն վաղելով, իսայրի՛կ պոռալով գալը, որպէսզի ամէն ինչ նոր սկսէր առաջին անգամէն:

— Ո՞վ է, Աղնի:

Հարցում չէր, չէր մնացեր այլևս: Միայն դադարում մը, ժամանակին հետ սառած ու նեղ ճամբայ այդ սառոյցին մէջ, ուրիշ ան պիտի գար: Ո՛չ վախ, ո՛չ սէր, ոչինչ կրնար խանդարել յամառ, անշարժ ներկայութիւնը յիշատակներու, բառերու կոտորուանքները մտքին եզերքին, համբերութիւնը, որ կրնակի ցաւը զազրէր ու կինը նսրէն ատուան սուրճը բերէր ու ինք նախաճաշէն ետք փողօցի կանչին, հրճտութիւն հետ մտածելով լոյսին մասին ու յաճախարհներու կոյր, կորսուած նայուածքները, մինչ դուրսը հեղեղի մարդերու կը քսուէր դիտակցութեան ու կինը շուրջը կը զանոնք աշխարհի ներկայութեան ապահովութիւնը տալով, տարիներու վարժութեամբ խօսելով կարճ, յստակ, աննշան կարեւոր բաներ, ինչպէս ըլլալու են ամէն գործաւորի տան մէջ այս պահուն ու ինք մտածէր, որ այսօր ալ եղբայրս պիտի գայ ջղախի, լալկան, բղիկ-բղիկ՝ աղբա՛ր, սա փիրայրը քովդ առ ու ինք մտածէր իր պատիկ քրոջ մասին, հինգ ամառ յղի, երեք գաւակով, էրիկը բանտը, շեմ կրնար, Աթօ, մենք էրիկ-կնիկ կ'աշխատինք, սակայն շուրջով մտածել, թէ ինչու կը մերժէր, սուտ կը խօսէր, հարկաւ կրնար

չեմ կրնար վալլանի ու գիտնալով եղբոր թառերը. տղան փողոցը մնացեր է, վերջը գէշ կ'ըլլայ հա, սաքամ տարի ետգ տարի, սա ալ ըրէ, աղբար, բայց չկրնալ բացատրել եղբոր կամ ինքզինք ինչու տարբեր բան է զբողոք դաւանակը գրկելը, մագերը շոյելը նոյնիսկ առ տարիքին՝ եւ ուրիշ բան է գիտնալը, թէ դեռ յոյս մը կայ սէրը շվատնելու, միակ հարստութիւնը չկորսնցնելու, թէ իրենց պէս հասարակ մարդոց շարժարանքին ծայրը անպարձան երջանկութեան պէս բան մը ըլլալու է, որ ներոնէն կու գայ, արիւնէն, ձայնէն ու շունչէն մտնաւանդ, բայց ոչ թէ դուրսէն, ոչ: Յետոյ ինքզինքը փողոցին ափին մէջ կը գտնէր՝ շուրջի աղմուկին շարժումէն ուժ տանելով, կը մտնար կիներ, հիմա նստած կարի մեքենային առջեւ մինչեւ գիշեր տուրակ կարելով ու ինք ասդին իր վաթսուն քանի՛ տարին կը շալկէր, կը սոթատէր, կը պոռար, կը խնդար, բռնի կը հայհոյէր, որ գիմանար մինչեւ կէս գիշեր ու անհամբեր տուն դառնար, ուր հաւանաբար ան կը սպասէր իրեն, նուէր մը, կրջանկութիւն մը, յոյսի մը յոյսը, աթոռին ծայրը նստած, ա՛մբողջութեամբ, հաւանաբար հազարով, էկալ տղաս շնջալով միտքէն, գիշերուան ամայի մայթին վրային թւթեւ, յողնած:

— Հոս է կու, ես վրուս:

Անձկութիւն մը յանկարծ կծկեց սիրտը: Ո՞վ էր: Ձէր կրնար տեղէն շարժիլ: Մէկէն աւելի պարագայ, աւելորդ դարձեր էր աշխարհը: Դուրսի ստորճանճերէն՝ մէկը վազելով վար կ'իջնէր: Ամալի, ճաղատ աշուն մը ըլլալու է ամէն կողմ ու մարդիկ շալկեր են առիկա ու կը մեկնին միտմիտակ: Բայց ինք միտակ չէր, ո՛չ հիմա, ոչ ալ առաջ, մարդիկ չէին ձգած առիկա, ոչ ալ կիներ, որ հիմա քովը եկեր շրթունքները կը շարժէին՝ աչքերը խոշոր բացած, տաք ափը ձեռքին վրայ: Հոն էր անձկութիւնը: Գոցեց աչքերը:

— Ժիրտյուն է, Աւետիս:

Տկար զգաց մէկէն, հազիւ կրնար մտածել: Ժիրտ՞յր — յետոյ ճանչցաւ ու հին վիշտն էր, որ հա կու զար տղուն հետ, կը կծկէր թոյլ ջիղերը: Յոյսը, յոյսը չէր մեռած տակաւին: Կը բացուէին աչքերը: Հոն է Ազիւր: Ամբողջ կեանքին ընթացքին կիներ դուրս մնացել էր իր գաղտնի ապապայէն, կապ չէր ունեցած վերջնական երջանկութեան հետ: Իր տղան միշտ առանձին երեւակայած էր, գիրկը նստած կամ ձեռքը բռնած, փողոցէն:

Շարժիլ ուղեց, կունակր սաստիկ կը ցաւէր: Վիզը բռնուեր էր ու կրնն էր, որ հոն կայինք էր՝ տղուն տխուր, անպաշտպան կերպարանքին քով: Ու կրնն կու լար...: Ուտջին անգամն էր, որ կը տեսնէր անոր լացը: Ի՞նչ կար լալիք: Նայեցաւ տղուն շէջք գէժքին: Մէկը թիթեղի մը կը դարնէր: Մպասեց որ հասնի ազմուկը:

— Ինչո՞ւ...

Ձկրցաւ շինել բտները. ինչո՞ւ, ի՞նչ կայ լալիք, ու յանկարծ մտածեց, թէ մէկ բան կար աշխարհի երեսին, որ կրնար մեռնիլ իրմէ առաջ, թէ ի՞ր տեղն էր, որ ան կու լար, ի՞ր վիշտը, յուսահատութիւնը ու պահուած ցաւն էր, որ հոն, կնկան աչքերուն մէջ կը խեղդուէր: Ի՞ր յոյսն էր, որ կը մեռնէր իր նայուածքին մէջ: Սենեակը սրբա՞ն մթնած էր ու ազմուկը հեռացած:

Երկար նայեցաւ անոր մեղմ, փայլող այտերուն ու իրեն այնպէս թըւեցաւ, որ լացը մեռելիքուն համար չէր կրնար ըլլալ, այլ միայն այրող անբուն համար: Ծնչատութիւնը կը դժուարանար, ցաւը մեղմացած էր, բայց մտա՞ք կը խորանար, կը տարածուէր, կը պղտորէր միտքը: Իրեն վրայ չէր լար անիկա, ոչ, ոչ ալ մեռնող յոյսին: Տղան էր: Ու նայեցաւ հիմա անոր,

այնքան պզտիկցած յանկարծ, լուռթեան մէջ կորսուած: Վախի սլաք մը ծա-
կեց պահը — տղան էր, ու կրնար հիմա անյայտանալ, ջնջուել աշքերէն: Ո՞ւր էր յոյսը, ո՞ւր գնաց, աստուած իմ: Տեղ մը, բան մը կը հասնէր:

— Ժիրարջ:

Հաղիւ լսելի, սակայն իր ականջին պարապ, խորունկ արձաղանդ մը
տուաւ: Յստակացաւ պատկերը: Ի՞նչ պիտի ըսէր, չէր գիտեր, ո՞ւր է կեան-
քը, հին ընկեր: Կոնակին ցաւը ուսերուն զարկեր էր: Հասկցա՞ւ — Ժամա-
նակը կը լմննար իրմէ դուրս, հսկայ ծանրութիւն մը կը ճնշէր աշքերուն
վրայ:

— Գոյս էկու:

Մարդիկ ինչպէ՞ս կը մեռնին, աստուած իմ, ի՞նչ կ'ընեն չմեռած, ո՞ւր
կը դնեն աշխարհը, որ ճամբայ բացուի, երթան՝ առանց աշխարհէն հեռա-
նույտ, առանց ոչինչ մոռնալու, ոչ իսկ ահաւոր ցաւը՝ վղին փաթթուէր կը
տանի, ո՞ւր, ո՞ւր: Գոյր եկեր էին ու կմախքացած մատներով բռնեց անոնց
ձեռքերը: Աւետիս յսեց մտքէն, ինչպէ՞ս կը լսէր սմէն վայրկեան արճարա-
նին մէջ ու ետ խուժեց յոյսը նորէն, խորունկ շունչ մը առաւ, սեղմեց ա-
նոնց ձեռքերը ամբողջ ուժով ու նոր զղաց ակերուն տաքութիւնը: Հոն էր
յոյսը տակաւին, այդ ակերուն մէջ, չէր մեռած: Կեանքը չի մեռնիր, ո՛չ:

Մենեակին գիծերը կը խաղային, վարէն քամիոն մը պատուհանին ա-
պակիները ցնցելով կ'անցնէր: Աշխարհը, կեանքի հսկայ շտեմարանը կ'աղ-
բիւ կար անցաւ մտքէն: Կեանքը ո՛չ կը սկսի, ոչ ալ կը հասնի մարդու ձեռ-
քերուն մէջ, այճ, մտածեց, ինչ որ կը հտտնի սպասումն է, մութ համբ-
րութիւնը, թէ որ մը տնչուտ կը հասկնաս ինչ բան է ալբիլ ըտուածը, դա-
ւակ մը կուրծքին սեղմելը ուժով-ուժով ու թէ ինչու ոչինչ կը փոխուի,
վաթուսն տարիներու ընթացքին նոյն անձն ես, ո՛չ մեծ, ո՛չ պզտիկ տղու
պէս, որ կրնայ ծնիլ, շննիլ՝ նոյն բանն է, բայց նոյն բանը չէ, որովհետեւ
չը՛լ ապաստուած ես ծնող, ամող ու մեռնող ուրիշներով, որոնք քեզի չեն սպա-
սեր, գլուխնին առած կ'երթան, հաւանարար տղադ ալ հետերնին առնելով,
որպէսզի կեանքը չհասնի ու միայն դուն է, որ դուրս մնացիր ես մարդոց
խումբէն առանձին, անպէտ, անգաւակ. շատ-շատ կնիկ սուրն մը մտածեց:
Գոցեց աչքերը կրկին:

Կօշիկը կը նեղէր, Օննիկը Փլիփբրին քով իրեն կը սպասէր, վայրկեան
մը հանդիպելու եկած էր ու հիմա բռնուեր էր, ստիպուած էր ասոնց քե՛ֆին
երթալ: Վարժուած էր անոնց, գիտէր որ կը սառապէին, թէ ամսոն քանսէր
ունէր, պիտի մեռնէր ինչ ըլլալ ըլլալ: Բայց չէր ուզեր անոնց ցաւին մէջ
մտնել ու յանցաւոր զգալ, թէ ինչու մարդիկ գաւակ շունեցած կը մեռնին:
Լաւ մարդ էր ամսոն, մեղք էր որ երթար, բայց մարդիկ հովի պէս բաներ
էին, չուքէ չիմուած ու ինք ոչինչ կը հասկնար անոնցմէ ու ի՞նչ կապ կը
կորուէր իր ու սա մարդուն միջեւ, երբ մեռնէր, ոչ ալ կնկան մէջ, վստահ
էր: Զինք մեծցուցած էին, դպրոց, հաշուատ, դրպանի դրամ, նուէր-մուէր
ամէն ինչ ու հայրը երթալով աւելի գինովցեր էր մինչեւ անցեալ ամսուան
դէպքը դրացիին հետ: Բայց ինք ոչինչ սորված էր սա խեղճ մարդէն, որ
շորիի յամառ ուժով, բարի խօսքերով, հին-հին ջարդի, թուրքերու-մուր-
քերու պատմութիւններով հոս հասեր էր: Ինքը յանցաւոր չէր ու ոչինչ կըր-
նար ընել: Միքիլը, յարգելը՝ մէկ բան, ու ասոնց ցաւի, աղքատութեան ու
մեռած աշխարհի մը պատմութիւններէն ձանձրանալը՝ ուրիշ բան:

Անգին նայեցաւ: Պատին՝ մեծ հօր խոշոր, հաստ թուղթի վրայ փակ-
ցրւած լուսանկարը կար — մեծ ականջներ, ածուխէ աչքեր, առատ պեխը,

յօնքերը, Ֆէսը ու Հին սորսափելի լըջութիւնը, Ծանրութիւնը, Թանձր Հա-
յութիւնը: Տիկին Ազնիւ քովէն կը խօսէր իրեն, բայց աչքը փեղկին ճեղքէն
լսյալ փնտռեց, դուրսը առտուն իրն էր, արձակուրդի վերջին օրերն էին-
այս տարի պըրլէ կայ, տղաս ժիրայր, քեզ տեսնեմ հա՛, կոչո՞ւ ձեռքը ուսին,
դրեթէ հայրական, բայց ինք չէր կրցեր հասկննել այս մարդուն, որ ինք
դպրոցի գլուխ շունչէր, սիրտ ալ շունչէր ուրիշ բան մը ընկաւ, թող տտանկ
ամէն ինչ դիտողի ձեռք շառնեն իր ընկերները, կրնային պօշ-կէզէններ ըլ-
լայ, քեզի համար չըսաւ ամեն, ժիրայր. մի՛ նեղուիր, բայց ուրիշ ընկեր
չկար աշխարհի երեսին: Փամանակը չէր անցներ: Զեռքը զըպանը տարաւ,
սիկարէթ կ'ուղեր ծխել:

— Ի՞նչ է:

Վախ կար, առաջին անգամ ըլլալով, Ազնիւի ձայնին մէջ: Հոնդիւնը
կըկնուցաւ, հեռուէն զինքը կը կանչէր, իր անսահման, անստանելի սիրոյն
ուղղուած էր ու ինք կընար շհասնել այդ կոչին: Ո՛ր է ամէն ինչ, ո՞ր:
Տեղ մը տտապանք կար ու մահը կը սպասէր շունչը, բայց տտիկա կեանքն
էր արդէն, սա սենեակը. ու սէրը կը բուէր: Ատիկէ անդին կար տղան, իր
ծոռու, անհասկնալի աշխարհով: Ու կար սա՛ — վախը, յուզումը ու բացատրիկ
նուրբի պէս եկած սա պահը երեքին համար, որ կընար յանկուտը վերջ գանել
ու կը կորսուէին թէ՛ կրէկը, թէ՛ տղան, թէ՛ ալ սէրը, որ կը բխէր հիմա այն-
քան խառնակ, խորունկ. պէտք չէ մեռնիս, Աւետիս, մտածեց, բայց վախը
ղեւ Հոս էր ու մաս կը կազմէր իր աչքերուն, ձեռքերուն, կ'ուսողներ զուս-
ցումը, միայն թէ չհատնի ժամանակը, բան մը չփոխուի մինչեւ աշխարհի
վերջը:

Նմարեց, որ ժիրայր կը փորձէր ձեռքը քաշել Աւետիսի արկէն, բայց
ան չէր թողար: Ահաբեկ՝ Ազնիւ նայեցաւ տղուն աչքերուն: Ինքն էր մայրը
այս տունին ու տղուն ու մարդուն ու առանց իր կամքին ոչինչ կընար շարժիլ
սիրտերուն մէջ: Հակեցաւ ամուսնին վրայ: Մօտէն, ոչ մէքը փոխուած, պըզ-
տիկցած կը թուէր: Ուրի՞շ մէկն էր արդեօք: Դուրսէն ազմուկ մը փրթաւ,
սակայն այնքան հեռու էր, որ չկրցաւ լսել: Մեղմօրէն, երեխայի հետ խօ-
սելու պէս, հարցուց.

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզես, մարդ:

Շատոնց դադրած էր սրեւէ բան ուղեւի: Այսպէ՞ս է որ կը հատնի
կեանքի մեծ վայրկեանը: Կարելի չէր ուզել, այնքան լեցուն կը զգար ինք-
զինքը: Այսքան մօտիկ չէին եղած մարդիկ իրեն, բնա՛ւ: Տղան պէտք չէր հե-
ռանար, ցաւին պէս պէտք էր կատչէր աշխարհին: Ազնիւ... Ազնիւ... կրկ-
նեց մտքն ու անորոշ, տխուր դուրդուրանք մը լեցուց զիտակցութիւնը:
Երկվայրկեան մը ինքը չէր, կի՞նն էր, որ կը նայէր իրեն: Զգայնութիւնը
մէկէն պարպուեցաւ. նորէն առանձին էր: Մէկ բան կը մնար:

— Ժիրայրը:

Քրտներ էին երկու օփերը ձեռքերուն մէջ, հակառակ անոր, որ կը
ստուէր իր մարմինը: Լոյսը կը նեղէր աչքերը: Գոցեց, սպասեց, ամէն ինչ
կը ծփար, վար կը խուժէր: Կու՞ժքը, վիզը պիտի պայթէին: Զգաց, որ այ-
տին տաք շունչ մը կը ջստէր: Ազնիւ, անցաւ մտքէն ու անունը մութերուն
մէկէն բնաւ այդքան խաղաղութիւն չէր տուած իրեն:

— Վերջը... Ժիրայրը...

Ուժը կը պակսէր, մարմինը կը պզտիկնար ու կը հեռանար: Շունչը
կը բռնուէր հիմա. վերջին ճիգ մը ըրաւ. պիտի ապրիմ մինչեւ վերջը-

— ... Քովդ առ, տղաս...:

Շտկուեցաւ թոյլ էին սրունքները, սակայն տարօրինակօրէն թեթեւ-
 ցած էր ու անբնական, արտառոց երջանկութեամբ մը ողորուած: Գուրգու-
 րանքը ու գուրգուրանքի ծարաւը՝ նոյն ատեն պզտիկ կուրծքին տակ. կեանքը
 կը լեցուէր կրկին, դեռ պիտի սիրէր մինչեւ հո՛ն՝ ուր կը հտտնէր աշխարհը,
 ոչ իսկ մահը կրնար արգիլել ասիկա, ոչ: Վախը գացեր էր հիմա, հաւանա-
 բար ամուսնին մէջ, թէ քնաւ չէր եղած այդ վախը, միայն սպրեւու վտան-
 քը, մարդոց մէջ միս-մինակ:

Ժիրայրը չէր կրցեր լսել մահամերձին խօսքերը: Բայց անձանթ խը-
 քովք մը մտեր էր մէջը, ժամ առաջ գուրս կ'ուզէր փախիլ, ձեռքը բռնող
 մատները թուլցեր էին արդէն, կրնար երթալ ու ա'լ ետ շղալ: Պահը սակայն
 անհասկնալի ուժ մը ունէր, որ կը ճնշէր վրան, բոնեք էր ստեղծը: Անգոյ-
 լաբար սեղմեց ամմոյին մատները: Զօրութիւն մը կար այդ հպումին մէջ,
 որ իր ամբողջ կեանքը աւեր-բերեր էր հոս, տարբիներու հետ քիչ-քիչ շին-
 ւած ուժ մը, որ թէ՛ իրն էր, թէ՛ ալ անորը: Ամմօ, անցաւ մտքէն, նայելով
 պատի պատկերին ու փախելով անկողինին մտրուէն ու այնպէս զգաց, որ
 նոյն անձը չէր ինք շուարտով եզերքը հասած, գրեթէ վախեալով շարժիլ:
 Պահը եկաւ-անցաւ. ամմնն կը մեռնի կար, մտածեց, բայց յուզուած չէր,
 միայն կորսուած, չփոթ տխրութիւն մը — որո՞ւ համար — որուն չէր հա-
 մարձակեր նայիլ, յանցանքէ մը փախողի պէս: Աչքերը Ազնիւր փնտռեցին
 ու իրեն այնպէս թուեցաւ, որ փոխտի նման բան մը կար անոր թաց դէմքին
 վրայ: Զհասկցաւ:

Փողոցը ազմուկ կար նորէն ու հիմա նայուածքը գնաց փեղկի ճեղքին:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ



Ա Շ Ո Տ Ն Ո Ւ Բ Ե Ա Ն

Շ Ի Շ Ը ...

Դժբախտութիւն է գիտնալ, որ չորս պատէն ներս ապրած
Տառապանքիդ համար դո՛ւն պիտի ըլլաս միշտ վկայ
Ու դեռ՝ եթէ... հաւատան եւ արցունքիդ մէջ յանկարծ՝
Զխեղագն քեզ, շխնդան՝ երազներուդ ալ վրայ:

Ի՞նչ փոյթ սակայն, երբ գիտեմ նաեւ թէ շիշն արփալանջ,
Արշալոյսի երգերով պիտի շող ու մարգարիտ
Լեցնէ քիչ-քիչ, ծարաւի սա գաւաթին անկարկաչ,
Որ իր հոբին մէջ տեսաւ միայն... երաշտն անունիդ:

Այգիներուդ կարօտով կը մօտենամ յուսալի,
Վզիդ ոսկի մանեակին, որ *կոնյակիդ* «Հայաստան»
Զրվէժին հետ ումպ առ ումպ իր աստղերէն կը քակուի,
Դարձէդ վհառ հոգիիս յանուն երգին մտացման:

Գէթ ա՛յս ըլլայ իրական, եւ գաւաթէն շրթներուս
Լաւ բարձրացոյ՛ ու քու մոյթ ամպերն արցունք չդառնան.
Խաբուիլն ազուր է անշուշտ եւ տանելի՛ ամէն յոյզ,
Երբ քաւը սէրն է նոյնիսկ եւ կինն է քեզ դաւանան:

Բայց դուն անո՛ւշ Երեւան, արտասուաթել օրօրոց,
Իմ մեղքերուս համար ի՞նչ կ'ուզես նոխազ քաւութեան,
Երակներուս մէջ այնքան ատեն որ կայ սէր ու բոց՝
Ես չդառնամ ա՛լ քեզի՛ չհասկցուած գոց մատնան:

Ա Շ Ո Տ Ն Ո Ւ Բ Ե Ա Ն

ԱՆԳՐԱԳԱՐՁ...

Անաւարտ երգին մորմոքը ո՛չ ոք
 Հասկնալ կրնայ —
 Բառերն են անոր ծիծաղ լիաթոք՝
 Գրիչիդ վրայ:

Հիմա որ կ'ուզեմ պահերն իմ այրած
 Ունենալ կրկին՝
 Կենդանի մահուան ի՛մ ձեռքով փորած
 Առջեւն եմ փռսին:

Գոց աչքով փայած քանապարհներուն
 Հեփիաթն է երկար,
 Բաց աչքով ու տանջ իմ անուրջներուն
 Երկինքը՝ խաւար:

Անոնք որ չաւարտ երգով հեռացան՝
 Ընկեր եմ անո՛նց,
 Ի՞նչ եղան արդեօք, իրա՞ն մահացան,
 Թէ ունին դեռ բոց:

Քու իսկ հաւ փոք մէջ մեռնիլն է դժուար,
 Երբ ամէն վայրկեան՝
 Կը զգաս քէ նիզին եղած ես օտար
 Ու միշտ՝ ...պարտական:

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

«Լսէ՛, Երեւան»

digitised by A.R.A.R.@

ժուռըր եւ անդունդը : Հայկական տիրապետութիւնը վերջ դտած էր : Գար-
ւերը կ'իշխէին այդ գրան :

Սարսափի աշխարհը՝ նեղ հորիզոնով : Ճանապարհի երկու կողմերուն
վրայ կը տարածուէին մութ անտառները, ուր միշտ ապաստան մը կը գտնէին
արիւնի ու կոզսպուտի ծարաւ ժարդադայերը :

Մեր մետաքսի կարաւանը բազմամարդ էր ու բոլորը զինուած կ'ա-
ռաջանային, իրենց երգի արձուպանդները տարածելով անդունդներու մութ
ալքերուն :

Երեք տարի առաջ, այդ առիթով իմ գրած մէկ նամակին պատճառով
Մուշէ բանար մտած էի, սիրտս ուրախ : Հիմա Գայլի Դրունքի այս անցքը
սիրտս խոցոտեց : 1904ի Սասնոյ ապստամբութենէն ետք՝ Գալուստ բանտար-
կուհեցաւ Կէնճի բանտը, ուր անշուշտ, երբեմն այս արիւնոտ ժայռի անցքե-
րով կը յուզուի : Ես ալ յուզուած եմ : Հետու հարկոյններու մասին շեմ մտա-
ծեր : Խաւարուն կեանքի հորիզոնները սրտիս մէջ ծաւալած են . . .

— Գրէ յուշերդ . . .

Ինչպէ՞ս գրեմ, կարճ ու կարճակ, թէ սրտիս հարկոյններուն տարած-
քով . . .

Կարճ ու կտրուկը գրած հաշուեցէք : Այնքան կարճ, որ կարծես թէ
ծառի մը տակէն կամ ժայռի մը քովէն անցար : Ու ընթերցողը իրաւացիօրէն
կրնայ բացադանչել :

— Ո՛վ ծառերու եւ ժայռերու տակէն անցած չէ, այն ալ հարիւրաւոր
եւ հազարուոր անգամներ . . .

Ի՞նչ կրնամ ըսել ուտերը թօթուղ ընթերցողին : Ամէն մարդ ինքնիշխան
թող պատասխանէ : Ես գիտեմ, որ հովը կ'անցնի, ու այդ տեղի կ'ունենայ
աշխարհի տարածքին : Հովը կ'անցնի ու մարդիկ դո՛ւնեակութեամբ կ'ըսեն :

— Հովը անցաւ . . .

Ու հանդիստ ու խաղաղ ճանապարհը կը շարունակեն, արտերը կը հեր-
կեն կամ ծաղկանոցին մէջ հանգարտօրէն կը ժամանցեն :

Միայն այդքան : Սակայն, իր անցքին հովը ի՞նչ տերեւներ ու ծա-
ղիկներ գետին փոկ : Ի՞նչ թանկութեք իրեր մէկ տեղէն միւսը փոխադրեց,
ու ուրախացուց շատերը : Հաշուի առնող չկայ :

Ու երբ դուք հանդիպիք բաղմութեան մը, որ տաքէն կը տառապի եւ
կը հեւայ, հոն պիտի լսէք :

— Ա՛խ, հով մը ելլէր ու քիչ մը զովութիւն բերէր այս կողմերը :

Հովին անցքը ոչինչ է : Հողիին հովերն են, որ մտածումներով դար-
դարուն կը մնան : Երանի՛ սնոր, որ հողիի այդ հովերը գիտէ զրսեւորել,
նկարել փոթորիտն այրեցնելով, ու՝ գունաւոր նկարներու ցուցահանդէս ներ-
կայացնել :

Կարաւանի օրօրուն շարժումներուն հետ կ'առաջանամ ու արիւնոտ
ճանապարհներու մտքին մտմտաւք մեղմելու համար՝ ձիուս վիզը կը շոյեմ :
Ճանապարհը վերջ մը ունի, վերջ մը, որ նոր ճանապարհի դուռ կը
բանայ :

Մենք արդէն հին Տիգրանակերտն ենք : Պարիսպներու եւ քանդուած
զանազան կառուցներու կողքին կ'ծկուած է Ծարդին գիւղաբաղաւքը :

Տիգրանակերտ եւ Ծարդին :

Երկու հազար տարի առաջուան հզօրութիւնն ու փառքը ցուցադրուած
է կարծես՝ մեր ճգնուած ժողովուրդին ներկայ պատկերը դատումի առնելու
համար :

Քաջակորով հայ զանգուած մը կայ այս հնադարեան զիւղին մէջ :
Ջինուած են եւ կը հազնին քրտական տարազ : Ճակատող երիտասարդութիւն
մը՝ մեծ մասով ջորեպաններ : Փոխազրական ճանուպարհներուն վրայ՝ հար-
ւածին դէմ՝ հարուած, կորովի հարուած, հայ Փնտայիներու քաջութենէն
ներշնչուած :

Առանց փառապակի ջորեպաններ, բայց անուանի մարտիկներ :
Այդ զիւղեր կը մնանք Դանիէլիանին տունը . մեր ընտանիքին ծանօթ
են ու յաճախ փոխազարձ հանդիպում ու գործակցութիւն ունեցած ենք ա-
նոնց հետ : Այդ զիւղեր իմացայ, որ Դանիէլիան դորձակից էր եղբայրներուս,
զէնքի փոխազրութեան մէջ : Կապի հաստատում Դուրան-Բարձրուանդակի
և Տիգրէի (Տիարպէջի) մարմիններուն միջև :

Դանիէլիանը ո՛չ միայն տնօրէնն էր Պարզիին վարժարանին եւ գիւղա-
քաղաքի ղեկավարը, այլևս պաշտնի յեղափոխութեան ազդեցիկ զէմքերէն էր :
Անոր վարժուներն մէջ բացառիկ յարգանք մը կը նշմարէի ինծի հան-
դէպ : Ձէի հասկնար պատճառը, ու կը վերադրէի մեր ընտանեկան կապին :
Բայց երբ հիւրերը դացին ու մինակ մնացինք իրենց ընդունարանին մէջ,
դարձաւ ինծի եւ ըսաւ .

— Դուրան-Բարձրուանդակէն պրութիւն ունիմ . Սահակ վարժապետը
գրած է, որ դուն այս կողմերը պիտի անցնիս : Պատուիրած են, որ ամէն օ-
ժանդակութիւն ցոյց տանք, որպէսզի կազմակերպչական ջու աշխատանքնե-
րը արդիւնաւորուին :

Ինծի համար բոլորովին անպասելի էր այս յանձնարարութիւնը : Հոն,
Մուշի մէջ, մենք՝ պատանիներս, ամէն աշխատանք կը կատարէինք, ու այդ
հոգեկան փառք մըն էր մեզի համար : Պաշտօնի պաղափար չունէինք : Հիմա,
պարտաւորութեան պաղափարը ճամբայ կ'ելլէր էութեանս մէջ :

Համեստօրէն պատասխանեցի .

— Ի՛նչ որ պաշտնի է եւ անհրաժեշտ, պիտի կատարեմ : Անձնագոհու-
թեան երդումը եւ մեր շրջապատին դաժան պայմանները կը ստիպեն, որ մեր
կարելին ընենք :

Այդ վայրկեանին, միտքս եկաւ Սահակ վարժապետին խօսքը .

— Դուն բանալ մտար եւ ելար : Դուն գործիչ պիտի ըլլաս, տարիքը
նշանակութիւն չունի, ուսում ունիս եւ վեց տարիներու րնթացքին մեր ա-
րիւնդս յեղափոխութիւնը տեսար եւ պատանիի քայլերդ անոր հետ շարժե-
ցան : Հրայրի համբոյրը եւ մաղթանքը մտքէդ մի՛ հաներ . . .

Այս վերջիչումը զիս դրաւ պատասխանատու կեանքի մը ուղիներուն
վրայ :

Շարունակէ վերելքը, սրբան ուժերը ներեն :

Միաքիս ծալքերուն կրկնուած ներքին թելադրանքը :

Մէկ զիւղերուան հանդիպում եւ զրոյց, որ տարիներու անցուզարձի մը
ծանրութիւնն ու արժէքը ունէր :

Առաւօտուն, կարաւանին շարժելու պահուն, ես ձիուս ասնձը բռնած՝
մեկնումի կը սպասեմ : Եղբայրս եւ Դանիէլիան վարժապետը լուրջ խօսակ-
ցութեան մը բռնուած՝ կը մօտենան իրենց ջորիներուն :

— Ես ալ ձեզի հետ պիտի գամ Տիարպէջի եւ քեզ հետս առած՝ պիտի
դառնանք Պարզին, մեր դպրոցը ուսուցիչ պիտի ըլլաս . . .

Եղբայրս լուռ աչքերուս կը նայի :

— Տեսնենք, — կ'ըսեմ մտածկոտ :

Կարաւանը կը շարժի: Ձանդակները կը Հնչեն: Գետինը կը թնդայ: Ձիերու խրիինջը եւ ջորեկաններու կանչերը մթնուրարը փոթորկած են:

Այս ալ ճանապարհներու երեւոյթներէն մէկն է: Ամէն ձայնի մէջ խորհուրդ մը կոչ, բայց կը մնայ անյտա եւ աղմուկին հետ կը կորուսի բնութեան անսահման տարածքին: Որհուրդը կը մնայ կծկուած սրտերուն մէջ: Ծանապարհի փոփոխական անտարանները մտրդու հետաքրքրական ակնարկին էրկտրական ուժ մը կը փոխանցեն: Մենք կը տեսնենք, կ'ազդուինք ու կ'անցնինք:

Անցի՛ր մինակ: Անցի՛ր խուռներո՞մ բազմութեամբ: Անցի՛ր ծանր բեռան ծանրութեան տակ կքած: Ներքին ապրումն ու տեսածիդ խորհուրդը կը մնայ թաղուած հսկիւղ ծալքերուն, իսկ զբոսերեւոյթը կը կորուսի բնութեան սնհուն տարածքին:

Այնպէս կը շարժինք: Աղմուկը միշտ կայ: Մարդ մը կը տեսնեմ, որ ծունկի եկած է իր եզան ոտքերուն քով, ու անոր կոտորած ոտքը առած է ձեռքերուն մէջ՝ արցունքը աչքերուն: Արագ շարժող կարաւանը իր ճամբան կը կտրէ պարտէզի մը եզերքէն: Ձիուն վրայէն ամէն երեւոյթ ուշադրութիւնս կը գրաւէ: Ջորեկաններէն մէկը սիրոյ երգ մը կը Հնչեցնէ, թրթուսն ձայնով: Մտերուն տերեւները կարծես ձայն բռնած՝ կը շնչակնան:

Ջորեկանին երգին արտաքին երեւոյթը ոմանց մէջ մաղթանքի տպաւորութիւն մը կրնար առաջացնել: Բայց այդ սիրտ յուզող երգին թրթուսները ցոյց կու տային ջորեկանին ներաշխարհին փոթորկումը:

Ճամբան կտրենք անցնինք: Այդ սպրումները թողունք նոյն զգացումներով լեցուն սրտերուն:



Հորիզոնը կը փոխուի: Դաշտին տարածքը վերջացած է: Մեր զիմաց լեռնաշխարհ մը կը բարձրանայ: Բայց լեռան չի նմանիր այս բարձունքը: Ինքնայատուկ կերպարանքով այս տեսարանը մեծ հետաքրքրութիւն ստեղծեց մէջս: Նայուածքս լարուած է: Եղբայրս մօակցաւ:

— Այս կը տեսնե՞ս, Տիգրանակերան է՝ իր պարիսպներով:

... Ահա բոլորովին նոր հորիզոն մը:

Ճամբորդին նոր աշխարհները շատ են:

Հորիզոնէ հորիզոն՝ տեսարաններն ու գոյները այլազան: Մթնուրարն ու մարդիկ՝ տարբեր: Այս տարբերութիւնը շատ աւելի լեշտուած է լեռնական պատանիի մը նայուածքին:

Ես այս ապրումին մէջն եմ, կրք մայր Տիգրիսի յորդառատ եւ ծաւալուն հոսանքը կը կտրենք ու կ'անցնինք նաւարկելով:

Նաւերը մեր ձիերն ու ջորիներն են, որոնք մեզ կռնակին առած՝ կը Հանեն զիմացի ափը, մինչ ապրտնքները Հին լաստի մը վրայ կը դիպենք, ու նաւարկողները կը տանին գանոնք ափ:

Վերելքը երկար է դէպի քաղաքի պարիսպները: Ժայռէ ժայռ կոփած քարէ աստիճաններէն կ'ելլենք: Ժայռերու արոփիւնները իրար զրկող արձագանգներու շղթայի մը մէջ ծուլաւած են դէպի մեծագիւր պարիսպները, դէպի ցցուն ժայռերը: Որոտումի տպաւորութիւն կ'առնեմ: Բնութեան այդ անորակելի ձայները անդունդ կ'իջնեն եւ Տիգրիսի ալիքներուն մէջ կը Հան-

դարտին: Իսկ դէպի բարձունքները Հնչող արձուագանդները, առանց թելի՝ հե-
ռաձայնի լուրերը կու տան քաղաքի առեւտրականներուն:

— Նոր կարաւան մը կը հասնի, առեւտրականներ, արթուն եղէք...

Արդէն պարիսպներուն տակն ենք ու գայն կ'եղերենք՝ արեւմտեան մեծ
դրան հասնելու համար:

Բարձրագիւր հսկայ պարիսպները չըջապատած են ամբողջ քաղաքը:
Քայքայուած կամ կտրատուած որեւէ անկիւն չունի: Մեծազանգուած քա-
րերը տաշուած ու իրար զրկած են, անթերի կառոյց մը ցուցադրելով:

Պատմութեան գրքերէն գիտէի Ակրոփոլի ու Հռոմի կառոյցներուն մա-
սին: Նկարներն այլ տեսած էի: Թողթէ տպաւորութիւն: Իսկ այժմ, ու հըս-
կայ կառոյցին առջեւ՝ հիացած եմ մարդկային անհուն կարողութեան:

Ու ճամարտութիւնը այն է, որ մեր Տիգրան Մեծէն ետք, Հռոմի տի-
րապետութիւնը հասաւ այդ վերապայ բարձունքին ու նոր Տիգրանակերտ
մը կառուցեց (Մուֆարդին) քայքայուած Տիգրանակերտին տեղը գրաւելով:
արարական տիրապետութիւնը քաղաքը անուանեց Տիրապէշեր...

Անցէր ու կեանքի անհաշիւ փոխակերպութիւններ...

Որքա՞ն ողբերգութիւններ, որքա՞ն յաղթական հպարտանքներ անցած
են այս պարիսպներուն առջեւէն:

Որքա՞ն երջանկութիւն եւ որքա՞ն դժբախտութիւն աղբած են այս քա-
ղաքն ու իր քաղաքացիները:

Գուժարումը կը թողում պատմարանին:

**

Արդէն քաղաքն ենք եւ տեղաւորուած մեծահարուստ բարեկամի մը
տան մէջ: Մետաքսի վաճառական: Նաճար Թիււարեան — ինքնայաատկ ա-
նուն:

Մետաքս արտադրող եղբայրս գրկարաց կ'ընդունուի մեծ վաճառա-
կանէն: Իսկ ես եւ Գոնիկիւնի հիւրն ենք այս երկուքին, օղիի սեղանին դուր-
սը, ընդարձակ բակի ջրաւազանին առջեւ:

Ամէն տուն ջրաւազան ունի, տաշուած քարերով շինուած, պարիսպ-
ներու տաշուած քարերուն տեսքը անվթար պահելու համար:

Վաղեմի քաղաքի կարեւոր վայրերը կատարած քանի մը օրերու պտոյ-
տըս դիս համոզեց, որ անիկա յամառօրէն ճիշդ թափած է պահելու թէ՛
հոսմական եւ թէ՛ Տիգրան մեծեան ճարտարապետական կերպարը եւ իր
կեանքի թռչունը՝ այդ հունով առաջ մղած է:

Միջազգային քաղաք մը: Հայն ու քիւրտը, թուրքն ու հրեան, շէքեզն
ու ասորին գրաւած են անոր թաղերը: Իսկ շուկան բաց ու բուռն է, ուրկէ
ներս տեղաւորուած են բոլոր նահանգներու ներկայացուցիչները, Պոլսու եւ
Պաղատու, Դամասկոս եւ Պէլլոսը, Կիլիկիան ու Եգիպտոսը մէջը առած:

Պուսներամ կարաւաններու ելքն ու մուտքը: Մարտուն, զործօն կեանք
մը: Ազգերու եւ ցեղախումբերու անցքն ու իրարանցումը մարդկային փո-
թորկալի լինի մը արտաքին պատկերին կը վերածեն այս քաղաքը: Ու զար-
մանալին այն է, որ կարգն ու կանոնը կը պահուին անվթար:

Առեւտրական եւ շինարարական տիրապետող տարրը հայն է: Քաղա-
քին զիմազիծը հայուն կը պատկանի, հակառակ թուրք կառավարութեան
տիրապետութեան, որ կը դրսեւորուի նահանգապետով եւ բանակով, սասի-
կաններով ու... բանտով:

Շուկայի տիրապետող լեզուն քրեերկնն է: Քաղերու ու ճանապարհաներու վրայ՝ հայերէնը, որ կը լսուի ամէն կողմէ:

Ահա շատ ինքնայատուկ քաղաք մը, որ ուշադրութիւնը զրաւեց խորագիտ:

Մասնացի հորտրաց հորիզոններու անակնկալներուն մասին: Ճամբուս վրայ կրեի շատ քաղաքներ պիտի տեսնեմ:

Հետագային, երբ աշխարհէ աշխարհ հորիզոններ կտրեցի եւ անցայ, հաստատեցի, թէ այս քաղաքին ինքնայատուկութիւնը բացառիկ է: Նմանողութիւններ տեսայ Հոսոմի եւ Աթէնքի մէջ, նոյնիսկ շատ մեծազիր: Ժամանակը Հոսոմի ու Աթէնքի կերտուածքները հարուածած էր, խորտակուած մասերը շատ էին: Իսկ Տիգրանակերտի կառույցը մնացած էր անվթար:

Ու Հոգիի մէջ փոթորիտն ապրում մը ունեցայ: Բուն Տիգրանակերտը շատ քայքայուած էր: Մեր Տիգրանակերտը, որ ժամանակի հայութեան հզօրութիւնը վեր կարկառած էր, հիմա Ֆարդին պիղաքաղաքին աւերակները կը նկատուէր:

Առաջին նուութեան կամ մեծութեան տպաւորութիւնը մնալուն է: Թե՛րեւս այդ ներքին ապրումն է, որ զիս մղեց Տիգրապէթիբին նուիրել այս քանի մը տողերը: Մինչդեռ երկրէ երկիր, մայրաքաղաքէ մայրաքաղաք պիտի անցնեմ. թերեւս քանի մը տող յատկացնեմ այդ բոլորին:

Ճամբորդի պարզ յիշատակարան:

Յաջորդ օրը դարձաւ գործի օր մը: Իւրաքանչիւրը գտած էր իր օւղին, դադար ունեցող քաղաք մը չէր, գործի կեդրոն մը, ուր խուսերամ բաղձութիւնները իրար կը հրմշտիէին՝ իրենց գործին վերջակէտը դտնելու: Եւ որովհետեւ կեանքը վերջակէտ մը չունի, յաջորդ օրերուն նոյն շարժումին ու անպարանքներուն ականատես պիտի ըլլայի:

Վերջապէս ինքնամոտոմեցայ: Ուզեցի գտնել իմ ճանապարհը: Նոր անդրադարձայ, որ Դանիէլեանն ալ միշտ հետս էր: Քանիցս այցելած էր այս քաղաքը եւ պիտէր, թէ ինչ կ'ընէր: Ուրեմն, մենք ալ բռնեցինք մեր ճամբան:

Ուսում, ուսուցիչ: Պացինք դպրոցները, անցանք Հայոց Առաջնորդարան: Նոյնքան հետաքրքրական իրողութիւններու առջև դտնուեցայ, ինչպէս տպաւորուած էի պարիսպներու հակայ կտուցներուն ճշման տակ:

Միջազգային կը ստեղծէ իր իրականութիւնը:

Սուրբ կիրակոսի մեծ թագին դպրոցը ունէր հազար երկու հարիւր աշակերտ-աշակերտուհի: Սուրբ Սարգիսի թաղը՝ երեք հարիւր յիսուն:

Աշակերտները արդէն զբաւած էին այս երկու մեծ եկղեցիներուն լայնահիտ շրջափակերը, մտնէրու եւ աղջկանց դպրոցները առանձին շրջագիծերու մէջ առնուած էին, բայց մէկ տնօրէնի իրաւասութեան ենթակայ:

Ուրախութեամբ դիտեցի աշակերտական այս հաւաքականութիւնը: Երէկուտն իմ կեանքի շարունակութիւնը կը տեսնէի հնադարեան այս քաղաքին մէջ:

Այդ քանի մը օրերուն հետաքրքրական ուշադրութիւն մը դրացի իմ շուրջը: Նորահաս մտաւորական մը կը տեսնէին մէջս, ու նաեւ՝ մետաքսի մեծ վաճառականի մը եղբայրը, որ աչքը յառած էր Պէյրութին՝ Ամերիկեան Համալսարան մտնելու, մինչդեռ իրենք ուսուցիչի պէտք ունէին:

Այդ օրերուն վճճի պէս բան մը նշմարեցի Դանիէլեանին եւ Փափագեանին միջև: Փափագեանը Սուրբ Սարգիս թաղի տնօրէնն էր, Դանիէլեան կ'ուզէր զիս հին Տիգրանակերտ տեսնել եւ իր կառավարած դպրոցի հայերէնի

ուսուցիչ մը ունենալ: Իսկ Փափազեան կը պնդէր իր վարած զպրօցի հայե-
րէնին մակարդակը բարձրացնել:

Շուարած՝ կը նայէի այս երկու տնօրէններու զէմքերուն:

— Դուք Գալուստ Անդրէասեանի եւ Մշոյ Գեղամի աշակերտը եղած
էք, անոնց ոգին մեր աշակերտներուն պիտի փոխանցէք, — Փափազեանն էր
պնդողը, եւ Դանիէլեանը տեղի տուաւ:

Եղբայրս համաձայնեցաւ, որ մնամ Տիրապէջքի: Գրպանս ջսան հըն-
չուն սակի գրաւ, ու ըսաւ.

— Մեր տան անունը բարձր պահէ...

Դպրոցը ինձի պիտի վճարէր ամիսը մէկ սակի, ինչ որ բաւարար էր
մէկ անհատի լաւ ապրուստին:

Ու ես դարձայ ուսուցիչ...

Ուսուցիչ՝ երբ դեռ տասնըեօթ տարեկան էի:

Հայերէնի դասը իմ գերագոյն հանոյճն էր, դաս տալը պարտականու-
թիւն էր: Դասի ընթացքին ներքին ապրումներս հողեկան պատարապի կը
նմանէին:

Դրսերեւոյթով լուրջ ուսուցիչի մը կեցուածքը ունէի, տարիքոտ, աղ-
ղեցիկ ուսուցիչի մը նման: Աչքիս առջեւն էին Գալուստ Անդրէասեան՝ ծան-
րախուհ, եւ Գեղամ Տէր Կարապետեան՝ ազնիւ: Բայց ներաշխարհս կը մնար
փոթորիկուն: Անկարելիին հասնելու ներքին մղումս դադար չունէր:

Ու նաեւ յուզական ապրումները հողիկս խորքէն կը ճամբորդէին:
Ճամբայ կը կտրէին Ռուբէն Որբերեանի հետ, երբ «Գիւղիս փամբան» բա-
նաստեղծութիւնը այդ օրուան դասն էր, արտաքինը դասարանը կ'ապրեցնէր,
իսկ ես մեծ յուզումով մեր դիւղի ճամբաներէն կ'անցնէի հազար ու մէկ ապ-
րումներով:

Դրսերեանի «Տրտունջէ»ը յուզումով կը լեցնէր դասարանը: Գիտէին, կը
զգային հաւասններէն, որ ջրան տարեկան այս հաննարեղ բանաստեղծը «ՄԸՄԸ
բարով, Աստուած եւ արեւ» երբ կը գրէր, կը զգար, թէ պիտի մեռնի: Աշ-
խարհի ճամբաներն ու հորիզոնները հողիկս ծալքերէն կ'ընթանային, ու ես
մտքիս մէջէն կը մերժէի մնաս բարով ըսելու աշխարհին: Ահա ներքին տա-
ռապանք մը, որ չըջապատիս շէի կրնար խօսիլ:

Դաս եւ ապրում: Երկու կեանք՝ պատանի ուսուցչի մը...

Ճամբաներն անփերջ են: Շարժուն կեանքը իր ուղին ունի: Իսկ ես միշտ
նոր հորիզոն մը կը փնտռեմ:

Այս ձգտումիս դադանիքները ստիպուած եմ խոստովանիլ ընթերցո-
ղին, որպէսզի իր ներքին ապրումով ճամբան կարենայ շարունակել ինձի
հետ:

Երեւի ամէն գրիչ շարժող ունեցած է այս դադանիքը:

Մուշէն մեկնած ատեն՝ բաժանորդագրուեցայ «Բիւզանդիս» օրաթեր-
թին: Թերթը կը ստանայի մեր գիւղը: Յետոյ կարգապրեցի, որ Տիրապէջքի,
մեր դպրոցի հասցէին գայ:

Օր մը, 1906ի Նոյեմբերի վերջերուն, երբ դասը վերջացուցած՝ ու-
սուցչանոց դասի, տնօրէնը եւ բոլոր ուսուցիչները հոն գտայ, ու զարմացայ
իրենց ընթացքին: Բոլորին աչքերը յառաժ էին վրաս: Յարգալից, քննական
նայուածքը ու համակրական ժպտոններ զէմքերուն:

— Հրամայեցէք, հրամայեցէք, հկուր լըփս նստէ:

Տնօրէն Փափազեանն էր խօսողը: Ժպտեալ երեսին:

— «Բիւզանդիս»ները եկած են, տեսա՞ր:

— Ոչ, նոր էլայ դասարանէն: Յրուիչը եկա՞ւ արդեօք:
 Գրտէին, որ հետաքրքրութեամբ կը հետեւէի այս օրաթերթին:
 Պաշտօնակիցներուս հետաքրքրութիւնը մտածումս տարաւ. քաղաքա-
 կան դէպքի մը:

— «Բիւզանդիոն» քաղաքական նորութիւնն մը կը հաղորդէ, — ըսի,
 ու նայեցայ անօրէնին դէմքին, որուն ակնարկը սեւեռած կը մնար վրաս:
 — Դուն եկար մեր դպրոցը եւ հայերէն դասերը ձեռքէս առիւր, — ը-
 սաւ լուրջ ու մտահոգ, — իսկ հիմա ալ ձեռքէս առիւր յօդուածապիրի փառ-
 քը, որ մինակս կը վայելէի այս քաղաքին մէջ:

Այս անգամ դէմքը ժպտով եւ քերթութեամբ ողորուած էր:
 — Տես «Բիւզանդիոն»ը: Յօդուածդ առաջին էջի առաջին սիւնակը
 դրուած է... Շատ լաւ է ու մենք բոլորս շատ ուրախ ենք, որ նորահաս ե-
 րիտասարդ դրացի մը ունինք մեր դպրոցին մէջ...

«Բիւզը»: Այս էր վերնագիրը եւ գիւղը մեր դիւղն էր, աչքերուս, նե-
 րաչխորհիս մէջ դարձնուած գունատը նկար մը:

Այս քրուածքը վերջին տարուան շարադրութիւններէս մէկն էր: Գա-
 լուստ Անդրէասեան, որ շատ դուստ էր իր դնահատանքներուն մէջ, դասա-
 րանին մէջ գովեց դրածս եւ աւելցուց.

— Երանի թէ մեր դրուգէաները դիտնային ըլլալ այսքան սեղմ, ու
 պատկերաւից:

Ես ու իմ դասընկերներս զարմացանք այս դիտուն եւ գրագէտ մար-
 դուն գովքէն:

Դասը անցաւ, օրեր ու ամիսներ ալ անցան, ու ես մղուեցայ գրիչ շար-
 ժելու ներքին մղումէն: «Բիւզը» գրիչի «Բիւզանդիոն»ի հասցէին, առանց
 յոյս ունենալու, որ դպրոցական շարադրութիւն մը կրնայ տպուիլ Պոլսոյ
 այս խտտարար թերթին մէջ:

Աւ հիմա թերթը աչքիս առեւ: Երկու ընդարձակ սիւնակներ լեցուած
 են իմ ստորագրութեամբ: Սիրտս յուզումով լեցուեցաւ: Հորիզոն մը գրա-
 ւած էի: Բայց Գալուստ Անդրէասեանի լրջութիւնը տեղաւորուեցաւ մտքիս
 մէջ:

— Գիւղական պարզ նկարագրութիւն մըն է: Ձէի յուսար, որ կը սը-
 պեն: Ուրախ եմ, որ սպած են: Ամէն ծառ իր առաջին պտուղով ուրախ է,
 որքան ալ փոքր ըլլայ այդ պտուղը:

Տնօրէնը գրուածքը գովեց: Ուսուցիչ-ուսուցչուհիներ զիս շնորհու-
 րեցին: Յրուեցանք:

Աւ ես քաշուած իմ անկիւնս, խորունկ ապրումներու մէջ կը թեւածէի:
 Նոր հորիզոն մը գրուած էի, լաջն ու անվերջանալի հորիզոններ կը բացուէին
 իմ հայեացքին: Հողեկան ապրումներու ծաւալում:

Ձկրցայ ճաշել: Կուշա էի...

Կ. ՍԱՍՈՒՆԻ



ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՕՏԱՐԱԿԱՆԻ ՊԷՍ



Հոգին հաւատքի
 Խորհրդատան սրբալոյս սկիհէն
 Համբարնալով
 Այլակերպեց ինքզինք
 Իբրեւ անցորդ օտարական:
 Ու լեռնային յուշամատրան
 Կածաններն ի վար
 Առաւ կանգ
 Բիրաւանգոյց փողոցները քաղաքին:

Իմացութեան մայքերուն
 Դիտեց եռեւեփոզ առօրեան,
 Որուն ցուցափեղկերուն
 Իր էութիւնը յատկանշող
 Զգտաւ ոչ մէկ վաճառանիշ...:

Անցաւ շէներէ,
 Փորձելով վերծանել
 Հոգիներու ոսպնեակներէն արտացոլող
 Այլ ցոյաց աչքերուն
 Տապանափարի մը կուրծքին հանգչած
 Դիմագծային անցելայուշ հազորականութեամբ...:

Ոստաններէ շէնշող
 Բնութագիրն իր գոյութեան՝
 Խոհերու,
 Հանգանակներու մէջ հազար.
 Սոսկ ուրուագիծ մը տարտամ
 Զերթ յուշապատկեր՝

Սահմանեալի եւ յաւիտենութեան
 Սահմանագլխին,
 Հարցականի փշաթելերով բոլորուած՝
 Գտաւ
 Շերտ մը փխրուն հող
 Ի յուշ՝
 Իր էութեան բնաշխարհէն անսահման:

Հայրենագուրի ցեղի
 Ճակատագրո՛վ նոյնացած
 Շերտ մը երաշտ հող՝
 Անդիմագիծ,
 Անդրօշ...:

✱

Այսպէս լինած, վտարանդի
 Հոգին հաւատփի
 Գառնածիծաղ դարձաւ ետ:
 Յենած մատուռի
 Մամոարոյր իսնդադատանքին
 Անցորդի պէս օտարական՝
 Ժամեր, ժամե՛ր արտասուեց...:

ԱՆՀԱՐՄՆԱՅԵԱԼ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ



Յանկերգ մը հին
 Զիս կը ճուլէ պատրանքներուդ յիշատակին.
 Հոգիէս ներս կ'ընձիւղուի
 Ապաշաւ մը ճոր.
 Տուայտանք մը ծարաւի՝
 Անբայասան ակունքիդ կը հակի...:

Յուշ մը ձեռագիր
 Կը մատնէ իմ մէջ անցքը հրեղէն
 Հառաչանքի մը լուռ
 Եւ փայլակումն անշող՝
 Կարօտներուս թափուն հրավառութեան...:

Քայլ մը արձագանգ
 Կը բոցավառէ
 Սպասումիս մումերն անպատրոյգ
 Ու կը հեղու՝
 Հին-հին ցաւի,
 Հին հրճուանքի
 Անաւիշ աղապատանք մը սրտէս...:

Ենթագիտակցութեանս մէջ՝
Դուն,
Մեղեդիացած տրտմութիւն
Անճայնանիշ պոռթկումներու
Նրբերանց խաղ:
Դուն՝

Տպաւորապաշտ դիմաստուեր,

Որուն գիծերէն,

Գոյներէն գոյացող

Անձնունդ իզձերու,
Անմտութեան ասպրումներու
Կը գգամ անդրադարձը իմ մէջ...:
Դուն՝

Ազգամոլային յայտնութիւն
Սերած՝

Փամանակի
Տոհմէն անշառախդ

Ստուերներն՝ կալանաւոր,
Անայլակերպ հայեացքիդ,

Հմայքիդ

Ես կ'ըմբռնչիմեմ՝

Գոյնե՛րը եօթնարփեան:

Անտազաստ օրերուս դէմ՝
Հին-հին ցաւի,
Հին հրնուսմէի
Անհարսնացեա՛լ Մտերմութիւն...:

ՀՐԱՇԱՎԻՔ ՈՒԹԵՐՈՐԴ



Ոչ տաճար,

Ոչ բերդ,

Ոչ խոյակ,

Այլ խորհո՛ւրդն ես Արարչու՛թեան.

Առօրեայի շնչերակներուն

Կեանք մուծող

Մղո՛ւմն ես գորեղ:

Դուն, խոհականութեան

Ոգի անսկիզբ,

Շնորհներու անհորիզոն կախարդանք:

Ոչ յուշ,

Ոչ մասունք,

Ոչ դամբան,

Այլ երկո՛ւնքն ես ծնուցիչ.

Եւ վիճա՛կը գերիբական...:

Կ'առնեն ակունք, քափ ու քեւեր

Դարեր բու մէջ,

Դարեր քեզմով:

Ժամանակի խորութեան մէջ

Դարեր քեզմով՝

Գաղափարի յա՛ղթ գորակոչ...:

Դուն,
 Տագնապոյ միտք,
 Տառապոյ հոգեվիճակ,
 Անկէզ ցաւի եւ հրճուանքի
 Բիւրաբոյժէտ բացայայտում:

Դուն,
 Անհանդարտ էութիւն...:

Ոչ արձան,
 Ոչ քանդակ, Ոչ կիսանդրի,

Այլ իմացո՛ւմ աննաւելի-
 Կը ցաթիս իբրեւ լոյս,
 Աննիւթ՝ իբրեւ սէր
 Կեանքի,
 Բնութեան
 Իրերու մէջ անձեւ,
 Խոհերու անհոլով

Կ'ըլլաս հանճարի
 Փողփողուն փարոս,
 Խոյսցոյ կամար-

Աներկնելի ս՛վ Յղացում
 Հրաշալիք ութերորդ...:

ՅԱԿՈՒՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Բ. Կ Ռ Ա Ն Ե Ա Ն

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Փ Ա Ր Ի Զ

Մէկը գրած է. «Փարիզ իր դիրքը կը պարտի գետի մը, իր գոյավիճակը յեղափոխութեան մը եւ գեղեցկութիւնը բռնակալի մը»:

Բռնակալը Նափուլէոն Երրորդն էր, Ճրանսայի վերջին կայսրը, Վիլթոր Հելկուշի «փոքրիկ Նափուլէոն»ը: Խեղճ զորավար եւ սրտական մարդ, — պատմութեան եւ մարդկային բնութեան հակասական երեւոյթներէն, — ծրագրեց եւ զործադրել տուաւ հիմնական վերակառուցումը մայրաքաղաքին: Արդիւնք՝ հրաշքը, որ է Փարիզը մինչեւ այսօր: Հսկայական այս նըւաճումին մէջ վճռական դեր կատարեց Պարոն (Հ)Օսման, Փարիզի կառավարիչը: Տաղանդի, հզօր երեսակայութեան եւ յղացումի մարդ մը: Անոր օրով է, որ քանդուեցան հին, սալաշատակ փողոցները եւ փոխարինուեցան այսօրուան մեծ «պուլփար»ներով: 250,000 շագանակէնիներ տնկուեցան քաղաքին մէջ, որոնք մինչեւ այսօր կը գեղեցկացնեն զայն: Կառուցանել տրուաւ Փլաս տը լ'Էթուալը, որուն կեդրոնէն կը շառաւիղեն տասներկու պողոտաներ: Օֆիսայի շէնք շէնքը եւ պողոտան, Պուա տը Պոլոններն եւ Պուա տը Վլետանը, եւայլն:

Փարիզը եղակի է, անփոխարինելի, անպարտելի: Ամէն մարդու երազն է զայն տեսնել: Աշխարհի պատմութեան մէջ կատարած է վճռական դեր: Մարդկային մեծ շարժումներու ծննդավայր եւ տարածիչ: Նորութեան, ապրելու արուեստի, որոնումի, հանուշի եւ մեղքի օճախ:

Լոյս Քաղաքը:

Ահա հոս ենք: Ուրիշ՝ սկսիլ: Վեց օր միայն ունինք: Վեց օր՝ դարերու սմբարածը տեսնելու: Այս իրթին, բազմակողմանի, թանձրացեալ, զուարթ իսկ գաղանը: Միայն թանդարանները, կոթողները, մշակոյթը չէ, այլ՝ կեանքի արուեստը, ապրելու հանգիստը կերպարը, որ իրեն միայն յատուկ է:

Պայուսակները կը թողունք պանդոկի մեր սենեակը եւ դուրս կը նետւնք: Փլաս տէ՛ ֆերամիտ ենք: Ահա Լուվրը, Քուիլլըրի պարտէզը: Կը քալենք, կը լսենք այն լիզուն, զոր փոքր տարիքէն սորված ենք ազգային վարժարաններուն մէջ: Գրականութիւնը, որով, մերինէն ետք, սնած ենք: Վիլթթոր Հիւկոյի, Լամարթիւնի, Պօտլէրի լեզուն, արտասանուած իրենց իսկ բերնէն: Երաժշտութիւն մը, կլիմայ մը, ամբողջ աշխարհ մը: Կը քալենք: Փլաս վանտոմ: Հսկայ սիւնը եւ կայսեր արձանը: Բոլորակի հրապարակը: Գրաւտած թնդանոթներ, որոնք պրոնզէ քանդակներու վերածուած են: Օփերայի պողոտան եւ դիմացը հսկայական, տպաւորիչ կառոյցը:

Փարիզ ենք: Կը զգանք, կը գիտակցինք, սպունդի նման կը ծծենք: Տպաւորութիւններ, յուշեր, Փրանսական դրականութենէն իւրացուած աւաններ, տիպեր եւ վայրեր: Կենդանի, իրական կեանքով ապրող:

Կը նստինք Քաֆէ տը լա Փէ, սուրճի լիզի համին հետ, կը զիտենք, կը սուղունք տւելի լրան ու խորունկ գոյութեան մը մէջ: Անցաւոր առօրեան աչքող շապիկի մը պէս կ'իյնայ: Մերկ ենք մարմնով եւ հոգիով, այնպէս՝ ինչպէս սահմանուած էինք: Տարեքն ու տիեզերքը կը դաշին ուղղակի մեր մարմինն ու կ'անցնին անոր մէջէն: Մէկ ենք, մասը տիեզերքին: Կը տրոփենք ու կը դպանք անոր հետ: Արուեստական բաժանումները, կաշկանդումները ինչպէս են: Ազատագրուած ենք: Կը գիտակցինք, որ սիրտ մը ունինք, ուղեղ մը, մարմին մը եւ ներքին բովանդակութիւն մը: Գեղեցկութիւնը մեր մարմինն եւ անհունութիւնն ու արարչութիւնը մեր սպիին, որ ուղեղի եւ սրտի յայտնագործումն է: Ինչքան կարճ եմ ապրեր: Այն բոլոր տարիները օրացոյցին վրայ, անցեր են ամուլ, կաշկանդումի մէջ: Հոգեկան դերութեան, որ մեր ճարտարարուեստականացած եւ արագ դարուն բռնութիւնն է: Այն ժամանակները, երբ ես կը զգայի ամենակալ եւ անմահ: Սկիզբը, հին աշխարհի մէջ, դեռ երիտասարդ: Եգիպտոս: Հայաստանը էութեանս եւ մարմնիս մէջ միշտ ներկայ: Հիմա ժանգը, որ նստած է ու կը կրծէ մեր հոգիները: Պարտադրականութիւնը, համակերպումը, հաշտեցումը մահուան զաղափարին: Աստուածայնութեան փախճանը, նախքան նիւթին տարբարութեամբ: Ինչպէ՞ս կորսնցուցինք մեր հատուցը, ապա՝ անձը: Չկրցանք վերանորոգել մեր երազը: Կառչեցանք արդէն իսկ մեռած տարազներու եւ խորհրդանշաններու, որոնց մէջէն փախած էր ոգին: Չկրցանք մեր տարազները եւ լեզուն ստեղծել: Եստ յարգանք աւանդութեան, անձերու, տիրող կարգերու: Պակսեցաւ բմբուսութիւնը, ուրացումը: Յեղափոխական եղանք մակերեսով միայն, ո՛չ՝ գաղափարով ու գործով: Հեզնանքը կեանքին: Մեր սերունդը ունէր տաղանդը, բմբուս ոգին եւ կարողութիւնը: Զախողեցանք մեր առաքելութեան մէջ: Չթափեցինք ապակիները, շքանկեցինք կուռքերը, համակերպեցանք ի վերջոյ, — ո՞՞նի մը աններելի: Ներքին ազգային ճակատի վրայ եւ դուրսը՝ համաշխարհային: Տնտեսական յեղափոխութիւնը, իր մեքենայով ճզմեց անհատը: Արագութիւնը, թիւը, մեծ քաղաքներու ապականութիւնը բթացուցին մեր զգայարանները եւ թմրեցուցին զգացումն ու միտքը, — մարդ էակին երկու թեւերը, որոնցմով միայն կրնար թռչիլ, ստեղծագործել եւ տիեզերականանալ:

Սէ մինչեւ իսկ հոս, Լոյս Քաղաքին մէջ, պահ մը ձերբազատուած կաշկանդումէն, — հրաշքով մը, — վերագարձած ենք մեր անձին ու կոշումին, — հոս եւս, կը տիրապետեն նոյն պայմանները: Հետքերն ու ազդեցութիւնները պիտի զգանք: Արդի կեանքը, իր հրաշքներով եւ ողիկան օճիկներով: Հակասական, լոյսի եւ խաւարի քառս: Յաւիտենական պայթեարը:

Լուվրը: Իսկա՛նք: Եւ միշտ նոյն անելը: Փամանակը: Երկրորդ այցո պիտի ըլլայ, այս անգամ քիչ մը աւելի երկար: Ամիսներ հազիւ պիտի բաւեն: Դարերու տմբուածը, հանճարներու խտացուցածը, — պահուու, օրբու ընթացքին տեսնել ու թափանցել: Անհնար է, արրտպոծութիւն է: Եւ սակայն ընտրութիւն չունինք: Ով գիտէ մէյ մըն ալ ե՛րբ պիտի վերադառնանք այս վայրերը: Հաւանաբար երբեք: Ուստի՝ յուսահատ կողոպուտ մըն է, կորդել, յափշտակել սրբան կրնաս: Ենթագիտակցականը հրաշալի օրկան մըն է: Կը ստանայ ու կը պահէ աւելին, քան մարդ կրնայ երեսակայել: Աչքը տեսնէ, կը փոխանցէ ու կը գրողմէ աւելին, քան կը կարծենք:

Ահա Մամսթրակէի Յաղթանակը: Վերաւոր, գլուխն ու բազուկները կորնացուցած, թեւերը կիսանջատ... բայց զեղեցկութիւնը հոն է: Օսկար Ուայլս խոր է. — գինիի համը ճաշակելու համար, ամբողջ տակաւը խմելու պէտք չկայ: Կը գրէի, — թերեւս բարերախոտութիւն մըն է, որ արուեստի գործը իր վերջնական, յղուած, կատարեալ հանգրուանին չհասած կը ներկայանայ: Վէնիս աը Միլոն, Միքել Անճելոյի, Տա Վինչիի կիսաւարտ գործերը: Արուեստի գործը պէտք չէ — եւ չի կրնար — վերջնական կայունացման յանգիլ: Պէտք է շարունակուի գիտողին երեսակայութեան եւ պայցումին մէջ: Դիտողը պէտք է հազրողուի զեղեցկութեան, մասնակից դառնայ անոր լրացման: Ապրի գործը միջոցին, ժամանակին եւ սրտերուն մէջ:

Կը բարձրանանք: Իտալական զօլոցէն մաս մը: Ռաֆայէլը եւ ուրիշներ, բայց խնդուումը Տա Վինչիի առջեւ է: Միշտ նոյնն է: Ամէնէն հօր ձեռնարկները ան կ'արձակէ: Իր գրիթէ մատի վրայ հաշուուող գործերուն մեծագոյն հաւաքածոն հոս է: Վեց հատ՝ եթէ շէմ սիւալիք, բացի զձաղբութիւններէն: Աշխարհէ բուր ծագերէն հաւաքուած մարդիկ իրար կը հրմըջտկեն, ժամերով կը յամենան Տա Վինչիներու առջեւ: Երեւոյթը միայն ու միայն անոր յատուկ է: Ահա արուեստագէտ մը, որ վայելած է տիեզերական ճանաչում, առանց ընդմիջումի: Ժամանակներէն եւ անոնց իսկայներէն եւ նախասիրութիւններէն վեր: Ինչպէս Միքել Անճելոն: Վերջերս ձեռք բերի Տա Վինչիի ամբողջական գործերը եւ կարդայի իր գրուածքներէն: Անօրինակ, ապշեցուցիչ, անըմբռնելի է: Մարդկային ցեղի պատմութեան մէջ ոչ մէկ էակ օժտուած է նման բազմակողմանի հանճարով: Ձկայ մշակոյթի մարդ մը, ուր իր հետաքրքրութիւնը թափանցած չլլայ և ուր գիւտ մը, վերլուծում մը, յայտնութիւն մը կատարած չլլայ: Իր ժամանակէն դարեր ետք գալիքը նախատեսած, զաղափարն ու սկզբունքները յոսցած է մեծ գիւտներու: Ըսած է. «... որովհետեւ աչքը նուազ կը մտրիք»: Այդ ամենատես աչքէն ոչինչ վրիպած է: Կը հաւատայ, որ բնական օրէնքներու, անոնց գործելակերպի եւ մարդկայինին միջեւ համանմանութիւն մը կայ, եւ մարդ ո՛րքան խորանայ բնութեան զիտութեան մէջ, այնքան աւելի բարձր վերելքներու պիտի հասնին իր արտայայտութիւնները: Հակասութիւն չի տեսնէր արուեստի եւ գիտութեան միջեւ, այլ՝ կը մտածէ, որ իրար կը լրացնեն: Հաւատքի եւ գիտութեան միջեւ եւս հակասութիւն չի գտնէր: Նկարելը միշտ պէտք է վերադառնայ բնութեան եւ անոր հետ կապը չիզէ: Արուեստագէտը պէտք է շարժի նոյն օրէնքներով. «... նկարիչը պէտք է փոխակերպէ իր միտքը բնութեան մտքին եւ դառնայ մեկնարանողը բնութեան եւ արուեստի միջեւ»:

Մովսէսարա խարոյկի վրայ այրեցաւ Տլորանսի մէջ, 1498ին: Թէեւ նահատակուեցաւ, բայց իր քարոզներն ու դատապարտութիւնները ի դուր շանցան: Յունական պաշտամունքը եւ իտալականացումը մարմնին տնդի

սուբին աւելի ոգեզինացած քրիտոնէութեան մը: Ներքինը, հոգին, բուն քրիտոնէութիւնը: Արուեստը մտաւ նոր հունի մէջ (Րիչարդ Մութէր):

Այս հիմնական դարձակէտին կանգնած էր Լէոնարատ Տա Վինչի: Ինք պիտի պոնէր եւ սահմանէր սկզբունքները, օրէնքները, սարքերը եւ էութիւնը նկարչական արուեստին, որ պիտի տարածուէր Վերածնունդին վրայ եւ աւելի անդին:

Իր հետաքրքրութեան հարկոնք տեղեկական էր: Ձիս զբաղեցնողը նկարչական արուեստն է: Իր որոնումներուն նիւթ դարձած են մարդակազմութիւնը, լոյսը եւ անոր անդրադարձումները, գոյնը, կերպասը, կառուցումը, համեմատութեան եւ հեռանկարի օրէնքները: Զանազանութիւն կ'ընէ ուղղակի եւ երկրորդական ստուերի միջեւ: Գոյները պէտք է պայծառ ըլլան եւ թափանցիկ, ինչպէս թրթուացումներ բերեղ մթնոլորտի մէջ: Կը նկատէ, որ գոյները չեն կ'ընար ենթարկուիլ «տիարտուում»ի (լոյս եւ ստուերի արւեւոտ), այլ պէտք է դիտուին ստուերին արնշարար: Ծերմակ իրի մը ստուերը արեւի եւ օդի մէջ, կը միտի կապուիլ եւ բոյսերու ստուերները երեւոք սեւ չեն, որովհետեւ հոն՝ ուր օդը կը թափանցէ, հոն չի կ'ընար կատարեալ խաւար ըլլալ: Հետեւաբար, ստուերի մթութեան պատճառով, գոյնը չի կորսուիր հոն՝ ուր կ'իյնայ լուսը: Ասիկա իր ամենաթափանց աչքի նշանակալից դիտողութիւններէն մէկն է եւ իր «սֆումաթո» արուեստին էութիւնը:

Դարեր ետք, սպուտապաշտները եւ դագանները (Ֆոլ) պիտի կուտին ու պայթարին նման սկզբունքներու համար:

Կը հաստատէ երեք կարգի հեռանկար (փերսպեկտիւ): Գծի, գոյնի եւ անլրբետի: Եւ յօրինուածքի կանոններ: Խնդիրներ, որոնք պիտի բախի Սեզան, մտա շորս հարիւր տարի ետք:

Տա Վինչիի նիւթը ի վերջոյ մարզն է, մեծ անձանօթը: Անոր ներաշխարհը: Իր նկարները արտաքին այս բարդ կառոյցին ընդմէջէն կը ձգտին իրերու եւ մարդոց ոգեկան էութեան: Մարդկային հոգիի ապրումները եւ անոնց արտայայտութիւնը: Կը շրջի, կը դիտէ, կ'ուսումնասիրէ, կ'ուրուադծէ: Կը հետեւի թշուաններու, բանտեր կ'այցելէ, կախաղան բարձրացողներու հոգեվարքը կը դիտէ:

Վերլուծած է մարդու Փիդիթեական կեանքը ծնունդէն մինչեւ տարրալուծում: «Տար Աստուած, որ կարեմալի նկարագրել մարդու սովորութիւններուն եռզեմանութիւնը, այնպէս՝ ինչպէս նկարագրեցի իր մարմինը»: Ռեզեպալտ էր, կը հաստատար հոգիին, եւ նիւթին մէջ՝ ոգիին, բայց զառանց մարմնի հոգին ո՛չ կրնայ գործել, ո՛չ զգալ»: Արուեստագէտ էր:

Այն բոլոր հիմնական խնդիրները, որ իր դարը — նկարչական արուեստը — կը զիմապրաւէր, լուծեց Լէոնարատ Տա Վինչի:

Իր արուեստին ուժը լոյսին մէջ չէ, այլ ստուերի եւ գոյնի աղբյուրութեան: Կը յիշեմ, տեղ մը կը դրէ, որ լուսագոյն պակը նկարելու, յետ միջօրեան մեղմ լոյսն է, «Սֆումադոն» (ստուացիօրէն՝ ծխոտ): Այսինքն՝ լոյսի եւ ստուերի խառնուրդ օդը, որ կը պարուրէ իրերը, միջոցին մէջ կերտելով ծաւալն ու ձևերը, ծալքերուն մէջ ծփալով, խորացնելով ամէն ինչ, խորհուրդով եւ ներքին կեանքով օժտելով զանոնք: Ստուերը եւ լոյսը գոյն են, որոնք երանգաւորումով եւ առնչութեամբ անհունօրէն կը խորացնեն անլրպետը, որուն մէջ տեղի կ'ունենայ աստուածային կատակերգութիւնը: Միջոցը լեցուած է ոգիներով եւ աստուածներով:

Աւեղծուածային աչքերը եւ ժպիտները: Մոնա Լիզան, Ս. Աննան: Ինքը, իր ինքնանկարը՝ կարծիք կաւիճով: Ժամանակի մէջ յառաջացած եւ ի-

մասացած: Երկար մազեր եւ մորուք, նահանջող ճակատը, եւ թաւ յոնքե-
րու տակ՝ խորունկ, ամենաթափանց աչքերը: Խորհրդաւոր էակը, անծանո-
թը, անհասկնալի հոգին: Հարց ու պատասխանի շքնացող աչքը եւ միտքը:

«Եւ եթէ արտաքին այս անօթը քեզի կը թուի զմայլելիօրէն կառուց-
ւած, յիշէ, որ ոչինչ է՝ բաղդատած հագիլին, որ կ'ապրի այդ կառոյցին մէջ-
որովհետեւ ասիկա, իսկապէս ինչ որ այլ ըլլայ, երկնային բան մըն է»: Ձեռք
եւ բոյանդակութիւնը: Ողին, որ կը թափանցէ եւ կը դրսեւորուի ամէն ինչի
մէջ: Նիւթը եւ ոսկին անբաժանելի, մի: Մեծագոյն մտորանքն է զանոնք
վերացականօրէն զատելը եւ նկատելը իրրեւ անկախ միւտորներ: Արուեստը
ասոր ժխտումն է: Ո՛ւր կը վերջանայ արտաքինը (ձեւը) եւ ո՛ւր կը սկսի բո-
վանդակութիւնը (ուղին): Տա Վինչիի բոլոր որոնումները, թափանցումները
ի վերջոյ կը յանգնեն իր արուեստին, նկարչութեան, զոր կը նկատէր գերա-
զոյն արուեստը:

Անծանօթին վախը եւ թափանցելու տենչը: Այլաբանօրէն, քարայրի
մը առջեւ, կը գոչէ. «Նւ պահ մը հոն մնալէ ետք, երկու զգացում ծնունդ ա-
ռին մէջո, — վախ եւ փափաք: Վախը՝ վտանգաւոր, միլին քարայրին, եւ
փափաքը՝ տեսնելու թէ ի՞նչ սքանչելի բաներ կրնային գոյութիւն ունենալ
ճերար...»:

Մանօթ եմ տպաւորապաշտներուն եւ հետագայ արդիականներուն: Ա-
սոնք ժէօ ար Փոմ եւ Միւզէ ար ՂԱր Մոսէրն են: Այս անգամ, երկար կը
մնամ Փրանսական դպրոցին առջեւ, Լուվրի մէջ: Պրանսան արտադրած է
միջնադարեան զմայլելի երկեր: Այիննոնի նշանաւոր «Փիլեպ»-ն, որուն մա-
սին խօսած եմ զմայլանքով: Նկարչին ինքնութիւնը անծանօթ էր: Կը նկա-
տեմ, որ ճշդած են. Է. Քարդոն: Կառոյցի, զգացումի եւ արտայայտութեան
նուաճում մը: Փրիմիթիւ (նախնական) արուեստը միշտ հմայած է զիս: Մի-
ջոցներու եւ արտայայտութեան ժուժկայութիւնը եւ պարզութիւնը: Զգացու-
մի մաքրութիւնն ու անմեղութիւնը, միամիտ իսկ ըլլալու աստիճան: Հետո-
նկարի, ծառայի, յորհուածքի տեսնում, ի շահ զգացումին: Քիչ առաջ կը
գրէի Տա Վինչիի բարձր արուեստին մասին: Արուեստի հրաշքը, որ ճիշդ Հա-
կառակ մօտեցումով կարելի է հասնել նուաճումի: Հին ժողովուրդներու,
միջնադարեան նախնականներու մէջ մեծ տաղանդներ եղած են: Զիտզոն ոչ
մէկուն տիտի գիջի: Արուեստի մէջ յատկաբնութիւն չկայ, այլ զանազան
հարստացում եւ նոր հանճարներու ինքնատիպ եւ սեփական արտայայտու-
թիւն: Տաղանդը տիեզերական է եւ ժամանակի ընթացքէն անկախ: Եղիպ-
տուկան որմնակարներ եւ արձաններ, Ակրոպոլսոյ թանկարանի արքայիք
արձանները միշտ պիտի պահեն իրենց անանցանելի արժէքը:

Միջնադարէն ետք, Պրանսայի առաջին մեծ նկարիչը կը նկատուի Փու-
սէնը: Երեսուն տարեկանին կը մեկնի Հռոմ եւ այլեւս չի վերադառնաք (բա-
ցի մէկ տարուան ճամբորդութենէն) եւ կը մեռնի հոն: Կու գայ զիւղական
չրջանէ եւ հոգն ու բնութիւնը իր արեան մէջ են: Հռոմէական բնակարանի
մէջ կը գտնէ իր հարազատ միջնադարը: Նկարչացեղ իտալական բնութիւնը
եւ կորուսած աշխարհի մը աւերակները, հետքերը, հեռաւոր կարօտներու
թելադրանքը: Ինչպէս գրականութեան մէջ, գիցարտնականն ու պատմակա-
նը կը կախարդեն գինք: Իր կապը իր բանաստեղծական խանդավառութիւնն
է՝ գինք շրջապատող բնութեան հետ, այլապէս դասական մրն է: Կ'երազէ,
կը փնտռէ աւ կը վերստեղծէ կորուսած աշխարհ մը: Լեռները, դաշտերն ու
լուրերը կը բնակեցնէ անցեալ տիպարներով եւ հեքիաթներով: Մարմինները

յունական արձաններու փլատիւք իտալականացումը ունին: Հուսարահը ընտելեան եւ կարգի հետամուտ: Պէնսիոնին ըսած է. «Պր. Փուսէն ճկարիչ մըն է, որ կ'աշխատի ասիէ»: ցոյց տալով ուղեղը: Այնուամենայնիւ, իր լաւագոյն պատարանները բանաստեղծական թարմութիւն եւ զգայնութիւն մը ունին: Մթին պայծառութիւն մը, որ զոյներով կը ճանաչէ: Մանսթ է Ռաֆայէլոյն եւ Թիցիանոյն:

Իրեն կրտսեր ժամանակիցը զիտ աւելի կը հետաքրքրէ: Քլոտ Լորէն առաջին մեծ բնանկարիչներէն է: Թըրնըրէն, տղաւորապաշտներէն շատ առաջ, մեծ լուսապաշտ մըն է: Արեւը կը կախարդէ զինք: Արեւը կ'ողողէ երկրադուռը եւ իր ճառագայթումին մէջ կ'ողողոյն իրերն ու բնութիւնը, ձեւերն ու զիծերը կը հալին, ծաւալը կը տարբարւորուի, անընթաց կը լեցուի զոյնի պսպղացումներով եւ ամէն ինչ թրթրացում է այլեւս: Անհունը եւ զայն դիտող մարդկային էակը:

Տարբեր խառնուածք եւ տարբեր նպատակներ: Լը Նէն եղբայրները, ի մասնաւորի Լուին, խոնարհ էակը, երկրին աղը, կը փնտռեն: Եւ հօր իրապաշտութեամբ մը կը նկարեն զանոնք, հպելով ո՛չ միայն իրենց արտաքին անօթին, այլև տրոփող շողիներուն:

Լուսիի առինքնող թեւերէն մէկն է Փրանսական մեծ օրահը: Հսկայ, տղաւորիչ պատասաններ: Տախտէն մինչև Բուրպէ: Յրանսան հպարտ է եւ փառահեղ:

Մինչ այդ:

Անոնք, որ 1789էն առաջ ապրած չեն, երբեք պիտի չգիտնան, թէ որքան քաղցր կրնայ բլլալ կեանքը, կ'ըսէ թայերան:

Արեւ արքան ո՛չ միայն կը տիրապետէր երկրին, այլև կը սահմանէր իր հպատակներուն կեանքը, ապրելու եղանակը, արուեստի ոնը եւ բովանդակութիւնը: «Անտուրիւնը ես եմ»: Ամէն ինչ փառահեղ, ազդու, վեհափառ: Այն չի սիրեր բնակիլ այսքան շքեղութեան մէջ: Մեծ արուեստը չի սիրեր պաճուճանքն ու զարդարուած դիմակը:

Երբ Արեւ Արքան շիջեցաւ, կեանքը կտորեց շղթաները: Զարուած իդէներն ու աղատութեան սէրը յարգեցան: Օրէնքը, կանոնը, սովորութիւնը, պարտադրանքը. — սասանան տարաւ: Ապրիլ, մայիսի կեանքը՝ օրուան կարգափոխը: Խորշանք՝ ուղիղ զիծէ, սուր անկիւններէ, հօր զոյներէ, մեծութենէ, համաշարփութենէ: Իսկական յեղափոխութիւն մըն էր:

Մահուն, լոյսող դոյններ ու գիծեր, նրբութիւն, ձեւի կատարելութիւն, աւելի փոքր շահերով, զողորմիկ եւ զգայնուտ: Պարոքը կը փոխակերպուէր Բոքորոյի:

Պայտաններէն, շքեղ սրահներէն դո՛ւրս, դարձ պէպի բնութիւն: Հովուուհիներն դարձաւ կնոջ տիպարը: Նկարիչները սկսան նկարել դաշտագնացութիւններ, օրօրոցներ, սիրահարներ, սարսուցող մեղկութիւններ: Արկածախնդրութիւն, հեշտանք, սէր, երգ ու պար: Երաժշտութիւնը դարձաւ արուեստներու թագուհին: Ապրիլը՝ գերայոյն նպատակ: Արուեստը իջաւ իր պատուանդանէն եւ խառնուեցաւ առօրեայ յորձանքին: Նկարչութիւն, տրամադրութիւն, յախճապակի, կտակարարութիւն, ոսկերչութիւն, մանրանկարչութիւն, եւ այլն: Արուեստագէտը եւ արհեստաւորը միացան նոյն անձին մէջ, ինչպէս միջնադարուն եւ Արեւելի մէջ: Ամէնօրեայ իրերը դեղարուեստական տարազ հագան: Ծափոնական «փարուան»ներու դիմաց, շքեղ չինական բաժակներէ թէյ խմել, երաժշտութիւն ունկնդրել, բամբակել, սիրա-

բանի, դաշտապետութիւն, ազատ օր, ազատ ըզձանքներ: Ըլլալ ինքզինքդ: Ողճի խայթ շունկեալ: Լիովին ապրիլ, մահուան մասին չմտածել եւ մահէն չվախնալ: Արուեստը ժողովրդականացաւ եւ թեթեւ ոճ մը զգեցաւ: Մահուան վախը միայն կրնայ ներշնչել անմահութեան զգացումը եւ ծնունդ տալ մեծ գործերու: Մեզքի զգացումը անոր զաւակն է:

Բայց Պրանսայի հանդէպ դեհաստութեան եւ հիացումի պարտք մը ունինք: Ստեղծեց ապրելու արուեստը: Եղակի, ինքնատիպ: Ապրիլը, շարժիլը, նիստուկացը, առօրեայ փոխարարելութիւններն ու զօրձանութիւնները հասան արուեստի: Ապրիլը իսկապէս հաճոյք դարձաւ: Ծաշակ, ոճ: Մեր դարուն ճիշդ հակառակը: Կրտսեր արուեստները հասան այնպիսի՛ կատարելութեան, որ տիպար հանդիսացան ուրիշ աղիւրու եւ մնացին անգերազանցելի:

Իրաւունք ունէր Փալերման:

Նկարչական այս փոխակերպութեան գլուխը կեցած էր Անթուան Վադո: Մադուսով Փլաման, արհեստաւորի զաւակ: Զիւանդ եւ այդ պատճառով՝ երկշուտ, առանձնութիւնը սիրող: Գաւառացի մը, որ միշտ հետո մնաց իր ժամանակի ընկերային շփոյ կեանքէն, երազներու մէջ միայն ապրող եւ, հակասականօրէն, իր ժամանակաշրջանի ներկայացուցչական արուեստազէտը: Ինչ որ իրականութեան մէջ չէր կրնար ապրիլ, երեւակայութեան եւ երազին մէջ ապրեցաւ եւ ստեղծեց: Ասկէ իր ուժը, հմայքը, թանասանդղապանութիւնը: Աշխարհ մը, որ երազի նման եկաւ ու անցաւ, որովհետեւ իր արմատները խոր չէին:

Ուժի, մեծութեան փոխարէն՝ ներութիւն եւ վայելչութիւն: Զօրաւոր եւ վայլուն զոյներու փոխարէն՝ զգայուն երանդներու հարստութիւն, կրօնական զգացումի փոխարէն՝ քնարերգական մուրրումներ եւ հաճոյքի պաշտամունք: «Կիսքերայի կղզի» Վադոյի գլուխ-գործոցն է եւ կը խտացնէ իր արուեստը եւ հողին: Անիտիկան, երազային մթնոլորտ մը, երջանիկ էակներ, ամէն ինչ գեղեցիկ, տառապանքի կատարեալ շքոյութիւն: Բովանդակ պատարը կը ճանաչէ գոյնի երանդներով եւ միջոցի լայնութեամբ ու խորութեամբ: Կեանքն ու կղզին ողորդած են երկնային, յաւիտենական ուրախութեամբ մը: Երազ միայն կրնայ ըլլալ: Վադօ, սակայն, իբրեւ նկարիչ, կր տարածուի իր ժամանակէն անդին, դէպի դալիքը: Լոյսը թրթռացնելու, անընթաց խորացնելու, գոյները բեկանելու եւ պոպոզացնելու իր արուեստը եւ համապատասխան հարուածները իր վրձինին, զէնք կը կապեն ապագայ շարժումներու:

Իր նկարչութեան մէջ միայն ապրած, թռչախտէ կը շիջէ երեսունյոթ տարեկան հասակին, Բոքսթոյի մեծ վարպետը:

Շարտէն բոլորովին տարբեր նկարիչ մըն էր, խառնուածքով, ոճով, հետազննած նպատակներով: Փարիզցի մը, որ նոյնպէս չէր մասնակցեր մայրաքաղաքի շքեղ կեանքին: Կը փնտռէ խոնարհները, պարզերը, ժողովուրդը: Իր երանդապնակը կը համապատասխանէր իր նկարած տիպերուն ժութկալութեան: Պրանսայի առաջին անկենդան բնութեան (նաքիւր մարք) վարպետը: Ապա՝ Փլամաններու եւ հոլանտացիներու ուղղութեամբ, առտընին, մտերմիկ ներքին կեանքի եւ սովորական մարդոց նկարիչը, որ անկեղծ էր, կ'ըմբռնէր լոյսի փոխակերպութիւնները եւ հասարակ իրերուն եւ մար-

զոց կու տար մնայուն զբաւշութիւն մը: Մարդ սրտով պէտք է նկարէ, կ'ըսէր:

Բողալիս Քարիէրա առաջին փաստէջիտան է: Իւզաներկը Բոքոքոյի նըկարիչներուն Համար թոնձր էր եւ փնտսեցին աւելի սահուն միջոց մը: Կա թուր Բաստէյով տուաւ ուշագրաւ երկեր: Աւելի ուշ, Տէկան պիտի ոիրէր ու գործածէր փաստէլը յաճախ:

Պուշին Բոքոքոյի եւ իր ժամանակի մեծագոյն նկարիչներէն կը նկատուէր: Բազմադիմանի, արագ, գերարտադրող մը՝ արուեստի բոլոր ճիւղերուն մէջ: Տիրացաւ մեծ հեղինակութեան եւ ազդեցութեան, բայց ինձի Համար, ինչպէս շատերու, միջակ արուեստագէտ մը:

Վաղոյի իսկական շարունակողը Ֆրակոնարն էր: Ոճի եւ թեքնիքի դպալի նմանութիւն: Ֆրակոնար աւելի «մոնտէն», աւելի թեթեւ, բունատեղծական եւ ուրախ: Նոյն անիրական աշխարհը, ուր յաւիտենական գարուն է եւ հաճոյք: Գոյնի, վրձինի, թեքնիքի հարստութիւն եւ ճարտարութիւն:

Փրանսական Յեղափոխութիւն:
Մարդկային պատմութիւնը եւ կեանքը հիմնովին փոխուեցան:
Միապետներու, թագուհիներու եւ արքայական հոմանուններու հետ վերջացաւ նաեւ Բոքոքոյի զմայլելի աշխարհը:
Սրազը յանդեցաւ դժման իրականութեան:
Ռուսոն արդէն երկած էր — Դարձ դէպի բնութիւն:
Ռուսեստը հիմէն նոր պիտի սկսէր:
Հերոսականը, մեծը, բարոյականը: Ապա, պիտի դար Նախդէոնը եւ գերմարդը:

Շարժումին տալիսուողը եւ անփիճելի դեկավարը հանդիսացաւ Ժազ Լուի Տաւիտը: Զարմանալի աւանդութեամբ մը, Փրանսացի նկարիչներու եւրազը կ'ըլլար Հոսմ աչցելէլ: Ոմանք բնու չէին վերագրուար: Այսպէս թէ աշնպէս, մէյ մը, որ Հոսմ մտնէին, կ'իշխային Յաւիտենական քաղաքի կախարդանքին տակ եւ կը դառնային «դասական»: Անցեալի փլատակները, գիցարանութիւնը, դասականութեան իտէալները: Տալիտին աւելի քան Հարազատ եւ նպատակայարմար էին կայսերական Հոսմի տարազները եւ ներշնչումը: Մինչեւ Նախդէոնի անկումը եւ իր աքսորը, տիրապետեց Փրանսական արուեստին: Անկասկած որ վարպետ մըն էր: Դիւզապնական, առնական, միշտ ամուր կարգապահութեան մը ենթակայ, երբեմն՝ պաղ, տեւարանական եւ վարդապետական պարտադրանքի: Նախդէոնի «Թագադրաւթիւն»ը զիս չի խանդավառեր: Իր գիմանկարներուն մէջ կը հասնի ամուր իրապաշտութեան: Տալիտ, սակայն, նէօ-բիստիզմի դեկավարը բլլալէ աւելին էր: Աւերասուն դիտելի կու տայ, որ նոր-դասականները թէեւ լիովին կը հեռուէին դժային եւ անըրպեսային հետանկարի աւանդութեան, բայց զայն կը ստորագրասէին այն բմբունումին, որ կերպարանքները դասական արձաններու արտաքանդակումով պիտի տեղաւորուէին նկարչական մակարդակին վրայ: Եւ այդ մակարդակը կը սահմանափակէին պատով մը կամ շէջք գոյնով մը: Ասիկա հիմնովին կը փոխէր նկարչական արուեստի բմբունումը եւ ճամբայ կը բանար Հետապայ մեծ շարժումներուն: Նկարչական մակարդակը, պատասխի երկ-տարածական միջոցը, բացատրութիւններ են, որոնց շուրջ վէ-

ձեր, տեսութիւններ եւ մեծ շարժումներ տեղի պիտի ունենային: Արնասոն, օրինակ, կը բերէ «Սոկրատի մտքը» նկարը, ուր Տափիտ միջոցի տպատրութիւնը կը ստեղծեն մարմիններու արտաքանդակումով միայն, անջրպետային հեռանկարը սահմանափակելով պատով մը, այս կերպով ճամբայ բանալով զէջի վերացական յղացումը:

Արուեստի շարժումներուն եւ զպրոցներուն ըմբռնումը յարաբերական է, պէտք չէ մոռնալ: Յստակ սահմաններ չկան, որովհետեւ կեանքը մի է եւ միշտ կը հոսի: Երբ արուեստի նոր շարժում մը ժամանակէ ընթացքին կրկնուելով, կը պարպուի բովանդակութենէ եւ կը յանդի շոր, քարացած ակադեմիզմի, տաղանդ մը կը բարձրանայ քանդելու հին աստուածները եւ իր նոր ըմբռնումներն ու արտայայտութեան ձեւերը պարտադրելու: Փոփոխութիւնը, վերանորոգումը կեանքի հիմնական սկզբունքն է:

Իր ժամանակակիցներէն միայն մէկը կը պահէ իր անկախութիւնը եւ սեփական ոճը.— Փրիւտոնը: Բանաստեղծական, զգայապաշտ եւ թաշնայ գոյներու նկարիչը, որոշապէս խտալական ներշնչումով, գարրիճիոյական, որուն կը հիանար:

Կրկնող բարոյախօս է եւ հոեոտր: Աղիտալի՝ դրականութեան, աւելի՛ն. նկարչութեան մէջ:

Հետզհետէ ծագում առնող ոռմանութիւք շարժման կ'ընդդիմանայ ինկրը: Բուռն հակառակութիւն իր եւ Տըլաքրուայի միջեւ: Ինկըր մոլեռանդ դասական է: Աշխարհը կը դիտէ առանց յուզումի, պաղ արամարանութեամբ եւ աչքով: Իրապաշտ աչք մը, որ միաժամանակ չի բաւարարուիր իրականութեամբ: Կը ձգտի ձեռի կատարելութեան եւ մաքրութեան: Գիտակցարար կ'անտեսէ մարդակազմական ճշդութիւններ, մերկութիւններուն կը յաջողի փլատախէ ծաւալ տալ. աւելի՛ն. իրականութենէն կը մեկնի իտէալականացումի հասնելու: («Ուտալիսք»): Եւ ամէն իտէալականացում ի վերջոյ վերացականութիւն է: Պօտէլը խանդավառուած կը պաշտպանէ ու կը զովարանէ զինք:

Կը կրօ, աշակերտ Տափիտի, իր վարպետէն կը բնորոշուի յուզումի, խռովքի եւ զգացումի ուժգնութեամբ:

Տափիտ տեսնելով Ժերիքոյի «Կայսերական պառնակազուղի տեղակալութիւն», կը գոչէ. «Ուրկէ՞ կու գայ: Չեմ գտնուար այդ ձեռքը»: Ժերիքոյի երկու ձեռքերն էր եւ, մա'նաւանդ, «Մետաղալի լաստը» հսկայական պատասաւը աւելի քան տպատրիչ են: Արուեստի մէջ ուժը, — արտայայտութեան եւ զգացումի, — միշտ առինքնած է գիս: Ուժ, որ ոչ թէ գիտակից ճիշդ արդիւնք է, այլ կը բխի արուեստի երկի հոգիէն եւ գոյն արտայայտող սարբերէն.— կտորց, մասերու արնշնչութիւնը ամբողջին, գոյներու փոխարարութիւն, ծաւալ, խորութիւն, ոճ եւ անոնց ընդմէջէն արտայայտուող զգացումի թափը:

Տըլաքրուան աւելի մեծ խառնուածք, որ երբեմն կը նետուի խանդավառութեան եւ յուզումի յորձանքներու մէջ, զգացումը կը քանդէ տրամաբանութեան կաշկանդումները եւ կը հասնի գոյնի եւ երանդներու տարօրինակ եւ հարուստ ներդաշնակութիւններու, յղացումի եւ զգացումի յանդուզն նուանումներու: Իր ներքին աշխարհն է, որ կը մղէ զինք: Թոմանթիք մը անկասկած, թէեւ, միաժամանակ, դասական կը կոչէ ինքզինք: Երբ ցու-

ցադրեց «Քիոսի ջարդը», զինք չհասկցողներ նկարը յորջորջեցին «նկարչու-
թեան ջարդը»: Բայց Տըլաքրուան տիրապետեց իր ժամանակին եւ զնահատ-
ւեցաւ: Աինք գնահատողներէն եւ պանծացնողներէն էր Պօտլէր: Յրանսան
Տըլաքրուան կը դասէ իր մեծագոյն նկարչներուն կարգին:

Գորոյի մասին կ'ուզեմ դրել ազգային: Լուվրը չձգած՝ պիտի ուզէի
ծանրանալ Գուրպէի վրայ:

Գուրպէն կը ներկայացնէ փոխանցական շրջանը: Ուժեղ անհոտակա-
նութիւն, որ պիտի յեղաշրջէր նկարչական արուեստը: Իր ետին՝ դասական
աշխարհը, իրեն ժամանակակից՝ միլլապաշտ հզօր եւ վարակիչ շարժումը,
Գուրպէն ընդդիմացաւ աւանդութեան դէմ եւ ըստաւ ճամբան զէպի արդիա-
կան ժամանակները: Նկատի ունեցէք, որ Մանէն՝ իր կրտսերը տարիքով,
հիմնադիրներէն էր տպաւորապաշտութեան: Իր բացած դուռնէն առաջին
անցնողը եղաւ:

1855ի Փարիզի ցուցահանդեսին էնկըը եւ Տըլաքրուան փայլուն կեր-
պով ներկայացուած էին: Գուրպէ՝ մերժուած: Ըմրոստ արուեստագէտը
ցուցահանդէսի զբոսն զիմաց կանգնեց փայտաշէն ծածք մը եւ կազմակերպեց
իր սեփական ցուցահանդէսը, որուն ճակտին դրոշմեց — «Իրապաշտութիւն»
եւ իր հանգանակը: Գուրպէ կը դգար, որ միլլապաշտ շարժումը իրականու-
թեան փախչելու փորձ մըն էր: Ինք կը հաւատար, որ արուեստագէտը պէտք
է հետեւէր իր իսկ փորձառութեան: «Ես չեմ կրնար հրեշտակ մը նկարել,
պղտլիեմեւ երբեք հրեշտակ մը տեսած չեմ»:

Իր ցուցահանդէսին գլխաւոր ւործը «Աշխատանց»՝ աշխարհակամ
ամփոփումը կ'եմսնիւ եօթը տարիներուն, իրիւտ արուեստագէտս հակայ նը-
կարն էր: Քննադատութիւն, ազմուկ, թեր եւ զէմ բացագանչութիւններ:
Փակտըծի մէջ գիտել տամ, որ Պրանսան, այսինքն՝ Փարիզը, ամէնէն աւելի
կը հետաքրքրուէր դեղարուեստական եւ մտաւորական շարժումներով եւ ան-
հատ արուեստագէտներով, քան որեւէ այլ միջավայր: Շարունակ գաղափար-
ներու, ոճերու եւ անհատականութիւններու ընդհարում, որ հետաքրքրու-
թիւնէ կը բխէր: Թերեւս այս քննադատական կեցուածքը եւ եռուզեռին խառ-
նըին է, որ Փարիզը դարձուց մեծ շարժումներու ոճախ:

Գուրպէ իր այս երկով, — ինչպէս նախորդ «Թազում»՝ Օրնանի մէջ՝
պատաստով, — կը ժխտէր ամբողջ անցեալը, ընդունում կանոնները, հաս-
կացողութիւնները: «Աշխատանց»ը բուռն եւ հակադիր մէճերու տեղի աը-
ւաւ: Անհասկնալի էին կատոյցը, յղացումը, միտք բանին: Դժուար էր հաս-
կընալ, թէ հեղինակը խիստ լրջութիւն, թէ հեզանք կ'արտայայտէր: Նը-
կարը կառուցողական ոչ մէկ կարգապահութեան կը միտի: Կերպարանքները
շարուած են ջով քովի, ուղղահայեաց թուրբը, հաղի քանի մը շեղումներ,
կարծես հաւաքում են լուսանկարուելու: Ատկա երեւութական է անշուշտ:
Նկարիչը ունի որոշ մտասեւեռում: Որոշակի մէջ կը գործածէ «այլարանա-
կան» բառը, թերեւս կ'ուզէ ըսել «խորհրդանշական»: Ձախին՝ իր միջավայրի
եւ շրջանի խոնարհ, ամէնօրեայ էակները: Ալլին՝ իր ժամանակաշրջանի ծա-
նօթ մտաւորական եւ արուեստագէտներ: Պատաստին ծայրը, պիքք կարդա-
ցողը ոչ ուրիշն է, քան Պօտլէր, նկարչին բարեկամը եւ համակիրը: Մէջ-
տեղը հակայ պատաստ մը, Գուրպէն նստած կը նկարէ, ետին կեցած է մերկ
կին մը, որուն ձեռքէն կ'իջնայ սպիտակ զգեստը: Ալլի եւ ձախի խմբակները
կը ձգտին զէպի կեդրոնը, որ կը շեշտուէ նաեւ զգալի լուսաւորումով: Աը-
ւեստագէտը, իր երկը եւ «մոտէլ»ը կամ պարզապէս կիծը: Գուրպէ կարծես
մէկ մտահողութիւն ունի — իրականութիւնը, այնպէս՝ ինչպէս ինք կը տես-

նէ : Անարուեստ , բիրտ , աւանց ուսմանթիգժի : Տպաւորիչ ու ցնցող , նկարիչ է սյարգապէս : Ըսուած է , որ իր նկարները կը տառապին զգացումի եւ ներքին խորութեան պոսիսակ , ինչպէս բուսած է Վերասքէզի մասին : Ճիշդ անոր հատար , որ կը խուսափէին երկուքն ալ նկարչութեան շխառնել զրականութիւն , փիլիսոփայութիւն , հոգեբանութիւն , եւայլն : Գրականութիւնը վերածել զեզարուեստական իրականութեան :

Գուերպէն ինք իրազործած է նկարչական գրեթէ բոլոր զպրոցները , իր կարգ մը մերկերը ակադեմիգժի իսկ կը հասնին : Իր ուժը կամ իր նուանումը իրապաշտութեան մէջ էր , որուն տառնորդը հանդիսացաւ : շուրի ակը՝ էլոս անի (մօտէն նկարուած) մըն է : Լուսանկարչութեան զարգացումը ազգակ մը կրնայ ըլլալ : Ամբողջ նկարը գրեթէ կը ներկայացնէ ժայռը , որուն խոռոչն կը բխի զհտին ջուրը : Չոս , նոր-դասականներուն նման , նկարչական միջոցը հասցուցած է իր նուագադրնին : Աստանափակումը կը միտի վերացականութեան : Փայուլն անճարթ եւ կարծր մակերեսը արտայայտելու համար , կը գործածէ թանձր ներկեր եւ համապատասխան թեքնիք : Առաջին նկարիչն է , որ պատտաւը՝ իր երկ-տարածութեամբ , անոր սահմանափակումը , ներկը՝ որով նկարը կը ծնի անոր մակերեսին վրայ , — նկատեց իբրեւ անկախ , ինքնակեդրոն իրականութիւն (Արնասըն) : Արուեստի երկը , թէ եւ բնութեանէն կը ստանայ իր ներշնչումը , անկախ է անկէ եւ իր ներքին սկզբունքներուն եւ կանոններուն ենթակայ : Երբ կոկէն կարմիր կօլ կը նկարէ , անբնական շէ , որովհետեւ զոյներու իր հետապնդած ներդաշնակութիւնը այդ կը պահանջէ , ինչպէս նաեւ իր զգացումը : Արուեստի գործը արուեստապէտին ենթապիտակցութեան մէջ է նախ իբրեւ քառս , որուն մէջ կը փթթի ստեղծագործութեան տենչը : Մինչեւ իրականութիւն դառնալը կը հասունանայ եւ լըբուսմին կը հասնի զգացական ներքին աշխարհին մէջ : Երբ երկը ծնած է , այլեւս անկախ է բնութենէն եւ արուեստապէտէն : Առանձինն իրականութիւն մըն է եւ պէտք է արժեւորուի իբրեւ այդպիսին :

Ըսուած է , արեւուն տակ ոչ մէկ նորութիւն : Ինչ որ այսօր նոր կը թուի մեզի , ուրիշ տեղ մը , ուրիշ ժամանակի մը , զոյութիւն ունեցած է : Եւ սակայն , նորը երբեք հինին կրկնութիւնը կամ նմանութիւնը չէ , — ստիկա հակառակ է բնաշրջական օրէնքին , — այլ նոյն սկզբունքին կամ զգացումին մէկ նոր վերաստեղծումն է : Նկարչական միջոցի սահմանափակումը նորութեան մը չէր անշուշտ : Փրիմիթիւները իրազործած էին զայն , ինչպէս վերացականութիւնը : Բայց նոր շարժումը , ըստ էութեան եւ ձեւի , տարբեր յղացումի արդիւնք էր : Գուերպէ , իրեն յաջորդող Մանէն եւ միւսները յեղաշրջեցին նկարչական արուեստի ըմբռնումը եւ անոնց հաստատած սկզբունքներուն վրայ բարձրացաւ արդի արուեստին բարդ կառոյցը , իր բազմազմի շարժումներով եւ արուեստապէտներով :

Փէօ տը Փոմի եւ Միւզէ տը լ'Ալը Մոտէրնի մէջ :

(Շար . 3)

Բ . ԿՌԱՆԵԱՆ

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

ԱՐԹԻՒՐ ԱԴԱՄՈՎԻ

«ՓՐՈՓԵՍԵՐ ԹԱՐԱՆ»Ը



Երազի մը վրայ կառուցուած, աւելի ճիշդը՝ երազի մը մղումէն թելադրուած յատկանշական թատերգութիւն մըն է «Փրոփետոր Թարան»ը, որ մաս կը կազմէ Արթիւր Ադամովի զբաղման վաստակին եւ միաժամանակ յատուկ տեղ ունի անհէթէթի թատրոնին զուխ-զործոյններու շարքին:

Արդարեւ, 1951ի առաւօտ մը, Ադամով կ'արթննայ «Եւ խնդրատակութեան հեղինակն եմ» պոռալով: Յաջորդող Երկու օրերը թատերադրին կ'ընծայեն սակղծագործական պոռթկումի եւ տաղնապահար աշխատանքի խրտացեալ պահեր, որոնց ընթացքին ձեւ ու մարմին կ'առնէ «Փրոփետոր Թարան»: Թատերգութեան մէջ կրկնուող «Եւ փրոփետոր Թարանն եմ» նախադասութիւնը յաճախանքն է Ադամովի երազին եւ, հետեւաբար, թատերգութիւնը ինքնին՝ հարազատ մէկ ճիշն է հեղինակի եսին:

Անհէթէթի թատրոնին խտացեալ յատկանշաները յտակօրէն կը ձեւակերպուին Ադամովի այս միարար թատերգութեան մէջ: Հակառակ առնոր, որ «Փրոփետոր Թարան» բաժնուած է Երկու անջատ տեսարաններու, հանդիսատեսին կամ ընթերցողին ուշադրութենէն չի վրիպիր տեսարաններու համանման կառուցը, երբեմն անգամ կրկնուող նոյնութիւնները: Առաջին տեսարանին մէջ սկսուած հարցաքննութիւնը կը շարունակուի Երկրորդին մէջ: Առաջին տեսարանին՝ մարդիկ կը մերժեն շերտը ճանչնալ, երկրորդ տեսարանին՝ անոնք թարան անուեր կու տան անոր, սակայն կ'անդիտանան փրոփետորը: Տակաւին զինք կը շփոթեն ուրիշ անձերու հետ, կը մերժեն, կը հեզնեն, կը կասկածին էր վրայ...:

Այդ բոլորէն անկախ՝ երկու տեսարաններու միջեւ տեղ գտնող տեքստի հազիւ նկատելի փոփոխութիւններն ու չոր ու մերկ նմանողութեան այս պահպանումը խորհրդանշական են իրենց կարգին:

Իրականութեան մէջ, «Փրոֆեսէօր Թարան» թատերգութիւնը մենախօսութիւն մըն է, ա՛յն առումով, որ հոն տեղ գտած զէպօքերը ոչ մէկ առարկայական իմաստ ունին, այլ պարզապէս միջոցներ են՝ զարգացնելու համար տիպարին, այս պարագային միակ ու գլխաւոր հերոսին՝ Քարանին դիմագիծը:

Հարցաքննող ընդհանուր ընկիւղ քննիչը քննիչ մը չէ, որովհետեւ կը մեկնի առանց հարցը լուծելու. աւելի ետքն է, որ կ'իմանանք հարցին լուծումը:

Ուտիկանները աստիկան չեն ու սասիկանութիւն չեն ըներ, որովհետեւ տնտէք եւս կը մեկնին՝ առանց Քարանի անմեղութիւնը կամ ոճիբը հաստատելու:

Քարտէսը ու անոր կցուած հրաւէրը, իրենց կարգին, իրականութիւններ չեն ներկայացներ:

Նամակը անձնական հաղորդակցութիւն յատկանշող կապ մը չէ, այլ հոն արուած են այն բոլոր կարծիքները, որոնցմով Քարան կը սահմանուի ուրիշներու կողմէ: Այս բոլորը, սակայն, պատճառ մը չեն դառնար, որ Քարան զագրի խօսելէ. ան անդադար կը խօսի, ու յաճախ կը խօսի միեւնոյր: Ան կը հերքէ իր ուսերուն վրայ ծանրացող հարցերը, ընդունելու համար զանոնք աւելի ուշ: Կ'ընդգծի ամբաստանութիւններու դէմ եւ սակայն ուրիշ բան չի մնար իրեն, բացի զղջումէն ու խոր եւ յուսախար սթափումէն. «Իմընչ՞ այս բանք ինձի կ'ըսեն այսօր տարիներ ետք, ինչո՞ւ աւելի շատ չըսին: Ինչո՞ւ իրեւիք բոլորը միասին չըսին ինձի: Որովհետեւ ակնբայն է, յստակ է, կրնամ անսխալապէս տեսնել...»:

Թատերգութեան սկիզբէն, Քարան կը փորձէ խաբել ինքզինք եւ ուրիշները՝ փաստելու համար «ակնբայն եւ անսխալապէս տեսնելի» այդ բաներուն հակառակը եւ սակայն չի յաջողիր:

Անհեթեթի թատրոնը կը մերժէ գասական իմաստով տիպարներ եւ տիպարներու անշատ գործունէութիւն: Անոր գլխաւոր տիպարը, թերեւս ճիշդ պիտի ըլլար բնէլ անհեթեթի ամբողջ գրականութեան մէկ ու միակ հերոսը մարդն է, մարդկային ապրումներու սարգոստայնը:

Այդ մարդը Ազամովի կողմէ կը կոչուի Փրոֆեսէօր Քարան, Պէքէթ զայն կ'անուանէ Կոռօ, իսկ իրենեքօ՝ ձաղատ Երզնուհի: Ու փրոֆեսէօրը ոչ մէկ գաստիստոսութիւն կու տայ. Կոռոն կը սպասուի ու չի վար, մինչ ձաղատ Երզնուհին ոչ իսկ երգ մը կ'երգէ:

Ընդհանուր այս հակադրութեան մէջ է ահաւասիկ, որ կը զարգանան անհեթեթի տիպարները, անոնք կը դադրին անհասական ապրումներ ու կացութիւններ խորհրդանշելէ ու կը վերածուին համամարդկային ու համընդհանուր իրականութիւններ պատկերող ու մարդուն տիեզերանման եսին ծաւօքերը պիտոյ տարբերու:

Ճիշդ այս վերջին պատճառով, իւրաքանչիւր անձ, իրմէ բան մը կը տեսնէ անհեթեթի թատրոնին սեւէ մէկ տիպարին մէջ, մինչ նոյն տպաւորութիւնը շունհնար թատերական վերջին այս շարժումը կանխող գրականութիւններու պարագային:

«Փրոֆեսէօր Թարան» թատերգութեան հերոսը՝ Քարան կը փորձէ ստեղծել անձ մը, որ իրմէ գտնուէ եւ որ, սակայն, կ'ուզէ ինք ըլլալ: Ան կը կատարէ ուսման ու գիտութեան ճամբով հեղինակութիւն դարձած տիպարին:

կը համոզէ ինքզինք, որ ինք հոշակաւոր փրոֆեսէօր մըն է ու կը սկսի կապ-
կել իր մտապատկերը եզոզ ալ փրոֆեսէօր մը՝ Մենարը:

Յարան այնքան զօրաւոր ձեւով կ'ազդի իր իսկ ստեղծած սուտը, որ
ի վերջոյ զայն կ'ընդունի իբրեւ բացարձակ ճշմարտութիւն:

Ներքին այս համոզումը, սակայն, կարելի չ'ըլլար իբրեւ իրականու-
թիւն դրսեւորել, որովհետեւ Յարան մաս կը կազմէ ընկերութեան, իսկ ըն-
կերութիւնը կը սիրէ մերկացնել մարդիկ, կը սիրէ հեզնել ու քննադատել
այդ մերկութիւնները, ու կ'ուզէ զանոնք ծածկել իր սարսափով, միաձեւ ու
անհրապոյր: «Տեղեկագրութիւն մըն է, որ կը հաստատուի, քէ դուք իրիկնա-
մուտն առաջ, մերկ վիճակի մէջ անսկիւալի եկած էք պզտիկները տեսնե-
լով»: Յարան — այս պարագային անհատը — մտառ է, որ ինք չէ մերկա-
ցած, սակայն պզտիկները — այս պարագային ընկերութիւնը — մերկ տե-
սած են զինք: Յարան մտառ է, որ նոթատետրը իրն է ու զայն լեցուցած է
ծայրէ ի ծայր, սակայն ոտովկանները կը պնդեն, որ նոթատետրը կը պատ-
կանի ուրիշին և անիկա կը պարունակէ պարագ էջեր: Յարան համոզուած է,
որ իր դատախօսութիւնները բացառիկ յայտնութիւններ են ու հմայելու չափ
կը պրաւեն ունկնդիրները, մինչ չըջապատը կը տեսնէ, որ Յարան կը զոդ-
նայ ուրիշին մտածումները ու անոր դատախօսութիւններուն ընթացքին սրա-
նը պարագայ կը մնայ:

Այս հանգրուաններուն ընդմէջէն է, որ կը կազմուի Յարանի տիպարին
երկուտութիւնը: Ո՞վ է Յարան. ա՞ն՝ զոր կ'ուզէ ինք ըլլալ, թէ՛ ա՞ն՝ որ կը
կազապարտի ընկերութեան կողմէ:

«Թալամ պարկեշտ եւ համբաւատը եղիմակութիւն մըն է»:

«Թալամ տիրարը ու ստախօս ան մըն է»:

Իրականութեան մէջ, Յարան ո՛չ մէկն է եւ ոչ ալ միւսը, որովհետեւ
այդ երկուքը միաժամանակ կը կրէ իր մէջ:

Այս բոլորէն ետք կարելի՞ է բռնել, որ վերջնական յաղթանակը կը
պատկանի ընկերութեան: Այս կարծիքը ժխտող մեկնաբանութիւն մը նոյն-
քան ի զօրու է: Իսկ ատկկա թատերգութեան անորոշ վախճանն է, այսինքն՝
չէ՞զոք կեցուածք մը հեղինակին կողմէ, որ յատկանշական մէկ սկզբունքն է
պարձեալ անհեթեթի թատրոնին:

Անհեթեթի թատրոնը եզրակացութիւններ չի բանաձեւեր, այլ կը
ստեղծէ անկեքնք կացութիւն մը, առիթ տալով հանդիսատեսին անձնապէս
եզրափակելու զէպօժերու ընթացքը: Այս ձեւով կը ստեղծուի մեկնարանու-
թիւններու անհամար ու զիրար շէղոքացնող խաչաձեւում մը: Այս վերջինը
նպատակն է անհեթեթի գրականութեան:

Սրբակացնելու համար՝ կարելի է նշել, որ եթէ «Փրոֆեսէօր Յարան»
թատերգութիւնը ունի կառոյցի բաժանման երկու մասեր. իմաստային իմա-
ցումով, սակայն, կարելի կ'ըլլայ զայն բաժնել երեք մասերու: Այսպէս՝

առաջին Հարցաքննութեան տեսարան,

երկրորդ Հարցաքննութեան տեսարան եւ

նամակի ընթերցում:

Եւ ինչ որ յատկանշական է այս պարագային, յիշեալ երեք շարունա-
կական մասերը ունին զիրար ջնջելու կոչուած դեր մը, իրարու հակադրուող
բնոյթ մը, — երկրորդ Հարցաքննութեան առան Յարան կ'ընդունի առաջին
պարագային ջրած իր ուրացումները, — ինչ որ վերջին հաշուով կը ստեղծէ
անհեթեթի թատրոնին բուն իսկ էութիւնը — անհեթեթութիւնը, որ սեղ կը

զանէ թատերգութեան աւարտին յայտնուող մոխրագոյն քարտէսի քթանչելի պատկերով :

Հերոսը, որ չէ կրցած ինքզինք բլլալ ու կատաղօրէն կը պայքարի չըլլալու համար ընկերութեան կաղապարած անձը, աշխարհը կը տեսնէ զորչ ու պարապ եւ այդ բոլորին դիմաց կը սկսի մերկանալ :

Մերկանալու այս արարքը կարելի բլլայ թերեւս բացաարել ընկերութեան յաղթանակով : Թարան կը մերկանայ, որովհետեւ մանուկները մերկ տեսած են զինք : Բայց նաեւ՝ Թարան մերկանալով վերջին ճիգ մը կ'ընէ փոքր իրականութիւն մը սպրեւելու, ճշմարտութեան մը կառչելու : Մարդիկ մերկ տեսած են զինք, իսկ ինք վստահ է, որ չէ մերկացած : Այսուհանդերձ, ան կը մերկանայ, գոնէ անգամուտան մը համար, հաստատելու ա՛յն՝ որ մարդիկ կ'ըսեն, եւ կամ մարդոց հաստատել տալու ա՛յն՝ զոր ինք կ'ընէ :

Ընկերութիւն—անհատ բախումը գլխաւոր հանգոյցն է, որ կը ստեղծէ անհեթեթի թատրոնը :

Անհատը կը տառապի, որովհետեւ չի կրնար մաս կազմել ընկերութեան :

Անհատը կը տառապի գարձեայ, որովհետեւ ընկերութիւնը չի լրացներ իր պայմանները, իսկ ոնոր պայմանները չեն լրացներ իր հոգին :

Աւելի՛ն, անհատը կը տառապի, որովհետեւ ընկերութիւնը չի լսեր զինք, չի հասկնար, չի գնահատեր, չի գոհացներ իր սպասումները :

Մարդկային կացութիւններու վերիվայրումներն ու թանձրացեալ հոգեվիճակներու խառնումն է անհեթեթի գրականութիւնը : Հոն ամէն բան կացութիւն է, իսկ տիրապետող կացութիւնը գլխադիր Աշինչն է — ոչնչութիւնը :

Իոնեսքոյի թատրոնը պարապ աթոռներով բեմ մը ունի :

Պէքէթ կերտած է անգլիմայիծ հերոս մը՝ Կոտոն :

Իսկ Ազամով դժած է պարապ քարտէս մը :

Հանդիսատեսը ի՛նքն է, որ պիտի լեցնէ Իոնեսքոյի աթոռները՝ հոն տեղաւորելով իր մաքի հերոսը :

Գարձեայ, հանդիսատեսը ի՛նքն է, որ գէժք պիտի տայ Կոտոյին ու պիտի դունազարդէ Ազամովի դուրչ քարտէսը :

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

ԱՐԹԻԻՐ ԱԴԱՄՈՎ

Փ Ր Ո Յ Ե Ս Է Օ Ր Թ Ա Ր Ա Ն

«ՓՐՈՅԵՍԷՕՐ ԹԱՐԱՆ»ը առաջին անգամ ներկայացուած է
Բոժէ Փլանշոնի խումբին կողմէ, Լիոնի մէջ, 1953ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՓՐՈՅԵՍԷՕՐ ԹԱՐԱՆ	ՄՐԱՄԻՑ ԿՆ ՄԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՁԸ	ԵՐԲՈՐԴ ՊԱՐՈՆԸ
ԱՌԱԿ ԲԱՐՏՈՒՂԱՐԸ	ԶՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ
ՊԱՌԱԿ ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻՆ	ՊԱՆՈՎԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՏՈՒՀԻՆ
ԿՆ ՔՂՔԱԿԻՑ ՄԸ	ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻՎԱՆԸ
ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ	ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻՎԱՆԸ
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ	ՓԱՆՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՈՍՏԻՎԱՆԱՏՈՒՆ ՄԸ

(Բեմին ձայն յառաջամասին մէջ, Քուրթերով ծակուած գրասեղանի մը ետին նստած է *Ընդհանուր Քննիչը*, տարեց մարդ մը՝ ուժեղ կազմուածքով: Հագած է սև վերարկու եւ գծուոր տաքատ մը: Քրասեղանին առջեւ անխռով կանգնած է *Փրոֆեսոր Թարան*՝ շուրջ քառասուն տարեկան մարդ մը, որ ինք եւս սև հագուած է: Անոց աջին, քիչ մը դէպի խորքը՝ կ'երևի *Կրասեր Քարտուղարը*, թույն երիտասարդ մը, որ ծուռ նըս-

տած է եւ կզակը հանգչեցուցած աթռի քիկնամասին: Բեմին ձայն խորքին՝ ամառնային տպածոյ հագուատ մը հագած կին մը՝ *Պառաւ Քարտուղարուհին*, որ Քուրթեր կը ստուգէ, գարակներ կը բանայ, տումեր կը ճննէ: Բեմին աջ խորքը պարտազ է):

ԹԱՐԱՆ (կարճ հռոտչանք մը տրակելով).— *Բայց, յամենայնդէպս, զուք զիտէք անունս : Ես համբաւուոր մարդ եմ, յարգուած եմ : Դուք պէտք է գիտնայիք ասիկա ոեւէ մէկուն չափ, ձեր պաշտօնին քերտմով, կրնամ բռնի, բոլորէ՛ն աւելի լաւ :*

Դուք լաւ դիտէք, թէ այս ամբաստանութիւնը անհիմն է: Ի՞նչ պատճառ ունէի այդ արարքը գործելու: Իմ սովորական պարեմակերպս փաստ է, թէ ես չէի կրնար այս նուաստ վարձուքը ունենալ... Ի վերջոյ, որամարանեցէք զիչ մը, խնդրեմ: Աշխարհի վրայ ո՞վ կը համարձակի հանել իր բոլոր հազուստները այս ցուրտ օդին: (հնդալով) Ես բնաւ փափաք չունիմ հիւանդանալու եւ շարաթներով անկողին մնալու. ծանր աշխատանք ունեցող բոլոր մարդոց պէս՝ ազահութեամբ կը վարուիմ ժամանակիս հետ...:

Ուրեմն խորհեցէք: Կրնա՞ք վստահիլ մանուկներու վկայութեան: Անոնք կ'ըսեն... ինչ որ կը փչէ իրենց խելքը: Հետաքրքրական դառնալու եւ մարդոց ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրելու համար՝ անոնք որեւէ բան կ'ընեն: Դուք պէտք է ճանչնաք մանուկները: Եւ ես կը ճանչնամ գանոնք: Ոչ թէ անոր համար, որ դաս կու տամ անոնց: (հնգրիցիմ հովեր տալով) Ես համալսարանի դասախօս եմ... բայց... (դառնալով դէպի Պառաւ Քարտաղարտիմ, որ կը շարունակէ կարգի դնել իր քուղիքը)... Իմ ջոյրը... Իմ ջոյրս ազլընակ մը ունի: Պատիկ ազլիկ մը, որ կ'ուզէ ամէն դնով լուրջի առնեն զինք: Պէտք է մտիկ ընէք ըսածները: Մտիկ ըրէք զինք: Հակառակ ատոր, ես զինք շատ կը սիրեմ: Կրնամ ըսել, որ բոլոր մանուկները կը սիրեմ: Բայց անոնց ըսածներուն հաւատալու չափ հետեւ երթա՛լ...:

Հանդարտօրէն կը քայլէի լճափին, երբ յանկարծ տեսայ զանոնք: Հոն էին, ինծի բաւական մօտիկ, ու շրջապատեցին զիս... Նոյն պահուն, ամէն կողմէ, ուրիշներ երեւցան: Ամէնքը իմ կողմս փութացին: Այն ատեն սկսայ վազել: Չեմ գիտեր ինչո՞ւ փախուստ տուի... Հաւանարար անոր համար, որ չէի ակնկալեր զիրենք հոն տեսնել:

Վստահ եմ, որ փախայ: Անոնք կրնային ըսած ըլլալ ձեզի, որ ես փախայ եւ իրականութեան մէջ եղածը այդ է: Նայեցէք ինծի. աւսպարանքով հաղուած մարդու մը երեւոյթը ունի՞մ: Եւ ե՞րբ ժամանակ պիտի ունենայի հազուելու:

ՔՆՆԻՉԸ.— Կը ցուցիմ: Բայց ես հոս տեղեկագիր մը ունիմ, որ բնաւ չի համապատասխաներ ձեր ըսածներուն:

ԹԱՐԱՆ.— Անոնք կը վազէին եւ ամէնքը մէկ կը պոռային: (Համադարտօրէն) Կարծէք թելադրուած էին այդպէս ընել:

ՔՆՆԻՉԸ.— Ի՞նչ կը պոռային: ԹԱՐԱՆ (դողալով, ցած ձայնով եւ ցուցամատը պարզելով).— Պիտի տեսնէք, պիտի տեսնէք, բայց պիտի տեսնէք՝ ի՞նչ: Ես ոչ մէկ սխալ դործած եմ եւ կրնամ փաստել ատիկա:

ՔՆՆԻՉԸ.— Մենք կ'ուզենք միայն ճշմարտութիւնը երեւան հանել:

ԹԱՐԱՆ.— Ես փրոֆեսօր Թարանն եմ, եւ հռչակաւոր մարդ եմ: Ես շատ մը դասախօսութիւններ տուած եմ արտասահմանի մէջ: Դեռ վերջերս հրատարակուած էի Պելիքա եւ ունեցայ շլուած յարողութիւն մը... Երկրասարդութիւնը խուսնեցած եկաւ իմ դասախօսութիւններու... Անոնք կուռեցան, որպէսզի իմ ձեռագիրէս էլ մը ձեռք անցրեն...:

ՔՆՆԻՉԸ (ստի կ'իյլ եւ ձեռքը կը դնէ Փրոֆեսօր Թարանի ուսերուն).— Կապած չունիմ ձեր գտած յարողութեան մասին: Բայց ինզիրը այդ չէ հիմա: (Ձեռքը վեր կ'առնէ: Լռութիւն): Մենք պէտք է յստակացնենք այս ինզիրը՝ ամբողջացնելու համար տեղեկագիրը: (Կանգնած կը մնայ):

ԹԱՐԱՆ.— Տեղեկագիր: Ի՞նչ տեղեկագիր: Բայց եթէ տեղեկագիր մը պատրաստէք, կրնաք լրջօրէն վստասել ինծի... վտանգել ասպարէզս:

ՔՆՆԻՉԸ (դարձեալ նստելով).— Դուք առաջին մարդը չէք, որուն ասպարի բաներ կը պատահին: (Լռութիւն):

Օձիքնիդ պիտի ազատէ՞ տուգանք մը վճարելով, եղած-չեղածը ա՛յդ է: Եթէ կրնաք վճարել, այս դէպքը ոչ մէկ հետեւանք կրնայ ունենալ ձեզի համար:

ԹԱՐԱՆ.— Անշո՛ւշտ կրնամ վճարել: Ես դրամ ունիմ: Կրնամ մուրհակ մը վճարել քեզի, ասոկէ դիւրին բան շըկայ: (Անուր մտորելով գրայանը) Եթէ կ'ուզէք անմիջապէս:

ՔՆՆԻՉԸ (տոբի կ'ելլէ եւ կը բռնէ Փրօֆեսորին քաղաղը).— Ո՛չ, ոչ անմիջապէս: Քեզմէ կը խնդրեմ միայն, որ ստորագրես: (Մատնանշելով էջ մը քուրք սեղանին վրայ): Տեղեկադրութիւն մըն է Պոր կը հաստատէ, թէ դուք իրիկնամուտէն առաջ, մերկ վիճակի մէջ անակնկալի եկած էք՝ պատիկները տեսնելով: (Կրկին կը նստի) Կրնաք աւելցնել, թէ չէ՞ք նկատած, որ կը գիտուէիք:

ԹԱՐԱՆ.— Շատ լաւ գիտեմ, որ հսկողութեան տակ եմ, խտորէն կը հետապնդուիմ, ամէն ոք աչքերը սեւեռած կը պահէ վրաս:

Ինչո՞ւ այդպէս կը նային ինծի: Ես ոչ ոքի կը նայիմ: Ազդարար աչքերս վար կ'անեն: Երբեմն նոյնիսկ գրեթէ կը դողեմ զանոնք: (Առուքիւն): Աչքերս գրեթէ գոցած էի, երբ անոնք հրեցան:

ՔՆՆԻՉԸ.— Քանի՞ հաս էին:

ԹԱՐԱՆ.— Չհամբեցի, ժամանակ չունեցայ: (Քիչ մը կը լսէ) Ինչո՞ւ կ'ուզէք ինծի այդ հարցումը: Ես ձեզի ըսի, թէ ո՛վ եմ: Այդքանը պէտք է բաւարարէ ձեզ... Ձեմ հաւատար, թէ երբեք լսած չէք իմ մասին:

ՔՆՆԻՉԸ (խնդրով).— Կը ցախիմ:

ԹԱՐԱՆ.— Եւ ա՛յդպէս պէտք է զգաք: Պարտաւոր էք գիտնալ, թէ որո՞ւ հետ գործ ունիք: (Ուժգնօրէն) Անգամ մը եւս կ'ըսեմ, ինչպէ՞ս կրնաք վատահիշ մտնուկներու շողակրատութեան: Ի՞նչ փաստ կայ, որ այն աղջիկը, որ եկաւ հոս պատմելու ձեզի այդ բոլորը, իրապէս ներկայ

էր... տեսարանին: Ուրիշ ժանուկներ կրնան պատմած ըլլալ իրեն ատիկա այնպէս՝ ինչպէս յաճախ կ'ընեն, եւ աղջիկը, իր կարգին, փոխեց պատմուածը, այլափոխեց, թերեւս նոյնիսկ առանց անդրադառնալու: (Առաքիւն): Այո, անշո՛ւշտ թէ պատահածը այդ է:

Ասոկէ դատ, խնդրը պարզ է, պարզապէս պէտք է հոս կանչէք ժողովի, որոնք ճանչան զիս: Կըրնամ թուել ձեզի անոնց անունները եւ անոնց դիրքերը: Անոնք կրնան վկայել իմ նկարագրիս եւ... Համարաւի մասին: (Առաքիւն): Հո՛ս բերել տուէք բոլորը, սեւէ մէկը որ կ'ուզէք, սեւէ մէկը եւ դուք պիտի տեսնէք:

(ԹՂԹԱԿԻՑ ՄԸ կը մտնէ, խարտիչաներ կին մը, միջին տարիքով, ոչ սգեղ, ոչ գեղեցիկ, մազերը էտն Քրուիի ձեռով կտրուած: Հագուած է փլիսէ փէշ մը եւ կարմ քիւով պլուզ մը):

ԿԻՆ ԹՂԹԱԿԻՑԸ.— Ձէ՞ք տեսած էրկարահասակ եւ բարեձեւ երիտասարդ մը: Ակնոցը միշտ ձեռքը կը պահէ: Կարգադրած է, որ հոս հանդիպի ինծի...

ԿՐՏԱՄԵՐ ՊԱՇՏՕՆԵԱՆ.— Ոչ, Տիկին, ոչ ոք եկաւ հոս, բացի (մատնանշելով Փրոֆեսոր Թարանը) Փրոֆեսորէն:

(ՓՐՈՖԵՍՈՐ ԹԱՐԱՆ կը սիսի)

ԹԱՐԱՆ (մտնելով Թղթակիցին).— Կարծեմ մենք արդէն հանդիպած ենք... Եթէ չեմ սխալիր, վերջերս թեզ մը հրատարակեցիք... (դառնալով դէպի կրտսեր Քարտուզարը) ...հաւանք ունիք թեզ մը:

ԿԻՆ ԹՂԹԱԿԻՑԸ (առանց տակնուվրայ ըլլալու, քալելով).— Դուք անպայման կը սխալիք: Ես թղթակից մըն եմ: (Կրտսեր Քարտուզարին դառնալով) Որքան տաք կ'ընէ հոս: Ձէ՞ք կրնար քիչ մը պատուհանը բանալ:

ԿՐՏՍԵՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ — Սիրով:
 (Ոտէի կ'ելլէ, քայց ՊԱՌԱԻ
 ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒ ՀԻՆ արդէն
 կանխած է գիմֆ եւ ետեւի պա-
 տուհանը քանալու ճիգ մը կ'ը-
 նէ: Կրտսեր Քարտուգորը նա-
 րէն իր էին դիրքը կը գրաւէ,
 կգալը հանգչեցնելով արտոնի
 թիկնամասին):

ԹԱՐԱՆ (Թղթակիցին) — Թոյլ տուէք,
 որ ներկայացնեմ ինքզինքս:
Կին Թղթակիցի (կոնակը կը դարձնէ
 Թարանին եւ կ'երթայ դէպի Ընդհա-
 նուր Քննիչը, որ դեռ կը գրէ) — Ի-
 բապէս այր մարդիկ երեւակայու-
 թիւն չունին: Երբ կ'ուզեն մտտեղա-
 կնոջ մը, անպայման տեղ մը հան-
 դիպած կ'ըլլան անոր:

(Քննիչը ազնուօրէն կը խըն-
 դայ եւ կը շարունակէ գրել:
 Թղթակիցի կ'երթայ դէպի
 խորքի պատուհանը:
 ԱՌԱՋԻՆ եւ ԵՐԿՐՈՐԻ ՊԱ-
 ՐՈՆՆԵՐԸ կը մտնեն՝ ձմեռ-
 նային վերաբերուեցրու մէջ,
 շատ գրագած երեւոյթով: Ա-
 ՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ ունի կաշիէ
 պայուսակ մը: Անոնք յայտ-
 նապէս կը շարունակեն կէս
 ձգուած խօսակցութիւն մը):

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ (Երկրորդին) — Ըօհ
 քեզի, որ չվստահես անոր:

ԹԱՐԱՆ (կը տատամսի եւ կը մտնեայ
 երկու Պարոններուն) — Շատ ուրախ
 եմ՝ ձեզի հանդիպելուս համար:
Դուք կրնաք ծառայութիւն մը ընել
 ինձի:

(Երկու մարդերը կը նային ի-
 րարու, քիչ մը ետ երթալով.
 անոնք կը կարծեն, թէ Փրո-
 ֆեստօր Թարանը խենթ է):

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ (պաղարիւնու-
 քեամբ) — Պարոն, ես ձեզ չեմ
 ճանչնար:

(ԵՐԿՐՈՐԻ ՊԱՐՈՆԸ ձեռքով
 ճշամ մը կ'ընէ, «ոչ ալ ես»,
 բսկ ուզելով):

ԹԱՐԱՆ — Ի՞նչ, Բայց ես այնքան յաճախ
 տեսած եմ ձեզ իմ գաստիստութիւն-
 ներուս ընթացքին:

ԵՐԿՐՈՐԻ ՊԱՐՈՆԸ — Մենք որեւէ դա-
 ստիստութեան չենք երթար: (Խըն-
 դալով) Մենք քննութիւն տալու տա-
 րիքը անցուցած ենք: (Առաջին Պա-
 րոնին, իր խօսքերուն կարեւորու-
 թիւն տալով): Պիտի ստիպուի յայ-
 տազէրը փոխել:

(ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ կը բռնէ
 երկրորդին բազուկը: Պա-
 նակներու պէս ետ ու առաջ կը
 փախնի):

ԹԱՐԱՆ (հետեւելով անոնց) — Բայց,
 պարոններ, չէք կրնար չձանչնալ
 դեռ, անկարելի է: Ես... Փրոֆե-
 ստօր Թարանն եմ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ (զանդազօրէն, իբր
 քէ կը փորձէ վերլիշել) — Թարա՞ն:
ԵՐԿՐՈՐԻ ՊԱՐՈՆԸ (դիտումնաւոր կեր-
 քով կոնակը կը դարձնէ Թարանին
 եւ կը բռնէ Առաջին Պարոնին բա-
 զուկը) — Ամէն պարագայի, կրնաս
 մտահելի դործակցութեանս:

ԹԱՐԱՆ (կակազելով) — Խնդրեմ, Պա-
 րոններ, ճիշտ մը ըրէք, պզտիկ ճիշտ
 մը: Եւ թերեւս մէկ վայրկեանէն
 պիտի ճշաք (երջանկաբեամբ) օ՞,
 Թարանն է:

ԵՐԿՐՈՐԻ ՊԱՐՈՆԸ (ուները քօքուե-
 լով) — Կը տեսես, թէ գրագած ենք:
 (ՓՐՈՖԵՍՏԵՕՐԸ կը մնայ շփա-
 քահար):

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ (Երկրորդին, անոր
 բազուկը բռնելով) — Ժամանակն է,
 որ դործի անցնինք:
 (Քանի մը փայլ կը յառաջա-
 նան):

ԹԱՐԱՆ (կ'երթայ դէպի Ընդհանուր Քրոն-
 ցիչը, որ դեռ նստած է գրասեղանին
 առջեւ) — Չեմ հասկնար: Որովհե-
 տեւ, ի վերջոյ, ունեցած պատուա-
 նչաններէս ու... դործէս անկախ,
 ունիմ դէմք մը, զոր եթէ անգամ մը
 տեսնես, ա՛լ բնաւ չես մոռնար:

ՔՆՆԻՉԸ — Անշուշտ:

ԹԱՐԱՆ.— Ընդդէմ, որ մինչ այդ ես երկար ճամբորդութիւն մը կատարած էի դէպի արասասւման:

ՔՆՆԻՉԸ.— Գիտե՞մ: Ըամբորդութիւն մը, որ մենք յաջողութիւն ապահովեց ձեռքի:

ԹԱՐԱՆ.— Արտակարգ յաջողութիւն մը: Եւ ես չուտով հոն պէտք է վերադառնամ: (Լռութիւն): Արտասու՜ման, այն խնդիրները, որոնք պիտ կը հետաքրքրեն, շատ աւելի մենք լրջութեամբ կը քննուին հոն: Պէտք է ըսեմ, որ անոնց կը տրուի կարեւորութիւն մը, որուն շատ յաճախ չեն արժանանար այստեղ:

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉԸ շի շարժիր: ՓՐՈՖԵՍՍՐՈՐ ԹԱՐԱՆը երկչոտութեամբ նորէն կը մտնեայ Երկու Պարոններուն: ԿՐՏՍԵՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ, որ նոյն դիրքին վէջ մնացած էր, կը թռի բնագած ըլլալ: ՊԱՌԱԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻՆ զեռ կը շարունակէ բազբերը ստուգել):

ԿԻՆ ԹՂԹԱԿԻՑԸ (կը հետամայ պատուհանէն եւ կ'երթայ Երկու Պարոններուն մոտ) — Բայց ես չճանչցայ ձեզ: Իրապէս կը ցուի՞մ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ.— Մարդոց հանդիպելու ի՞նչ եղանակ:

ԹԱՐԱՆ.— Յաճախ նշմարած եմ...

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ (Առաջին Պարոնին, անգամ մը եւս կոնակը դարձնելով Փրոֆեսէտը թարմին) — Եստուով զործի անցնիլը կարեւոր կը նկատեմ:

(Երկու Պարոնները ետ աւազ կը քալեն):

ԿԻՆ ԹՂԹԱԿԻՑԸ.— Խնդիրը անցեալ օր ինծի խօսած նիւթիդ կը վերաբերի: ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆԸ (խնդալով) — Քեզմէ ոչինչ կրնանք պահել:

(ՄՐԱՄԻՏ ԿԻՆ ՄԸ կը մտնէ, տարեց, սեւ հագուստներ հագած եւ զլսուն ծոպտար գըլթարի վը, ընկերակցութեամբ

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԶՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆՆԵՐՈՒՆ. երկուքն ալ երկարահասակ եւ լաւ հագուած, մոխրագոյնի գարնոց քուստներով):

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ.— Ի՞նչ տեսնեցա՞ւ:

(Առկարկան ձեռքի սեղմում):

ԿԻՆ ԹՂԹԱԿԻՑԸ (կատակելով՝ Երբորդ Պարոնին) — Որքա՞ն փոքր է աշխարհը:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ (դատնալով դէպի Սըրամիտ Տիկինը եւ Զորբայդ Պարոնը եւ ցած ձայնով) — Թղթակից է եւ շատ կ'աշխատի: Կրնաս ամէն տեղ հանդիպիլ իրեն, նոյնիսկ Համայնարանի շրջապատէն ներս:

(Թուրը կը ձեռնարկէ: ՓՐՈՖԵՍՍՐՈՐ ԹԱՐԱՆԸ սկսելու համար կը մտնեայ):

ԶՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ.— Կարգացի ձեր վերջին յոգուածը: Ենթադրութիւններս:

ՄՐԱՄԻՏ ՏԻԿԻՆԸ (Լրջօրէն) — Խօսելով Համայնարաններու մասին... անցեալ շաբաթ դատարանութեան մը ներկայ դատուեցայ, որ մասնաւորապէս հետաքրքրեց զիս: (Յանկարծ նշմարելով Փրոֆեսէտը թարմը) Բայց չեմ երազեր, ա՛ն է... (Փրոֆեսէտը թարմին) Փրոֆեսէտ՛ը, ես քիտ չէի Համարձակեր յուսալ այսքան բարիտ: Հիմա ճի՛շդ ձեր մասին կը խօսէի:

ԹԱՐԱՆ (յուզումէն թաքնվելով) — Եստուրախ եմ...

ՄՐԱՄԻՏ ԿԻՆԸ.— Փրոֆեսէտ՛ը, թոյլ տրուէք ներկայացնել ձեզ իմ բարեկամներուս (մտնանշելով Փրոֆեսէտը թարմը): Փրոֆեսէտը Մենար:

ԹԱՐԱՆ.— (յուսախար) — Ես...

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉԸ կարգի կը դնէ թուղթերը սեղանին վրայ. ստփ կ'ելլէ, կը հագուի վերաբերուծ եւ քեմիք ձայն կողմէն դուրս կ'ելլէ: Կը ՔԸՆԻ, թէ ոչ ոք կը նկատէ անոր հետաքուստը):

ԶՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ (խոնարհեցիմ դէպի Սրամխո Տիկիմը եւ գրեթէ պոռալովա) — *Եկէք, Փրոֆեսէօր Մենարը չէ այս անձը: Բաւական կը նմանի անոր, բայց Փրոֆեսէօր Մենարը շատ աւելի բարձրահասակ է եւ բարեձեւ...*

ԵՐՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ — *Աս ալ իր ակնոցները ձեռքը կը պահէ... Ինչպէ՞ս միւսը: (Խնդալով) Բայց անկախ տակէ...*

ԹԱՐԱՆ (կակազելով) — *Ես... Ես Փրոֆեսէօր Թարանն եմ... Անշուշտ պէտք է... ճանշնաք իմ գործս:*

ՍՐԱՄԻՏ ՏԻԿԻՆԸ — *Թարա՞ն:*
(ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆՆԵՐԸ ձեռքի նշաններով կը յայտնեն, թէ իրենք եւս չեն ճանչցար այդպիսի անձ մը: ԿՐՏՍԵՐ ՔԱՐՏՈՒՎԱՐԸ ռոտի կ'ելլէ, կը մտնցնէ իր աթոռը սեղանին եւ ձախ կազմէն դուրս կ'ելլէ: Կը թափ, թէ ոչ ոք կը նկատէ իր մեկնումը):

ԹԱՐԱՆ (կակազելով) — *Դուք կ'ապշեցընէք զիս... Մանաւորաբար անո՞ր համար, որ ես կը ճանշնամ Փրոֆեսէօր Մենարը... Եւ մանաւանդ կը հիանամ իր վրայ... Եւ իր կողմէ... ան ունի (ձայնը յուսահատ շեշտ մը կ'ստնէ) մեծ յարգանք ինծի հանդէպ:*

(Փրոֆեսէօր Թարան խօսած էր պարապուքեան մէջ. այ ոք մտիկ կ'ընէր զից: ՍՐԱՄԻՏ ՏԻԿԻՆԸ Երրորդ եւ Զորբորդ Պարսններուն թելը կը մտնէ եւ անոնք միասին քանի մը քայլ կ'անեն: ՊԱՌԱՒ ՔԱՐՏՈՒՎԱՐՈՒՆ, որ վերջացուցած է գործը՝ կը հագուի վերարկուն եւ ձախ կազմէն դուրս կ'ելլէ: Անգամ մը եւս ոչ ոք կը նկատէ անոր մեկնումը):

ԹՎԹԱԿԻՑԸ (բախտներուն մէջէն) — *Ես պէտք է երթամ այլեւս: (Ձեռքը օդին մէջ՝ հրաժեշտ կու տայ եւ արդմէն դուրս կ'ելլէ):*

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆԸ (Ձեռքը դնելով Անազին Պարսնին ռուսին) — *Այս խաբերայութիւնը պէտք է դադրի հիմա, անմիջապէ՛ս: Մենք ամէն ինչ կարգի պիտի բերենք:*

ՍՐԱՄԻՏ ՏԻԿԻՆԸ (Զորբորդ Պարսնին) — *Երթա՞նք: Մենք չենք կրնար յաւատենապէս հոս մնալ (յամկարծ շատ լըջօրէն) ոճրադործներու պէս:*

(ՍՐԱՄԻՏ ՏԻԿԻՆԸ, ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆՆԵՐԸ դուրս կ'ելլեն արդմէն: ՓՐՈՖԵՍՏԵՐԸ ԹԱՐԱՆԸ կը շարժի դէպի անոնց կողմը, բայց շատ արագ կանգ կ'առնէ եւ օրորակելէն կը հակի աթոռի մը վրայ. յետոյ, յամկարծ կը նկատէ Ընդհանուր ՔՈՒՆԻՅԻՆ ԵՎ Քարտուղարներուն բացակայութիւնը եւ կը սկսի վագել ու արդմէն դուրս կ'ելլէ):

ԹԱՐԱՆ (բեմէն դուրս) — *Ներեցէք ինծի... Կ'ուզի հարցնել, թէ արդեօք տեսա՞ք Ընդհանուր Քննիչն ու Քարտուղարները... Շատ մտահոգիչ է, պէտք է ստորագրած ըլլայի հաստատագրերը... Եւ... չստորագրեցի սակայն: (Ահարեկ) Բայց անոնք չեն կրնար մեկնած ըլլալ, մեզմէ մէկը տեսած պէտք է ըլլար զանոնք: Ձեռմ հասկնար...*

(ՏՆՈՐԷՆՈՒՆԷՆԻՆ ձախ կազմէն ներս կը մտնէ: Քիչ մը կը շարժէ աթոռներն ու սեղանը, ներս կը տանի արխիւները, կը բերէ քանակներով քեռնաւոր տախտակ մը ու կը կախէ քեմին խորքը գտնուող պատէն):

Տեսարանը հիմա կը ներկայացնէ Պանդակի մը Գրասենեակը):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՊԱՆԴՈԿ ՄԸ

(ՓՐՈՖԵՍՆՈՐ ԹԱՐԱՆ ԿՆԻՐ-ՔԵԿԵԿԵ)

ԹԱՐԱՆ.— Ոչ ոք, տակուին ո՛չ ոք: Որքան ընդվզեցուցիչ է: Տնօրէնուհին, սովորականին պէս, պտոյտի դաշած է... Ի՞նչ տարօրինակ վարմունք ունի, աւելի լաւ կ'ըլլար, որ նոթ՝ մը ձգէր, ատիկա աւելի պատուարեր կ'ըլլար... (Առաքիւն): Բայց խնդիրը նոյնն է: Կ'ուզէի գիտնալ, թէ որեւէ նամակ ունի՞՞մ թէ ոչ:

(Ելլու Ոստիկաններ կը մըտնեն աջ կողմէն: Սովորական երեսօյթ):

Ո՞վ էք դուք, ի՞նչ կ'ուզէք: Մարդ չկայ գրասենեակին մէջ:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Կը փնտնեք մէկը, որուն անունն է... (Գրպանէն փաստաթուղթ մը կը հանէ):

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Թարան:

ԹԱՐԱՆ.— Ըսե՛լ կ'ուզէք — Փրոֆեսէօր Թարան:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ (ցոյց տալով ձեռքի փաստաթուղթը) .— Հոս պաշտօնը չէ նշուած:

ԹԱՐԱՆ.— Մտահոյիչ է ատիկա: Որովհետեւ ինչպէ՞ս կրնամ հաւատալ, թէ ես եմ ձեր փնտնած մարդը:

(ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ կը խնդան):

Ես Փրոֆեսէօր Թարանն եմ, Համալսարանին մէջ ես ամպիոն մը ունիմ...

(ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ իր կողմը կը յառաջանան):

Ուզածնիդ ի՞նչ է, ես ոչ ոքի վնաս հասցուցած եմ: (Խնդալով) Խիզ՞ա հանգիստ է:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Դուք օրէնքին դէմ յանցանք մը գործած էք:

ԹԱՐԱՆ.— Բացարկեցէք, թէ ի՛նչ ըսե՛լ կ'ուզէք...

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Պիտի ուզէինք բացատրել, բայց դուք կ'ընդմիջէք մեզ:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Յանցանքը, զոր գործած էք՝ շատ թեթեւ է: Աղիւսաբարութենէ մը ետք՝ ազատ պիտի կացուցուիք:

ԹԱՐԱՆ.— Անգամ մը եւս պնդելով, կ'ուզեմ հասկնալ, թէ ի՛նչ կը նշանակեն այս բոլորը:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Մի մտահոգուիք: Ո՛վ՛ այս կամ այն ձեւով՝ ատեանն չէ կանչուած:

ԹԱՐԱՆ (կարն լռութեան մը ետք, հերտակամ որոշում մը առնելու ձեւով) .— Օ՛, կը հասկնամ, դուք վերջին լուրերէն տեղեակ չէք: Բայց ես հիմա ուղղակի ոստիկանատունէն կու գամ: Ստորագրած եմ պէտք եղած թուղթերը: Վկաները անկասկած պաշտպանեցին իմ լաւ վարքս: Խիզիքը կարգադրուած է: Դուք պէտք է բժշկուէք, թէ ես ձեր առջեւ եմ, ազատ, եւ ես պէտք է բացատրեմ... Պէտք է բռնեմ, որ ձեր բաժանմունքը շատ պէշ կ'երպով կազմակերպուած է: Որովհետեւ, ինչ որ հիմա պիտի ըսեմ ձեզի, առաջուց արդէն պէտք է գիտնայիք: Ձեր պարագային՝ այս է այն միակ երբայն կացութիւնը, որուն կարելի է յանգիլ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Կը սխալիք: Մենք տեղական կեդրոնին հետ կապ չունինք: Մենք զբոսած ենք մեզ հարցաքննելու տարբեր ոճերի մը համար:

ԹԱՐԱՆ.— Անգամ մը եւս հարց կու տամ. ի՞նչ ըսե՛լ կ'ուզէք...

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Դուք մեղադրուած էք ձեր աւելորդ թուղթերը լուրարանի էալիմներուն մէջ ձգած ըլլալու յանցանքով:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Դուք կը կարծէք, թէ կրնաք բռնել ինչ որ կ'ուզէք: Այս վայրկեանին սկսեալ, պէտք է դիտեալ, որ քաղկենները անհրաժեշտ է մաքուր պահել:

ԹԱՐԱՆ (յարձակողական) — Դուք սխալ հասցէի եկած էք: Ճշմարտութիւնը ա՛յն է, որ քաղկին մտած չեմ ո՛չ երէկ, ոչ ալ առջի օր եւ այդ օրերուն է միայն, որ վերջերս քաղկիք առած եմ: (Լուսփիւն): Անշուշտ, սովոր վորարար քաղկին կը մտնեմ: Կ'ատեմ ծովափին վրայ հաղտաստներս հանել, ա՛յն պատճառով, որ ամէն ոք կրնայ տեսնել դիս: Եւ այն բոլոր նարկզուութիւնները, որոնցմով պէտք է դիտուի, չինթարկուելու համար անտեղի նայուածքներու՝ կը յոգնեցնեն դիս. աւելի՛ն. անոնք կը յորուեն ժամանակս, զոր կը նախընտրեմ (խնդալով) գործածել աւելի օգտակար բաներու: (Անորոշ շարժում մը րնկելով) Այնպիսի... Ըդ բաղում մըն է տարատը իջեցնելու դործը՝ շապիկը անապարանքով, մէջքիդ կապկէն ետք... որ կրնայ վար իյնալ, հետեւաբար պէտք է զո՛ւ ըլլալ: (Լուսփիւն) Պիտի ըսէք, որ կրնաս միշտ ալ անցնիլ քաղկեններու ետեւը, բայց հոն ալ աւազը բնաւ չի փոխուիր եւ այնքան աղտոտ է անիկա... Կը վարանիմ հոն երթալու:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ (Փրփրեւոր Թարանին քրկարելով ձեռքին մէջ քլուսած հաստասագիրը) — Լաւ: Ձեզմէ միայն կը խնդրենք, որ ընէք հետեւեալ հաստատումը — «Կ'երդնում, որ ես թաղին չեմ մտած այսօրեւ ժամանակէ՛... եւ այն, եւ ստորագրէք: Ատիկա դժուար չէ բնել:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— «Այսօր ժամանակ եւ հեղինակ կրնաք աւելցնել, եթէ ճիշդ է եւ դուք կ'ուզէք անշուշտ, թէ այդ՝ շարժիկներու դրամ չունէիք»:

ԹԱՐԱՆ.— Ճիշդ է, դրամ չունէի... վըրաս: Ատիկա կրնայ ունէ մէկուն պատահիլ, ունէ մէկը կրնայ դրամը տունը ձգած ըլլալ: Անշուշտ, առիկա կրնայ տարօրինակ թուիլ, երբ նոյնը կրկին կը պատահի քանի մը օր ետք: Բայց եթէ իրապէս մտածէք այդ մասին, շատ մակերեսային հարց մը կը դառնայ... Դէպքերը միշտ ալ յաջորդաբար կը պատահին: Տարօրինակ է, բայց... իրականութիւն մըն է: Այո՛, երբ անցեայ անդամ ալ ծովափ դադի, դրամս կրկին մոռցած էի: Պիտի ըսէք, թէ կրնայի վերագրանալ՝ զայն րեբելու համար: Բայց այդ մէկը չեմ կրնար ընել, երբեք չեմ կրցած ընել այդ մէկը: Ճամբայ մը կտրել այն մտածումով, թէ դարձեալ պիտի անցնիս անկէ՛ կրկին տեսնելով միեւնոյն մանրամասնութիւնները, ո՛չ, այդքանը ընելու ուժ չունիմ: (Փոխելով շեշտը) Բացի ասկէ, ընդհանրապէս խօսելով, ես քաղկը չեմ սիրեր: Ձեմ կրնար աշխատիլ քայտ միջոցիս:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ (Նոստոտար մը հանելով գրպանէն) — Ծանօթ էք ասոր:

ԹԱՐԱՆ.— Բայց ատիկա իմ նոթատերութիւնս է... Ինչպէ՞ս ձեռք անցուցած էք դայն: Պատասխանեցէք, կը հրամայեմ ձեզի, պատասխանեցէ՛ք ինծի: Ես միշտ վրաս կը պահեմ զայն եւ անոնց ատոր երբեք չեմ մնար: Անոր մէջ կը նոթագրեմ օրուան ընթացքին միտքս եկած գաղափարներ, գաղափարներ, զորս հետագային կը զարգացնեմ... Ո՛չ, դուք պիտի չկարենաք գտնել իմ դասախօսութիւններէս եւ ո՛չ մէկուն ամբողջական բնագիրը: (Խնդալով) Նոթատերը անբաւարար է ատոր համար... Իմ դասախօսութիւններս երկար են, շատ երկար: Անգամ մը բարեկամներէս մէկը վստահեցուց ինծի, թէ ոչ մէկ Համալսարանի մէջ այդքան երկար դասախօսութիւն չի

արուիր: Ես մենաշնորհը ունիմ դասախօսելու ժամեր շարունակ... Երբեմն նոյնիսկ բեմի վրայ կը մեամ մինչեւ ուշ գիշեր... Մինչ ես կը խօսիմ, լսյաւերը կը վաւիկն եւ նոր ուսանողներ բաց դուռնէն անդադար ներս կը մտնեն: Բնականաբար, աղմուկին եւ շարժող աթոռներու ճշմարչներուն հետեւանքով՝ ասիկա շատ ալ դիւր չի դար ինծի... Բայց ցերեկը մարդիկ շատ զբաղած կ'ըլլան եւ չեն կրնար լքել իրենց գործը, որքան ալ բազման... Անոնց տեղ պէտք է դնէք դուք մէկ: Մանաւանդ՝ որ իմ դասախօսութիւններս չեն տուտուր իրերու այս բնթացքէն: Իմ դասախօսութիւններս ստորաբաժանուած են այնպիսի՝ մեւով մը, որ դուք կրնաք դիւրութեամբ հետեւել մէկ մասին, առանց անհրաժեշտաբար լսած ըլլալու ինչ որ ըսուած էր ասկէ առաջ... Ո՛չ թէ անոր համար, որ ինքզինքս կը կըրկնեմ, ո՛չ, Բայց նորը սկսելէ առաջ, կ'ամփոփեմ նախորդը եւ այս ամփոփումը ո՛չ միայն անշահեկան չէ, այլեւ նոր լոյս մը կը նետէ այն հարցին վրայ, որ կը զբաղեցնէ դիս:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Նոթատարիդ մէջ կան շատ մը էջեր, որոնք քու ձեռագրերովդ գրուած չեն:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ (Երկնցնիւով Առքատարը Թարգման, առանց գայմ յանձնելու տնոր).— Հո՛ս, օրինակի համար:

(ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸՆԵՐԸ Կ'իյնան Փրոֆեսէօր Թարգման վըրայ):

ԹԱՐԱՆ (Ժողովով իր նոթատարին վրայ, զոր Երկրորդ աստիկանը կը պահէ ձեռքին մէջ).— Բայց ոչ, տեսէք, ես եմ, իմ նոթատարս է: Ամբողջովին կը ճանչնամ դայն: Զեռադիրս այնքան տանձնաշատուկ է:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Ուրեմն կարգա՛ մեզի ինչ որ զրած ես:

ԹԱՐԱՆ (փորձելով հեզել իրենց ցոյց տուած էջը).— Կ'ուզեմ... Պիտի... փափաքէի... Իրականութիւն է, դժուար կը հեզեմ: Բայց ատիկա ուշինչ կը փաստէ: Երբ արագ կը դրէք քալելու ընթացքին, օրինակի համար, եւ ես յաճախ քալած ժողովրդս կը զրեմ, կը պատահի որ յետոյ չէք կրնար կարգույ մեր դրածը:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Նոթատարին հեղինակը պարտաւոր է իր նոթատարին մէջ կիսատ մնացած բաները աւարտել:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Այդպէս ալ կ'երեւի...

ԹԱՐԱՆ (սարսափած).— Ուրեմն ես զօգնեալ ուղեցի ուրիշի մը ձեռագր'ը: Բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ (Խնդալով).— Չեմ դիտեր: Փոխելու համար մաս մը...

ԹԱՐԱՆ (ձեռքը կրկնախօսելով).— Խնդրեմ վերադարձուր ինձի:

(ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ կռճակիմ ետեւ կը պահէ նոթատարը):

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Ոչ այդքան արագ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ.— Հարցում մը եւս: Ինչո՞ւ. նոթատարին միայն վերջին էջերուն վրայ դրուած են: Մէջտեղի էջերը...

ԹԱՐԱՆ.— Մէջտեղի էջերը: Ո՛չ, չեմ հաւատար ասոր: Բաւական ատեն ասաջ, ես այս նոթատարը ամբողջութեամբ լեցուցի: Շատ... Հին տետրակ մըն է անիկա, զոր դարձեալ կը կարգամ՝ փնտռելու համար կարգ մը իրականութիւններ, որոնց պէտք ունէի: Կը յիշեմ... Գրեցի իւրաքանչիւր էջի վրայ. նոյնիսկ լուսանցքներուն մէջ: Պէտք է նկատած ըլլաք, որ բոլոր էջերը իմ կողմէս լեցուած են, ի՛մ կողմէս, կը լսէ՞ք:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ (նոթատարը իրեն տալով).— Անձամբ նայեցէք:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ.— Դուք բոլոր էջե-

բը տակաւին չէք գործածած: Այս է եղածը:

ԹԱՐԱՆ.— Այո, ճիշդ է... Բայց մը կայ: Բայց մը ճիշդ մէջտեղը:

ՆՐԱՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆԸ (խնդարով).— Այդ էր, որ դիտել տուինք ձեզի:

ԹԱՐԱՆ.— Պիտի բացատրեմ... Շատ պարզ է... Երբեմն մէկ ծայրէն կը բանամ նոթատետրս, երբեմն՝ միւս ծայրէն... Կը Հասկնաք... Օ՛հ, կ'ըմբռնեմ ձեր ատարկութիւնները: Պիտի ըսէք. «Ուրեմն ինչո՞ւ բոլորն ալ նոյն ուղղութեամբ գրուած են: Եթէ դուք սկսած ըլլայիք երկու ծայրերէն ալ, մենք պիտի չկարենայինք կարգալ երկուքն ալ սկիզբէն մինչև վերջ»: Անշուշտ... Միայն ես ուղղութիւն կ'ընեմ...

(Երկու ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ զուրս կ'ելլեն արէն: Թարան չի մը-կատեր անոնց ելքը եւ կը շարունակէ խօսիլ):

Անյայտօրէն կրնայի ուղղութիւն ընել, որ էջերուն վրայէն շցակեմ, եւ... այս ղէպքը պատահած պիտի չըլլար... Բայց կը տեսնէք, որ ես խելքս կորսնցուցած եմ... Շատ մը զպրոցականներ, դիտակն Հեռագծիչներ, ինծի պէս... Ինչո՞ւ, ժողովրդային բոլորն ալ այդպէս են: Ընդունուած է այդ մէկը: (Խնդարով) Մանրադէպեր կը պատմուին այդ մասին: (Յանկարծ նշմարելով, որ առանձին է, ինք էս արէն տարզ մը զուրս կ'ելլէ քսմէն) Սպասեցէ՛ք... Ես տակաւին չեմ ստորագրած Հաստատագիրը: Մինչեւ իսկ դրիչ մը շտուիք ինծի, ինքս ալ Հաստ մը չունիմ մօտս... Վերի յարկը ձգողքի: Չկրցայ երթալ ու բերել... Ձեզ գիտեր ինչու, բանայիս իր սովորական տեղը չէ եւ Տնօրէնուհին զուրս ելած է՝ ըստ իր սովորութեան, Կը լսէ՞ք զիս... (Պոռայով) Հուլիս (Վայրկեան մը ետէ՞ կը մտնէ ելած դուռնէն, նոթատետրը մտնիմ,

փայլով) Ձեզ Հասկնար, թէ ինչո՞ւ այսպէս մեկնեցան, ատանց որեւէ բան ըսելու: Կու գան եւ կ'երթան... կը կարծեն, թէ բնական բան մըն է խանդարել մարդ մը, որ կ'աշխատի եւ պէտք ունի անդորրութեան՝ կարգի դնելու Համար իր գործը:

(Կ'աննէ քանի մը քայլ: Տնօրէնուհին կը մտնէ ձախէն, թուից տակ թուղթի հոկայ ծրար մը: Ուղղաւելով դէպի Տնօրէնուհին):

Նամակներ կա՞ն ինծի Համար: ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ.— Ոչ, Փրոֆեսէօր: (Կ'երկարէ անար քուղթի ծրար մը).— Միայն այս ինձմէ խնդրուած է անմիջապէս ձեզի յանձնել այս մէկը: ԹԱՐԱՆ (առնելով ծրարը).— Ենթահասկալ կ'է:

(Տնօրէնուհին զուրս կ'ելլէ: Փրոֆեսէօր Թարան սեղանին վրայ կը տեղաւորէ նոթատետրը, ծանկի կու գայ եւ կը բանայ ծայրած թուղթը բեմին ճիշդ մէջտեղը: Հսկայ ֆարսուս մըն է՝ հնդկական մեյքապով գծուած: Փրոֆեսէօր Թարան ծանկի կու գայ ֆարսուսին վրայ՝ կակազելով):

Միայն բան մը կայ Հոս: Ասիկա վրատահարք ինծի չէ ուղղուած: Այսուհանդերձ, Փրոֆեսէօր Թարան, ատիկա իրապէս ինծի Հասցէադրուած է, կասկած չկայ այդ մասին: (Պոռայով) Տիկին:

(ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ ներս կը մտնէ ձախէն):

ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ.— Ձեզ կանչեցիք, Փրոֆեսէօր:

ԹԱՐԱՆ (վեր բարձրանալով).— Ո՞վ բերուած ձեզի այս քարտէսը:

ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ.— Սեղանին վրայ դասայ գայն: Էջ մը թուղթ կցուած էր անոր, որուն վրայ գրուած էր «Յանձնելի Փրոֆեսէօր Թարանին, անմիջապէս»: Այս է սմբողջ դիտցածս:

(ՏՆՕՐԷՆՈՒՂԻՆ ճախէմ դուրս կ'իլլէ) :
 (ՓՐՈՖԵՍՍՐՈՐ ԹԱՐԱՆ կրկին ծուկնի կու գայ քարտէսին առջեւ, ուսումնասիրելու համար գայն) : ԺԱՆՆ ներս կը մտնէ աջէն, երիտասարդ եւ քուլի կին մը, սովորական արտաքինով եւ անհրապոյր ձայնով մը : Առանց անակունկայի գայու, կը դառնայ քարտէսին շուրջ, խուսափելով անոր վրայ կոխելէ : Կը կենցաղ քարտէսին միւս ծայրը, քեմի ճախին) :

ԺԱՆՆ.— Լաւ է հոս :
 ԹԱՐԱՆ.— Ժանն, ամենատարօրինակ բաները ինձի կը պատահին :
 ԺԱՆՆ.— Ամենատարօրինակ : Վաստ՞հ ես, քեզի համար ամէն ինչ միշտ արտասովոր է : (Խնդալով) Ի՞նչ տարօրինակ եղբայր մը ունիմ :
 ԹԱՐԱՆ.— Ուշագրուծեամբ դեմ մտիկ ըրէ... ճիշդ հիմա ինձի բերանեցաւ այս քարտէսը... նաև մը ճաշարբանին յատակադիրն է, ուր կը թըւի, թէ բնթրիքի համար տեղ մը ապահոված պէտք է ըլլամ, միայն թէ՛ կը տեսնե՞ս, ես տեղ մը չեմ ապահոված նաև ունի վրայ...
 ԺԱՆՆ (ծուկնի գալով կը ծոխ քարտէսին վրայ) .— Այս քարտէսէն դատելով բաւական մեծ եւ դեղնեղի ճաշարբան է :
 ԹԱՐԱՆ.— Այո՛, մեծ է :
 ԺԱՆՆ.— Ես յաճախ դմայած եմ ճաշարբան Ուէլլինկի նկարներուն վրայ ճամբորդական գրասենեակներու մէջ : Վաստահարար ամէնէն արագ եւ ամէնէն շքեղ նաևն է այս մէկը :
 ԹԱՐԱՆ.— Ատիկա կրնայ ըլլալ : Խնդիրը հոն է, սակայն, որ ես ճամբորդութեան համար տեղ մը չեմ ապահոված այս նաև ունի վրայ, կամ ուրիշի մը... Ուրեմն...

ԺԱՆՆ (ծուկնի կու գայ քարտէսին վրայ, ձեռքերը տարածելով) .— Ինչո՞ւ այդ մասին կը զանդատիս. դուն շատ բարձրորէն պատուրած ես : (Յոյց տալով տեղ մը քարտէսին վրայ) Կը տեսնե՞ս այս խաչանիշը, այդ քու տեղը է, դուն նաև պատիւն սեղանին վրայ ես եւ կեղբոյն կը դանուխ :
 ԹԱՐԱՆ.— Ատոնցմէ ոչ մէկը կը փաստէ, որ ես ընթրիքի համար տեղ մը ապահոված եմ նաև ունի վրայ : Ո՞րք երթալու համար : Որքան ես դիտեմ, դուն նաևով Պելճիքա չես երթար :
 ԺԱՆՆ.— Քեզի այսպիսի տեղ մը տուած ըլլալով անոնք անպատճառ դիտցած են, թէ՛ դուն ով ես :
 ԹԱՐԱՆ.— Անշուշտ... բախտի բերմամբ չէ, որ դեմ դրած են նաև պատիւն սեղանին վրայ, կարեւոր մարդոց կողմէն... սակայն ես ոչ մէկ ճաշարբան թիւն ունիմ հեռանալու այստեղէն. պատճառ մըն այլ չունիմ. ոչ մէկ անհրաժեշտութիւն ունիմ երթալու... կամ վախալու :
 ԺԱՆՆ (տոբի կ'իլլէ եւ կը կսկիւնի ու դիմ) .— Երեւի, թէ այս տոմար տուած ես օր մը, երբ շատ յոգնած կը գտայիր ծանր աշխատանքի մը ետք : Իսկ հիմա, երբ շատ յոգնած չես, մոռցած ես առած ըլլալդ :
 ԹԱՐԱՆ (շուտարած) .— Թերեւս :
 ԺԱՆՆ.— Այո, կը պատահի, որ մարդիկ ընեն բաներ եւ մոռնան դանուք սուշի ուշ : Յաճախ կը կորսնցնեմ սանտրա եւ յետոյ կը դանեմ զայն մարդերու վրայ : Ծիծաղելի է, քիչ մը մասնագումար ես եւ յետոյ կը խնդաս... (Կը խնդայ, յետոյ լրջանալով) : Նամակ մը ունիմ քեզի :
 ԹԱՐԱՆ (շատ արագ) .— Պելճիքայէ՞ն :
 ԺԱՆՆ.— Ձեմ դիտեր : Դրուշմաթուղիին վրայ արձան մը եւ քիչ մը դրութիւն կայ :
 ԹԱՐԱՆ.— Նամակը հե՞տք է : (Կ'ուղղուի դէպի ծանր, քարտէսին շրջանը քենելով) :

ԺԱՆՆ (հանելով նամակը գրպանէն) .— Արձանին վրայ դրուած է (կարդալով) «Երկիր անկախութեան» :

ԹԱՐԱՆ .— Այսպիսի գրութիւն չկայ ոչ մէկ դրոշմաթուղթի վրայ : (Ձեռքը երկարելով) Ինձի տուր :

ԺԱՆՆ (ցոյց տալով նամակը առանց իրեն տալու) .— Կը տեսնես, անոր կողքին ուրիշ դրոշմաթուղթ մը, վրան՝ առիւծ մը :

ԹԱՐԱՆ .— Այո՛, Պէլճիբաշի արքայական առիւծը :

ԺԱՆՆ .— Ես պարտաւորուած եղայ աւելորդ ծախսի մը տակ մտնել : (Խընդալով) Բոլորովին պարպելով դրամապանակս :

ԹԱՐԱՆ .— Րէքթորին նամակը, վերջապէս : (Լսուքիւն) Տուր ինձի : Ինչու պիտի չտաս :

ԺԱՆՆ .— Ես ուզեցի կորզալ զայն :
ԹԱՐԱՆ .— Տուր ինձի :

(Կ'ուզէ առնել նամակը, բայց ԺԱՆՆ կը դիմադրէ) :

ԺԱՆՆ (նամակը երկարելով իրեն) .— Ինչպէս որ կը փափաքես :

ԹԱՐԱՆ .— Ոչ, կարգա՛ւ : (ԺԱՆՆ կը նստի սեղանին ծայրը եւ կը բաճայ պահարանը : ԹԱՐԱՆ կանգնած կը մընայ անոր մօտ) :

ԺԱՆՆ (կարդալով բնական ձայնով մը, գոր կը պահէ մինչեւ ընթերցման աւարտը) .— «Պարոն, ձեր վերջին նամակը փաստեց ձեր անհամբերութիւնը, որ պէտք է խոստովանիմ, զարմացուց զիս...» :

ԹԱՐԱՆ (անարեւելած) .— Ես դիտցայ, անհարակ էղած էի եւ մտահոգած էի զինք :

ԺԱՆՆ (կարդալով) .— «Յամենայնդեպ մտածեցի, որ ձեր ուշադրութիւնը երաւիքելով կնոջս առողջական վիճակին վրայ, ես բաւականաչափ բացատրած կ'ըլլամ նամակիդ պատասխանին ուշացման պատճառը...» :

ԹԱՐԱՆ .— Անշուշտ, պէտք է հարցուցած ըլլա՛յի իր կնոջ մասին : Ինչո՞ւ ինքը

ինքզինք իմ տեղս զրած պիտի ըլլար : Ես նամակիս մէջ խօսած էի սրտիս շատ մօտիկ հարցերու մասին : Շատ ալ դուրին չէ մէկ նիւթէն միւսը անցնելը . այո՛, ես մոռցայ իր կէնը :

ԺԱՆՆ (կարդալով) .— «Այս պայմաններուն տակ կարելիութիւն չաւանգնեմ ձեր պահանջած երկրորդ այցելութիւնը կազմակերպելու...» :

ԹԱՐԱՆ .— Ուրեմն կը մտածէ, թէ ինք անփոխարինելի է... ուրիշ մարդիկ կան, որոնք նոյնքան կարող են այդ կարգադրութիւնները ընելու արարքին մէջ... Այդ մարդիկը երջանիկ պիտի զգան՝ ինձի համար նման զոհողութիւն մը ընելուն եւ պիտի առնեն բոլոր անհրաժեշտ քայլերը :

ԺԱՆՆ (կարդալով) .— «Ես պէտք է ըսեմ, որ զարմացայ իմանալով, թէ ձեր անցեալ այցելութեան ընթացքին, դուք անտեսած էիք տեղեակ պահել զբարձրագին ձեր դասախօսութեանց ճշգրիտ ժամերուն, այս ձևով խնդարելով ձեր րնկեր դասախօսները, որոնք վերջին վայրկեաններուն պարտաւորութեան փոխել իրենց ժամանակացոյցը...» :

ԹԱՐԱՆ .— Ինչո՞ւ սրանչափ էին...
ԺԱՆՆ (կարդալով) .— «Ինձի ըստեցաւ նաեւ, թէ ձեր գրոյցները երկարած էին ձեր տրամադրուած ժամերէն աւելի» :

ԹԱՐԱՆ .— Ես երկարեցի դասախօսութիւններս, որովհետեւ նիւթերուս ճոխութիւնը ստիպեց, որ այդպէս ընեմ... Ուրիշ բան չէի կրնար ընել :
ԺԱՆՆ (կարդալով) .— «Վերջապէս ինձի ըստեցաւ, որ ձեր աշակերտներուն ուշադրութիւնը ճկատիլիորէն կը ցրուէիք, անոնցմէ մէկ բանին նշանակ թարգմանաբար խօսելէ ետք՝ հետագայ սրահէն, նախքան ձեր դասախօսութեան աւարտիլը» :

ԹԱՐԱՆ .— Ո՞վ համարձակած է այդպէս ստել եւ ինք ինչպէ՞ս կրնայ այդ ատիճան միամիտ ըլլալ. անհեթեթ է :

Եթէ սրահը պարպուած ըլլար իմ դասախօսութեան ընթացքին, ես նշմարած կ'ըլլայի. կը զաղբէի խօսելէ... Ընդհակառակն, ես ընաւ չլռեցի, այլ շարունակարար խօսեցայ եւ առանց երբեք ձայնս ժեղձացրնելու: (Առութիւն) Ո՛չ, ես ձայնս մէկ վայրկեան իսկ չցածցուցի:

Գիտե՞մ, թէ կարդ մը ուսանողներ պատահեցաւ, որ ձգեն սրահը դասախօսութեան աւարտէն առաջ: Բայց ատիկա ըրին, որովհետեւ պէտք էր շոգեկառքին հասնէին. անոնք ուրիշ քաղաքէ կու դային, մասնաւորաբար զիս ունկնդրելու եւ այդ շոգեկառքը միակն էր, որ կար, իսկ այդ ուսանողները որքա՞նչ ձեռով կարելի չէ մեղադրել, ոչ մէկ ձեռով:

Իսկ այն շուկաները, որոնք բարձրացան անգամ մը սրահին ետեւը, ե՛ս զիտե՞մ, թէ ինչ էր անոնց պատճառը... Քանի մը աղջիկներ կ'ուզէին լռեցնել կարգ մը երեմասարգներ, որոնք նստած էին իրենց ետեւը եւ կը սրտային. «Ի՞նչ յստակ մտածողութիւն, ի՞նչ գորտար տրամաբանութիւն»: Ես բարկացած չեմ իրենց զէմ, անոնք բարեխղճօրէն նոթեր կ'առնէին եւ բնական էր, որ անոնք պնդէին լրութեան սիրոյն:

ԺԱՆՆ (կարդալով).-- Վայս բարբառ շատ քիչ կարեւորութիւն պիտի ունենային, եթէ չհաշուուէր ձեր դասախօսութիւններուն շահեկանութիւնը, ձեր վերջին դասախօսութիւնները ինծի թուեցան անգուրազանք...»

ԹԱՐԱՆ.-- Անդուգակա՛ն: Դիւրին է ըսել: Կարծէք թէ ձեզի համար նիւթին անցնելը հեշտ է: Կարծէք թէ հոն այլեւս չկային այնպիսի հարցումներ, զորս հարկ էր պրպտել միւսներէն աւելի, որովհետեւ կը վերաբերին ձեզի, անձնապէս կը դային ձեր... (Մտաով կը գարնէ կտրծ քին):

ԺԱՆՆ (կարդալով).-- «Որոշ կէտեր զիս շահագրգռեցին. բայց պիտի նա-

խըմտրելի տեսնի զանոնք աւելի յըստակօրէն զարգացուած եւ կրնամ ըսել աւելի պարկեշտօրէն. այն գազափարմերը, զորս կ'արտայայտես, բաւական գորտար կերպով կը յիշեցընեն Փրոֆեսէօր Մեմարի գազափարմերը, որոնք արդէն շատ բարձրօրէն գնահատուած են: Ըսել չէ թէ ես կը պաշտպանեմ այդ գազափարմերը, ընդհակառակն, կարծեմ անոնք արժանի են մեծ ուշադրութեամբ: Բայց ինչպէ՞ս կրնայիք անտեսել ձեր աղբիւրները. եւ ուրեմն զանոնք ներկայացնել իրրեւ ձեր անձնական պրպտումները. վերածնունդ գործի մը, զոր քոլորս կը մանցնամ եւ որուն կը հիմնամք...»

ԹԱՐԱՆ (պարտուած՝ ծոկելով սեղանին վրայ եւ քարովելով).-- Ըհդ չէ՛... ճիշդ չէ՛...: Մենք նոյն գազափարմերը ունեցանք նոյն վայրկեանին: Նման բաներ կը պատահին, առաջին անգամը չէ:

ԺԱՆՆ (կարդալով).-- «Թերեւս պէտք չէր, որ ձեզի հազարդիլ իմ տպաւորութիւններս, եթէ գտնագան տեղերէ մտմանկներ ստացած չըլլայի, որոնք իրաւամբ կը նշէին ձեր անփափկանկատաւթիւնը»:

ԹԱՐԱՆ (ուղիղ շտափ կանգնելով եւ սկըսելով).-- Անոնք գրած են իրեն, բարբառ ալ: Ես զիտե՞ի, որ պիտի ընէին այսիկա: Ես զիտե՞ի ուշադրութեամբ զնեցի: Երբ կը խօսէի՝ անոնք կը շոգեկառքէն, ճշտով՝ «Փրոֆեսէօր Մեմարի ակնագները գողցած է: Ամէն ինչ Փրոֆեսէօր Մեմարի պէս կընէ: Միակ ցտայիս այն է, որ այս մէկը Մեմարի-ն աւելի կարն է հասակով»: Ու կ'ըսէին տակաւին այլ անիմաստ բաներ: Եթէ միայն քաջութիւն ունենային վեր կենալու եւ ուղիղ երեսին ըսելու այս բոլորը, զորս կը շնջային այնքան երկչոտ կերպով, այն ատեն ես ոտքի ելած եւ ըսած պիտի ըլլայի (ձարտասանի շարժումով մը ձայնը բարձրացնելով) Պարտենէ՛ր...»

ԺԱՆՆ (կարդալով) — Է՛րբեւ հետեւանք թուած իրականութիւններուս, այս տարի պիտի չկարենամ ձեզ հրաշիրել մեր յաջորդ համաժողովին... : Հաւատացէ՛ք ինձի, կը ցաւիմ ձեր մասին կարծիքս փոխած ըլլալուս համար» :

(ԺԱՆՆ կը կանգնի, նամակը արագ կը դնէ սեղանին վրայ, կը պատրաստուի դուրս ելլելու. ՓՐՈՑԵՍԻՆՕՐ ԹԱՐԱՆ սեղանին կը կարգի, գետին շիյնալու համար) :

ԹԱՐԱՆ — Ինչո՞ւ այս բանը ինձի կ'ըսեն այսքան տարիներ ետք : Ինչո՞ւ աւելի շուտ չըսու : Ինչո՞ւ իրենք բոլորը միասին չըսին ինձի : Որովհետեւ ակնբախ է, յստակ է, կրճան անմիջապէս տեսնել :

(Մինչ ՓՐՈՑԵՍԻՆՕՐ ԹԱՐԱՆ կը խօսի, ԺԱՆՆ զգոյշ կը դառնայ քարտէսին շուրջ եւ դուրս կ'ելլէ աջէն, հանդարտօրէն : Իր վերջին նախադասութենէն ետք, ԹԱՐԱՆ կը դառնայ քարտէսին կողմը եւ երկար կը նայի անոր : ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ ներս կը մտնէ

ձախէն : Առանց Փրոցեստօր Թարանին նայելու, կը վերցնէ քանի մը առարկաներ, որոնք տեքստին մաս կը կազմէին եւ կը տանի գանձի քաղցաններուն ետեւը : Բեմը կը մնայ պարապ : Միայն նոթատետրը եւ նամակը, զորս ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ գետին ձգած էր՝ կը մընան գետին : ՓՐՈՑԵՍԻՆՕՐ ԹԱՐԱՆ ոչինչ նշմարած է : Երբ ՏՆՕՐԷՆՈՒՀԻՆ գուրս կ'ելլէ, ան կ'առնէ քարտէսը եւ մեքենաբար կ'ուզուի բեմին խորքը եւ սեզ մը կը փնտռէ՝ գայն կախելու համար : Ոտքի մատներուն վրայ կ'ենալով՝ կը յաջողի քարտէսը կախել նախապէս պատրաստուած կախիչի մը վրայ : Քարտէսը լայն տարածք ունի, միատեսակ մոխրագոյն է եւ քաղցրահամալէս պարապ : ՓՐՈՑԵՍԻՆՕՐ ԹԱՐԱՆ՝ կռնակը ժողովուրդին, կը դիտէ քարտէսը երկար վայրկեանի մը համար, յետոյ շատ դանդաղ կերպով կը սկսի համել հագուստները) :

Թարգմ. Վ. Դ.





ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԻՒՐԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐՈՒ
Զ Ա Ռ Ի Թ Ա Փ Ի Ն



Հողային տարածութիւններու եւ ինչքերու բռնազրաւումները ծանօթ էրեւոյթներ են աշխարհի, աշխարհի սկիզբէն ի վեր: Զինու զօրութեան խնդիր է առիկա եւ իղճմտանքն ու տրամաբանութիւնը քիչ նշանակութիւն ունին նման պարտականերու: Բարոյական մարդիքէ ներս, սակայն, խնդիրը բոլորովին կը տարբերի: Հոս, բռնազրաւում չարտութիւնը առնուազն կը պահէ ազգային իր պատկանելիութիւնը: Փարիզի թանգարաններուն մէջ, օրինակ, անդնահատելի գործեր կան Միքէլ Անճելոյէն, Ռաֆայէլէն, ուրիշներէ, բայց ոեւէ Ֆրանսացի մտքէն չ'անցըներ օր մը Անճելոյն, Ռաֆայէլը կամ միւսները Ֆրանսական ծաղումով պիտակել:

Ինչ կը վերաբերի մեր ժողովուրդին, առարկայական տարածութիւններու բռնազրաւումներուն աղըթներ, մտքի ու հոգիի կայունաններուն մէջ մեր կուտակած չարտութիւններէն ներս մէկ կողմէ թուրքը կ'ապաստակէ, միւս կողմէ՝ Հայաստանի միւս դրացիները, փորձելով ուրանայ ապրում ու կերտում պատմութիւնն անգամ եւ իրացնելով արուեստի գործերը՝ արուեստագէտին ազգային պատկանելիութիւնը նենկափոխելու աննախադէպ լքութիւններ:

Այս երեւոյթներուն կ'ակնարկէր անպայման յօդուածալիբ Մարկո Ղուկասեան, երբ «Գարուն» ամսագրի այս տարուան առաջին համարին մէջ կ'ը գրէր.

«Մամուլում եղել են դէպքեր, երբ մի ժողովրդի պատմութեանը վերաբերեալ դէպքերը, կամ տուեալ ժողովրդի կեանքում անգնահատելի աւանդ մուծած պատմական մի անձնաւորութեան մասին, առանց հիմնաւորելու, ազատազուտ ու փաստերը խնդաբիրութեամբ յօդուածներ են տպագրուել: Երբեմն նայնիսկ փորձել են «խրացնել» հարեւոյ ժողովրդի հագեւոր հարբստութիւնները: «Խրացնել»: Հնարաւոր է այդ: Պարզապէս ծիծաղելի է: Բայց հետեւանքները կարգաւ են չափազանց ծանր լինելու:

Իւրացնելու այդ փորձերուն ամէնէն փորձիչներէն մէկը պատահեցաւ 1965ին, Հայոց Արեւելից կողմանքի կապակցութեամբ, աղուանապիտութեան մէջ, թաթար Ջ. Բունիաթովի այդ մասին հրատարակած աշխատութեան օրերուն, քաղաքական պատճառներով Աղուանքի կցուած Արեւելեան Հայաստանի Գարդման, Ուտիք եւ Արցախ գաւառները՝ Աղուանք, անոնց Հայ բընակչութիւնը՝ ազուաններ, եւ «Հայկական Աղուանքում, նրա զաւակների ձեռքով եւ նրանց մայրենի լեզուով» ստեղծուած մշակոյթը՝ աղուանական համարելու թաթարական նոր արշաւանքին ընթացքին:

Հայոց Արեւելից կողմանքի պատմութեան մասնագէտներէն Աօ. Մընացականեան, հեղ մը Պարոյր Սեւակի հետ միասին փետրաթափ ընելէ ետք յերկրածոյ տունալիներով պատմութիւն սարքող Բունիաթովը, երկրորդ անգամ առանձինն հանդէս եկաւ եւ վերստին ջանջախեց նենդափոխները, ծանրանալով այս անգամ անոնց սաղբանքներուն տուն տուող բուն պատճառներուն վրայ:

«Հայերի վրայ, որպէս ծանր մեղադրանք, բարդում են աղուանների «բնագրում», նրանց մշակոյթի «ուշնչացում» եւ իրացման գարնուրելի գրպարտութիւնները: Դրանց էլ յայտնուում են աշխարհագրական, էքոնիկական ստիմանների «լայնացումը», ինչպէս եւ ուրիշ առասպելներ: Արդի Աղբըրեպանի կազմում արտողներին «աղուանականացնողները» հեշտութեամբ ազուան են համարում նաեւ յարակից գաւառների, մասնաւորապէս Սիւնիքի եայերին: Համապատասխանաբար «մեծանում» է նաեւ Աղուանքը՝ ուպառնալով ընդգրկել տղ արդի Հայաստանը»:

Նման գրպարտութիւններ գուրա տուող թաթարական տրամադրութեան թաթուն շարժառիթը չէ խուսափած հարկաւ Հայ մասաւրականին թափանցումէն, որուն համար դիւրին եղած է «նկատել, որ միանգամայն որոշակիորէն այստեղ իրեն զգացել է տալիս պաթարաւանի գառանցանքը»:

Թուրքին ու թաթարին կատարած իւրացման փորձերէն ետք, այս տարի, Յարութիւն Նազուլեանի ստորագրութեամբ, «Նրիտասարդ Հայ» երկչաթարթութիւն մէջ երեւցաւ յորում մը, որ խօսելէ ետք Հայաստանէն նոր ստացուած «Հայկ. ՄՄՀ.ի կերպարուեստը» անուն հատորին եւ Վ. Յարութիւնեանի կողմէ անոր կցուած նախարանին մասին, կ'ընդգծէր, թէ՛ հոն՝

«Հայերէն եւ ռուսերէն գրութիւններու մէջ, Այվազովսկին ներկայացուած է իբրեւ «հուժկու» եւ «մեծ» նկարիչ, որ «վրձնել է մի ստուար շարք հայաստանեան բնանկարներ»: Ոչ մէկ խօսք «հայ ծննդեան»: Իսկ անգլերէնին մէջ, որ իբր թէ թարգմանութիւնն է նոյն թեքստին, Այվազովսկին «բոլորին ծանօթ ռուս ծովանկարիչն է»: Ի՞նչ տեսակ խմբագրութիւն է ասիկա: Անպատասխանատու: Վերջին հաշուով ազգային պատկանելիութեան կարեւոր նշանակութիւն կը տրուի, հատորներ կը գրուին, գտնէ այս երկիրներուն մէջ: Իսկ մենք՝ կորսուող ժողովուրդ, պիտի չուզէինք Այվազովսկին կորսնցնել «հայերուն» ձեռքով: Անոր ռուսացման աշխատանքին շատոնց լրծուած են ռուս արուեստագետները: Անոնք իրենց երգը, մենք՝ մերը»:

Թուրքերու եւ թաթարներու նենդափոխութիւններով ստեղծուած ողբերգութենէն եւ հայու ձեռքերով հայեր այլասերելու թեթեւութենէն ետք, ահաւասիկ երրորդ պարագայ մը, իրենք իրենց սեփական գրչով ու խօսքով կ'արտօնու յայտարարութիւններ ընող մեծանուն մարդոց պարագան, որ նըւազ ծանրակշիւ չէ:

Կ'ակնարկենք «Առվեստիլայա Թոսաթա» թերթին թղթակիցներէն մէ-

կուն ըրած Արամ Խաչատուրեանի հետեւեալ յայտարարութեան, որ լոյս տեսաւ նոյն թերթին այս տարուան 6 Յունիսի Համարին մէջ:

«Սնունդով եայ եմ, սակայն ծնունդիս վրաստանում: Իսկ իմքս ինձ համարում եմ ոռոս, սովորելիս եմ աստական դպրոցում եւ արդէն կէս յար է, ինչ ապրում եւ աշխատում եմ Մոսկուայում»:

«Ինչքա ինձ Համարում եմ ոռոս»:

Կը թուի, թէ իրենց ոճը, իրենց արուեստը, մեծութիւնը չաղախող առաջին պատճառներուն, արիւնին ու խորհրդաւոր ակօսներով ակնարկ, երակ ու հոգի լեցնող ժառանգութեանց տոջեւ խոնարհող մեծերէն տարբեր խառնըւածք ժը ունի Արամ Խաչատուրեան եւ մեծ ազդի ժը զուակ Համարուելու մտուցելն մէջ երբեք չ'անգրադատնար իր էութիւնը ուրանալու փոքրագութեան:

Ընթերցողը կրնայ թղթակիցի ժը թղթակցութեան մէջ Երեւան յայտարարութիւնը հաւատարի չհամարել եւ ծանրակշիռ չգտնել խաչատուրեանական «ինչքա ինձ Համարում եմ ոռոս» դասանքը: Անտեղի պիտի չլլլար նման կասկած ժը: Բայց Արամ Խաչատուրեան միայն «Սովետական Ռուսիա» թերթին ու անոր թղթակիցին տոջեւ չէ, որ այդպէս կը զգայ ինքզինք: Ինչգինքը ոռոս համարելու ձգտումը մտասեւեռում եղած է իրեն համար: Ճիշդ երկու տարի առաջ, անդերէն լեզուով հրատարակուող «Սովիէթ Սիւիլի» մէջ, այս անգամ իր ստորագրութեամբ, դրեթէ բառացիօրէն կը կրկնէր այս Յունիսին «Սովետական Ռուսիա» թերթին ըրած յայտարարութիւնը:

«Ազգութեամբ հայ եմ, ծնած եմ Վրաստան եւ շատ յարաբերութիւն ունեցած եմ ազրբեանական մշակոյթին հետ»:

«Բայց նշմարութիւնը այն է, որ անոնցմէ անէ մեկէն աւելի ոռոս եմ, քանի որ աւելի քան յիսուն տարի ապրած եմ Մոսկուայի մէջ»:

Տրամադրութիւնը նոյն էր ուրեմն ե՛ւ երկու տարի առաջ՝ — «անոնցմէ անէ մեկէն աւելի ոռոս եմ»:

Բայց ի՞նչ պատմութիւններ են ասոնք:

Ժողովուրդի ժը պատմական ղէպերը կամ շտուեալ ժողովրդի կեանքում անզնահասելի աւանդ մուծած պատմական անձնաւորութիւնները իւրացնելու այս ի՞նչ ժպրհութիւն է, թաթար Բուշիթովը ուրկէ՞ կ'աւնէ արդեօք Մովսէս Կաղանկատուացիի ու Մխիթար Գօշի հայրենիքը ազուանտկանացնելու այս համարձակութիւնը, ո՞ր սատանան ոռոս արուեստարանները կը մղէ Այվազովսկին ոռուացնելու մտուցելն, կամ՝ ի՞նչ բանէ զրգըւած տեղի կ'աւնենայ խաչատուրեանական այս յովնահոլով ուրացումը, ոռուանալու կամակարութիւնը:

Մարդ ակամայ կը տարուի այս փաստերը կուպել ազգային տարբերութիւնները ընջելու եւ մէկ ժողովուրդ ստեղծելու այն ցնորական պայքարին, որ անպակաս եղաւ կարժիւր ծիրէն ներս, մղուեցաւ տարբեր ձեւերով, չափով ու թափով եւ վերջին անգամ դրսեւորուեցաւ Պրեժնեկի կողմէ, Համայնաժպր 24րդ Համագումարին ամպիտին, շտովետական ազգ» ժը կերտելու միտող նշանարտնին տակ:

Վերոյիշեալ բոնարարումներն ու մոլորութիւնները պրեժնեկեան այդ պայքարին եւ տնոր հետեւող մթնոլորտին հետեւանքը կը թուին ըլլալ եւ առողջ նշաններ չեն ամենեւին:

Ի հարկէ, արեւելքին մէջ չէ ստեղծուած տակաւին ուժ մը, որով մարդիկ կարենային տուեալ ժողովուրդին պատմական հայրենիքին պատմական մէկ եղերքը ուրիշ ժողովուրդի ժը անունով ներկայացնել, տուեալ ժողո-

վուրդին պատմական մէկ անձնաւորութեան տարբեր պատկանելիութիւն մը վերագրել, կամ՝ անձնաւորութիւններէն մէկը մերկայարանոց յայտարարութեամբ մը կարենար փոխել իր ազդութիւնը: Նման իւրացումներ, ուրացումներ ու դիմաշրջումներ չեն կրնար պատահիլ պատմական, աշխարհագրական, ծագումնաբանական, արեան, աշխարհընկալման ու արտայայտչական իւրացատկութիւններու յամառ փաստերով, խորքային հիւթով, տեսուկար որակով: «Լուրացնել»: Հնարաւա՞ր է այդ: Պարզապէս ծիծաղելի է: Բայց եետեւանգիստները կարող են չափազանց ծանր լինել»:

Հաւանական այդ հետեւանքներուն, այլասերման թափ տալու դիւրութեան, առաջացնելիք պատրանաթափութիւններուն պատճառով էր, որ հայ մտաւորականութիւնը ընդվզեցաւ դաշնաւորութեան վարպետ ինչպէս որեւէ հանած անդաշն ժայիին դէմ եւ ոչ թէ ըստ էութեան լուրջի առնելով անոր ազդուրացութիւնը: Որովհետեւ՝ «ինքս ինձ համարում եմ ուս» յայտարարելով, ճիշդ է, բան մը կը փլի մեր մէջ, բայց հայկական իր կառոյցին հետ փուլ դալով չի կրնար յանկարծ ուստանալ ինքը, կը մնայ ինքը, ուստանալու իր տրամադրութեան դէմ առաջին ընվզողներէն է. Յովհաննիսեանի բառերով՝ «չէ՞ որ այն կիրքը, որով նա ստեղծագործել է՝ հայկական է, այն աչքերը, որով նա տեսնում է գեղեցիկը՝ հայկական են, այն զգացմունքները, որով նա ընկալում է ներդաշնակութիւնը՝ հայկական են, այն մտածելակերպը, որով նկարագրում է Յիւստոսիւսը՝ հայկական է եւ մօրկաթը աւ օրորոցայինները նայեպէս հայկական են»:

Դիմացի կշիռն կու տանք «Սովետակայա Ռոսսիա» թերթին խնդրոյ առարկայ թիւին (5 Յունիս) խնդրոյ առարկայ մասը, ուր, շրջանակի մէջ առնուած է ձեռքի ծանօթ յայտարարութիւնը. «Մնուողով հայ եմ սակայն...», եւայլն:

Նենգափոխութիւններու, այլասերումներու եւ ուրացումներու դէմ մխիթարական են Դուկասեանի, Մնացականեանի, Յովհաննիսեանի ու Նազուկեանի ծառայումները: Այդպէս է, պէտք է ըլլայ հայ մարդը: Ան չի կըրնար հանդուրժել Բունիաթովի մը զառանցանքը եւ ուսացման ճամբուն վերայ թոյլ տուած Յարութիւնեանի ու Խաչատուրեանի կտրոյթները, առաջինին անփութութիւնը, երկրորդին՝ փութկոտութիւնը:

СОВЕТСКАЯ РОССИЯ

Арам Хачатурян

ЧТО ЗНАЧИТ БЫТЬ СОВРЕМЕННЫМ КОМПОЗИТОРОМ

Араму Ильичу Хачатуряну — выдающемуся советскому композитору, лауреату Ленинской премии, народному артисту СССР сегодня исполняется семьдесят лет. Его симфонические произведения и балеты «Спартак», «Гаянэ» давно известны мировому зрителю. За выдающиеся заслуги в развитии советского музыкального искусства Араму Ильичу Хачатуряну присвоено высокое звание Героя Социалистического Труда.

О тайнах творчества, о композиторской лаборатории, о человеческих приключениях и интересах мы вели разговор с Арамом Ильичем.

МОЙ ГЕРОЙ — СПАРТАК

— Арам Ильич, с какого возраста вы питаете интерес к музыке?

— Интерес этот возник у меня очень рано. Еще в раннем детстве я по слуху подбирал мелодии, импровизировал и вытаскивал даже что-то сочинять сам. Чаще всего в этом случае принято говорить о благотворном влиянии семьи, музыкальном окружении. Однако о моей семье этого сказать нельзя. Отец работал переплетчиком, а мать вела домашнее хозяйство. По происхождению я армянин, но родился в Грузии. А считаю себя русским, учился в русской школе и уже более полувек живу и работаю в Москве.

Но мой родителем был очень музыкальным. Дома на семейных вечерах часто звучала народная музыка, песни, танцы. Однако к моему увлечению

Будучи бессловесным, оно требовало от актера исключительного мастерства, чтобы зритель мог понять его, потому что в театре всего не скажешь.

Свой первый балет «Счастье» я написал к декаде армянского искусства в Москве в 1939 году. За это произведение получил высшую награду — орден Ленина. Через некоторое время ленинградские артисты К. Державин и И. Анисимов предложили мне интересный сюжет. Новый балет я назвал «Гаянэ». Мне нравится это имя. В нем слышится музыка, она создается для меня желанием, внутренней красотой и силой.

Музыка балета — вещь очень сжатая и тонкая. Она должна быть весьма концентрированной, культурно-всезападной. О ней можно тоже сказать: нотам тесно, а мыслям

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ն Բ Ա Գ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Զ ՈՐ Ս Հ Ս Կ Ա Ն Ե Ր Ը

Պայմանականորեն պատմուածքի կամ նորավէպի նախահայրը կարելի է համարել իտալացի Զովանի Բոկաչիոյին (1313-1375), նկատի ունենալով նրա հարիւր պատմուածքների ժողովածուն կամ «Ինկամերոն»ը (1353) :

Առաջինը պայմանականորէն, որովհետեւ Բոկաչիոյի պատմուածքները կամ նորավէպերն արդի ճանաչողութեամբ լիարժէք գեղարուեստական ստեղծագործութիւններ չեն համարուում : Իրանք մանրավէպերի կամ անեկդոտների տպաւորութիւն են թողնում, քանի որ Բոկաչիոն լրիւ կերպով չի տուել իր գործող անձանց մտքակային ամբողջութիւնը : Նրա գործող անձիք մարդիկ են (կին թէ տղամարդ), որոնք առաջին հերթին լեցւած են մարմնական սիրոյ ցանկութեամբ

միայն : Մարդը Բոկաչիոյի ժոռ միայն մարմնական կամ նիւթական բաւականութեան յետեւից է : Բոկաչիոյի անձնական ցանկութեամբ, նրա գործող անձիք զուրկ են հսկանութիւնից, քանի որ այդ մեծ պրոպը անձնական փիլիսոփայութեամբ ցինիկ է եղել : Նա հեզմանքով է նայել մարդու վարք ու բարքի վրայ : Նա լիաթոք ծիծաղել է ի տես մարդու տարբի եւ անխղճորէն ծաղրել :

Բոկաչիոն իր հետեւորդներն ունեցաւ : Նրա պատմուածքները դեռ հրատարակուած են ու կարդացուած, բայց նրա հաստատած զպրոպը երոեք գեղարուեստական հատարելիութեան չհասաւ :

Պատմուածքը մանրավէպ կամ անեկդոտ չէ, ինչպէս որ ցանկացել է ցոյց տալ Բոկաչիոն :

Սակայն Բոկաչիոյի անունը յաւերժապէս պիտի մնայ Համաշխարհային գրականութեան պատմութեան մէջ : Նա առաջինն էր, որ քաջութիւն ունեցաւ

ՅԱՆՕԹ.— Այս գրութիւնն սերւագծային միակնարկ է միայն : Ս. Ս.

Հակառակ դնալու իր ժամանակներին միտաբե ևւ այլարանական գրականութեան տիրապետող ոգուն: Նա զեղարւեստական գրականութեանը Հոգեդէն մարմին աուեց եւ զրեց արեւի տակ, ցոյց տալով մարդկային կոշտ ու մարմնական ցանկութիւնները: Բոկաշիոն Հակառոմանտիք էր:

*

Բոկաշիոյից յետոյ, մինչեւ տասնըիններորդ դարը պատմուածքը իրրեւ զեղարուեստական արձակի մի ձեւ ծագկում շունեցաւ, որովհետեւ այդ դարերում գրողները զերադասում էին թատերգութիւններ ևւ վէպեր գրել:

Տասնըիններորդ դարի առաջին կէսում իրրեւ պատմուածքագիր երեւան եկաւ ամերիկացի վաղամեռ, տարարախտ եւ հանճարեղ Էլզպար Ալան Պոն (1809-1849):

Էլզպար Ալան Պո պատմուածքագիր էր, բանաստեղծ ևւ գրաբնադատ: Միջազգային գրականութեան պատմութեան մէջ նա յայտնի է իր դոթական պատմուածքներով, որոնք լեցուն են խորհրդաւորութեամբ ևւ սարսափով: Սակայն Պոն առաջինն էր, որ գրեց պատմուածքի տեսութիւնը: Նա զէմ էր բարոյախօսութեանը զեղարուեստական գրականութեան մէջ, ևւ պատմուածք գերադասում էր վէպից: Նա սահմանեց պատմուածքի ծաւալը, այն է՝ մէկ նստելով ընթերցանալիս, ևւ առաջարկեց պատմուածքի բոլոր բաղկացուցիչ տարրերի միաձուլում: Պոն մեծ ազդեցութիւն է ունեցել միջազգային հանրահռչակ գրողների, որոնց թուում նաեւ Դոստոյեւսկու վրայ: Շատ յայտնի է նրա «Ոսկեայ մլուխ» խորագիր կրող պատմուածքը, ևւ ուրիշ շատերը: Էլզպար Ալան Պոն անհանդիստ հոգի էր: Օրինակ, մինչեւ այժմ էլ յայտնի չէ, թէ Ալան Պոն ինչ է արել եւ ուր է անցկացրել ամբողջ 1832 թիւը: Պոն իր ամբողջ կեանքն անցկացրել է կարիքի մէջ: Կարիքից, ցրտից ևւ թռքախտից

է մահացել նրա դեռահաս կիներ (անուանական միայն), որն իր մօրաբորջ աղջիկն էր: Ինքը՝ Պոն մահացել է ցարդ անյայտ պատճառներից: Սեպտեմբեր 27ին, նա դուրս է եկել Բիշոնդից ևւ Հոկտեմբեր 3ին գտնուել է Բալտիմորի մի գինետան մի խցիկում կիսամեռ վիճակում: Մահացել Հոկտեմբեր 4ին (1849), Բալտիմորի հիւանդանոցներից մէկում: Պոյի Հակառակորդները նրա մահը վերագրել են այլոյի լափաղանց գործածութեան:

*

Թերեւս Փրանսացի արձակագիր Գիդր Մօպսանը (1850-1893) միակ գրողն է, որն իր փարթամ տաղանդը ցուցադրեց չենց իր առաջին պատմուածքով, որին նա այլեւս չկարողացաւ գերազանցել:

Պօքը «Ճարպագուկտ» վերնագիրը կրող պատմուածքի մասին է:

Ճարպագունար, որ պ... մի աղջիկ է, Փրանսացի մի վառ հայրենասէր է, ևւ ընկերական: Այդ պատմուածքը ճարպագունարի մի քանի սրուայ կեանքի պատմութիւնն է, կրք նա մերժում է պառկել պրուսացի մի սպայի հետ, որովհետեւ նա թշնամի բանակի սպայ է: Սակայն նրան ստիպում են այդ անելու նրա հետ եղած կեղծ հայրենասէր այլ Փրանսացիներ ևւ յետոյ նրանից երես թեքում:

Այդ մի շնաշխարհիկ դործ է, որը պէտք է կարգայ ամէն մի սկոնակ հայ գրող:

Մօպսանը գրել է միայն տասներմէկ ասարի (1880-1890), որից յետոյ նա մահացել հոգեբուժական մի հիւանդանոցում (1893):

Այդ տասներմէկ ասարիների ընթացքում նա գրել է մօտ երեք հարիւր պատմուածք ևւ վեց վէպ:

Սակայն, այսօր մեզ գրադեցնողը նրա պատմուածքներն են, նրա ոճը ևւ նրա տեսութիւնը զեղարուեստական արձակի վերաբերեալ:

Մօպսանն առաջարկում էր դեղար-
ւետական արձակում ոչինչ չգրել, որը
չի կարող ներկայացնել իրական կեան-
քը: Նա առաջարկում էր գործածել պարզ
ու սովորական բառեր, բայց այնպիսի
բայեր եւ անականներ, որոնք համադա-
աստիանում են այն առարկային, որի
մասին խօսում է: Յետոյ նա հեղինակ-
ներին խորհուրդ էր տալիս առարկայա-
կան լինել եւ երբեք ջոյց չառնել իր ներ-
կայութիւնը ստեղծագործութիւնում:

Մօպսանն այսպէս ասուած անդէմ
գրող էր: Նա իր գործող անձանց նկա-
րագրում էր առանց զգացականութեան
կամ իսկալականացման: Նա հասար-
ուշագրութիւն էր յատկացնում թէ՛ գոր-
ծող անձանց եւ թէ՛ գործողութիւններին:
Նրա գործող անձինք ներկայանում են
գորչ ու յուսահատական միջավայրում:
Դրանք մեծ մասով ազա՛հ, աննպատակ ու
թշուառ կանայք եւ տղամարդիկ են,
կոշտ ու տառապող:

Մօպսանի լեզուն սեղմ է: Նա իր
գործող անձանց եւ միջավայրը նկարագ-
րում էր միտյն հիմնական գծերով, բայց
սուր, կենդանի եւ հիւթեղ գծերով: Նրա
նկարագրութիւններն անցնում են սահուն
եւ երբեք առարկութիւն չեն վերցնում:

Նրա լեզուն աղբիւրի ջրի պէս մճիտ
է, հասարակ եւ ընտանի:

Իրրեւ պատմութեան օրի-
նակ, ո՛ր միայն Փրանսական գրականու-
թեան մէջ, այլեւ համախարհային՝ նրա
«Ջարդը» անդուգական է:

Արեւմուտքում գրական շատ տեսա-
բաններ կապ են տեսնում ռուս գրող Ան-
տոն Չեխովի (1860-1904) եւ Մօպսանի
միջև: Խօսքն անշուշտ, գրելու մեթոդն է
մերթնում: Այլ կերպ, Մօպսան շօ-
շափել է մեծ մասով մարմնական սիրոյ
թեմաներ, Չեխովը շատ սակաւ է անդ-
րադարձել այդ նիւթին: Սակայն, եթէ
Մօպսանը նուազ ուշագրութիւն է
դարձրել գործողութիւններին, Չեխովն
ամենևին չի դարձրել: Այդտեղից էլ

սկսում է պատմութեան թեման չե-
տովեան դպրոցը, որը հիացրել է Արեւ-
մուտքին եւ որի շուրջը բազում յօդ-
ածներ եւ ուսումնասիրութիւններ են
լոյս տեսել:

Նախադասական ռուս գրողնե-
րը, որ ստեղծել են մարդասիրական եւ
բարոյական օբանչիլի մի հարուստ գրա-
կանութիւն, ունէին այսպէս կոշուղ ի-
րենց ռուսարհահայեացքները: Չեխովն
մեղադրում են, որ նա զուրկ է եղել
աշխարհահայեացքից, որ ճիշդ չէ: Չե-
խովը գրել է Ալեքսանդր Երրորդ եւ Նի-
կոլա Երկրորդ յետադիմական եւ բռնա-
կալական ցարերի թալաւորութիւններ
ժամանակաշրջանում, երբ Ռուսաստա-
նում հասարակական կեանքը լճացած էր
եւ յառաջգիծութիւն չկար: Մտաւորա-
կանութիւնը յոռետես էր, իսկ ընդհա-
նուր կեանքն ընթանում էր յուսահատու-
թեամբ ներծուծ մի մթնոլորտում: Չե-
խովը հենց այդ կեանքն է նկարագրել:
Նրա գործող անձինք տխուր մարդիկ են,
կեանքի ծանր պայմաններից ճնշուած,
յոզնած, մոռնաբացած եւ անտարբեր
ամէն ինչի նկատմամբ: Չեխովն ուրախ
տիպարներ չունի: Կարգալով նրա «Իլլու-
զացիները», «Ջարում» եւ «Հիւսանդա-
սեմնակ համար վեց» պատմութեանը
եւ ուրիշները, ընթերցողը նկատում է,
որ Չեխովն աշխարհահայեացք ունի, աբ-
խուր ու վշտոտ մի աշխարհահայեացք:

Անշուշտ, Չեխովը գրականութիւնը
ամոյիտն չի դարձրել եւ բացարձակօրէն
յեղափոխութիւն չի քարոզել, ինչպէս
հրոսպարակում տակառի վրայ բարձրա-
ցած մէկը, բայց նա զգացնել է տուել
յեղափոխութեան կամ հատարական
կարգերի բարեփոխութեան անհրաժեշ-
տութիւնը: Չեխովն այդ ասել է ներծոծ-
ւած դեղատուեստական խօսքին: Նա հա-
կացնել է տուել:

Անհունօրէն մեծ է Չեխովի տաղան-
ըը:

Ջովանի Բոկաչիօ, Էդգար Ալան Պօ,
Գի դը Մօպսան, Անտոն Չեխով, ահա

այն չորս հսկաները, այս սողների գրողի կարծիքով, որոնք հիմք են դրել պատմըւած ժամագրութեանը, եւ զարգացրել այն: Դրանցից իւրաքանչիւրը հիմք է դրել իր գրելածներն եւ իւրովի ներկայացրել իր ընտրած նիւթը: Սակայն այդ չորս հսկաների ստեղծագործութիւնների կենտրոնական եւ գլխաւոր առարկան հանդիսացել է մարդը: Երբեմն պարզամիտ, երբեմն ծածկամիտ եւ ընդհանրապէս հազար ու մէկ բարգուժիւններ պարունակող մարդկային հոգին:

Այդ չորս գրողներն արել են իրենց կարելին, մեղ իրենց միլիոնաւոր-միլիոնաւոր ընթերցողներին, ներկայացնելու համար կենդանի մարդն իր բոլոր ձրգտումներով, ցանկութիւններով եւ մտածումներով: Եւ որովհետեւ մարդը երբեք չի փոխուում կամ համարեա՛ թէ չի փոխուում, ապա նրանց ստեղծած տիպարները, որոնք ապրել են երէկ, ապրում են այսօր եւ պիտի ապրեն վաղը:

Բոկիաշիոյից բացի, մնացած երեք գրողները մեռան շատ երիտասարդ տարիքում եւ ողբերգական պայմաններում: Էդգար Ալան Պո մեռաւ, երբ քստասուն տարեկան էր միայն:

Մօլանտը մեռաւ, երբ քստասուն երեք տարեկան էր: Մեռաւ հոգեբուժական մի հիւանդանոցում, ուր նա պահուում էր նրա կեանքի վերջին երեք տարիներին: Մինչեւ այդ տարիները, Մօլանտն արդէն իր գրութեանը ողջունել էր ցոյց տալ հոգեմոլորումներ:

Անտոն Չեխով շորտ տարի աւելի է ապրել, քան Պոն եւ մէկ տարի աւելի, քան Մօլանտը: Նա մահացել է, երբ քստասունը չորս տարեկան էր, եւ մահացել է թոքախտից:

Միլիոնաւոր - միլիոնաւոր մարդիկ զանազան լեզուներով կարդացել են նրանց գործերը, հիացել նրանց արուեստով եւ զարգացրել իրենց միտքը մարդանաչառութեամբ եւ ինքնաճանաչումով: Եւ գեթ միլիոնաւոր ուրիշներ պիտի անեն նոյնը:

Ճիշդ է, գրականութիւնը ստեղծուում է ստոպանքով, բայց իր նշանակութեամբ այն արդարացնում է այդ ստոպանքը:

Գրականութիւնը չի մոռացուում եւ չի կորչում: Եւ, ընդհանրապէս, արուեստը միշտ էլ յաղթական է մահուան նրկամամբ:

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ



Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ե Ա Ն Ա Ն Մ Ի Զ Ա Կ Ա Ն
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

VI

Իւրաքանչիւր գրականութիւն այս կամ այն համեմատութեամբ կապուած է իրեն ծնունդ տուող միջավայրին, որ իր իւրայատուկ դրոշմով կ'անջատէ այդ գրականութիւնը մշակութի ընդհանուր դիմադիծէն, որով եւ կը բանայ տարբեր հորիզոններ, կը թափանցէ նոր կացութիւններու մութ ու անակնկալ ոլորտները ու կը դառնայ իր գծամանակի շունչը»:

Այս տեսանկիւնէն դիտած, պատմական անակնկալ վերիվայրումին զուգրեթաց առաջ կու գայ նոր գրականութիւն մը: Սակայն, այդ նոր արժէքը այն ատեն միայն, երբ կը յաջողի ըլլալ վկայադիրը արմատական բարեշրջութեան մը: Աշխարհաբնկալման, մտածելակերպի եւ կրօնարկերային փոփոխութեան իբր արդիւնք՝ գրականութիւնը ինքզինք կը գտնէ զէմ յանդիման անսպասելի լինելու քննման մը: Առօրեան, անծանօթ ճշմարտութիւնները, անոր անդրադարձներն ու ցնցումները կը սնուցանեն կեանքըն ու գրականութիւնը, որ այրելով դրողը՝ կը բոցարձակի առաւել, կը հասնի անծանօթին ոլորտները ու կ'ըլլայ ստեղծագործական ա'յն շարժումը, որ կ'անցնի գծամանակի շունչէն անդին, կը լուծուի միջին եւ կ'ըլլայ բոլոր ժամանակներու շունչը:

Մահմետական կրօնքէն առաջ մշակուող հեթանոսական բանաստեղծութիւնը բախեցաւ նման հրամայականի մը եւ նոր կրօնքին երեւումէն ետք դար մը եւս պահելէ յետոյ իր նկարագիրը, ճիշդ դարու կիտուն, Ապպասական հարստութեան հետ ծնունդ առաւ նոր բանաստեղծութիւն մը, որ իր արժատները երկարեց ընկերային, փիլիսոփայական, կրօնական նոր ենթահողի մը ծալքերն ի վար:

Պալիֆա Հարուն էլ Ռաշիտի հետ սկսող արաբական բանաստեղծութեան ոսկեդարը վերջ դտաւ մեծ իմաստասէր-բանաստեղծ Ապու Ալա էլ Մաարրիի մահով (1058): Այս ժամանակաշրջանին երեւան եկաւ բանաստեղծներու հոյլ մը, որ անտեսեց մինչ այդ տիրող բանաստեղծական այն սկզբունքը, ըստ որում՝ իրաւ բանաստեղծը ան է, որ կը յաջողի միաձուլել իրմէ առաջ գոյութիւն ունեցած բանաստեղծական հարստութեան այլազան նմոյշները եւ ստեղծել զբալասամ մը, որ կը կազմուի մէկէ անկի քայասան-

ներու խառնուրդով», ինչպէս կը սահմանէ այդ շրջանի գրականագէտներէն Ըսն Քապաթապա էլ Ալաուի:

Նախորդները համադրելու առաջադրանքով երկնուող բանաստեղծութիւնը մերժող դէմքերը ենթարկուեցան սուր քննադատութիւններու: Այսպէս՝ բրանաստեղծութիւնը չի նմանիր նախորդներու բանաստեղծութիւններուն եւ ո՛չ ալ մնամ է փոխաբերութիւն կառուցելու անոնց սկզբունքներուն» նախագոտութիւններով՝ Իսհաք էլ Մուսուլի պիտի թափէր իր գայրոյթը Ապու Նաուասի առիթով, եւ աւելի առաջ երթալով պիտի գոչէր Ապու Քամամաթի երեսն ի վեր՝ «ն՛վ երիտասարդ, որքա՛ն յաւակնուտ ես անձիգ վրայ յեմելուդ մէջ»... եւ այլն:

Օրինակ մը եւս տալու համար այս հակամարտութիւններէն՝ կ'արտադրենք արտաքական գրականութեան առաջին քննադատներէն համարուող և Նոյն ատեն հմուտ լեզուարան Ըսն էլ Արապիի հետեւալ բանածեւումը.

«Այս նարարներուն բանաստեղծութիւնները մնամ են ռեալիստի, գայն կը հոտուրտա մէկ օր եւ յաջորդ օր կը նետես, մինչդէս էինքում էքրթուածները մնամ են բալասանի ու միւռննի, որոնց բայրը ամէն օր տւելի եւ ւելի կը ծաւալի»:

Ճշմարտութիւն է, որ մահմեական կրօնը արար ցեղախուժբերուն համար հանդիսացաւ ժողովուրդէն ազդ կերտող եւ պատմական ու քաղաքակրթական նուաճումներ արձանագրելու պատճառ հանդիսացող ուժը:

Ճշմարտութիւն է Նոյնպէս, որ մահմեական կրօնը արար ցեղախուժբերուն նայուածքները հետացուց հուրին, կուռքին ու բնութեան աստուածային դիմագիծէն եւ անոր փոխարէն անոնց առջեւ բացաւ երկնային դերադոյն ուժին անաւարտ հորիզոնները, սակայն Ճշմարտութիւն է նաեւ, որ մահմեական կրօնի մղիչ ուժով դարգացող քաղաքակրթութիւնը եւ անկէ մարմին անոնց քաղաքը (իր պալատներով, արքունական կեանքով, դասաւորուած ապրելակերպով) կտրեց բանաստեղծին ու բնութեան միջեւ գոյութիւն ունեցող մտերմիկ այն կապը, որուն շնորհիւ հեթանոս բանաստեղծը կը թափանցէր ժողովային աշխարհէն ներս, կը տուայտէր, կը պայքարէր, կ'արիւնէր, կ'ըլլար:

Արարը, որ մինչ այդ վրանի մը տակ ու բաց, անծայրածիր հորիզոններու դիմաց ապրող ու յաջորդական տեղափոխութիւններու ենթակայ ազատ մարդ մըն էր, հետզհետէ սկսաւ կեդրոնանալ քաղաքին մէջ եւ ազատ կեանք վարող իր նախկին գիմագիծը տեղի տուաւ քաղաքացումին, դարձաւ դասաւորուած կեանքէ մը առաջնորդող ընկերային նոր տիպար մը, որ իր բարոյութիւ պահանջներուն զոհացում տալու համար սկսաւ հեւ ի հեւ վազել կեանքին ետեւէն:

Այս պայմաններուն տակ, բանաստեղծին համար ընկերութիւնը հանդիսացաւ երկնային անծանօթ ուժին եւ իր միջեւ արգելք հանդիսացող թանձրը տարը եւ բանաստեղծներուն ժօտ աւելի արժատացաւ այն հոգեբանութիւնը, թէ հեղձուցիչ է կեանքը, եւ մենք, Ապու Քամամաթի բանաստեղծական բացատրութեամբ՝ «չրջապատուած ենք մարդկային շնչող դիակներով»:

«Մենք օտարականներ ենք» ի հոգեբանութեան ահաւոր ժանիքներուն մէջ բզկտուող բանաստեղծները կեդրոնացան անհատական ուժին վրայ, մերժեցին աւանդական պարագրանքները եւ արուեստագէտին անկախութիւնը հռչակելով, մէկդի շարտեցին բանաստեղծութեան բարոյախօսական, նկարագրողական, մարդոց առօրեայ պահանջներուն զոհացում տալու ձգտող սկզբունքները: Այնուհետեւ, անոնք սուղուցան իրենց ներաշխարհին բարդ

ծախքերուն մէջ ու դան զրօնեւորեցին արտասովոր պատկերներով: Այլ խօսքով՝ բանաստեղծութիւնը իրենց համար եղաւ օ՛րն գործող ուժը, որ կրնար փանդել իրենց եւ ոչ-երկրային ուժին միջև կանգնած պարխազը:

VII

Ապու Քամմամ, Ապու Նաուաս, էլ Մութէնէպպի, Ըպն էլ Բուսի եւ Ապու Ալա էլ Մաարբի, որոնք արարական բանաստեղծութեան զապաթները կը համարուին, նոր ձայներով, պատկերներով, փոխաբերութիւններով ու հակադրութիւններով արարական դրականութեան բերին երազային այնպիսի հարստութիւն մը, որ ո՛չ միայն կեանքին զերին շեղաւ, այլեւ սերտ կեանքը, զժուար բայց աներեւակայելի անակնկալներուն բարեբար կենդանութեամբ:

Իր «Յառաջարան արարական բանաստեղծութեան» հատորին մէջ, այս մասին խօսելով՝ Ատոնիս կը կատարէ հետեւեալ սահմանումը.

«Այս բանաստեղծութեան մէջ կեանքը յառնուող մըն է՝ քաղկացած երագէ, մտածումէ, շրջապատող աշխարհէն, եւ նյք բանաստեղծները ճոյն իսկ կը նկարագրեն բնութիւնը, կը գտնեն գայն, կը մարդացնեն, ու մարդէն եւ մարդուն ստուերներէն գառ սչինչ կը տեսնեն անոր մէջ:

«Օրինակ, Ապու Նաուասի մտ գինին ազդելով է փոփոխութեանց, որ կը հագնի բանաստեղծին երեւակայութեան, տեմպերում, երագներուն եւ մարդկային սխալակներուն ամբողջական դիմագիծը»:

Կամ բանաստեղծ Ապու Նաուասի ջերթուածներէն զազուած նախադասութիւններով՝

«Գինին կանթեղն է եւ լոյսը կանթեղին, ան լեզուն է ստափն, ժամանակն է ան անմահ արեւային խնձոյճին, որ գիշերը չի ճանչնար, եւ քաժակին մէջ գաղտնի աստղերն իրենց վնիւս լոյսը կը պարպեն եւ ձեռքերը, քրտնէ անոնց կը կարկտին՝ աշտանակներն են բաժակին, ու գինիով, լոկ գինիով գիշերները ցերեկի պէս կը տեսնենք...»

Գիշերէն, մեծութեան անսպասէն ձերբազատուելու համար՝ Ապու Նաուաս կը դառնայ մեծ մեղքերուն ջերթոյր: Արուսիան բանաստեղծութեան Պօտէրը համարուող այս բանաստեղծը ո՛չ միայն բանաստեղծութիւնը ազատաբեց իր ընկալեալ մեքէն, բան մը, որ ըրաւ Ապու Քամմամը, այլեւ ազատաբեց ընթացիկ բովանդակութենէն: Մայրայեղ մեղանշումներու զժոխքին եւ կախարդական ներաշխարհի մը միջև անզուար տարբերող ճամբորդն է Ապու Նաուաս: Տարօրինակ պահերու բանաստեղծն է ան, եւ իր ջերթուածներուն մէջ կ'երեւան թաւ հեշտանքն ու սեւային անսանձ արտրժակներ: Սեռապաշտութիւնը իր մօտ ազատութեան բանալին է, մարդկային խմացական եւ ստեղծագործական կարողութիւններուն միակ ուղին եւ մղիչ ուժը:

Այս է պատճառը, որ Ապու Նաուասի ջերթուածներուն մէջ՝ առկա է մշուշաւոր են մեծ եւ արտասովոր մեղքերու թանձրագոյն հեշտանքով: Քաղաքակրթութեան իբր արդիւնք բանա-կեանքի նեղ շրջանակէն դուրս գալու համար, մեղքը հական անհրաժեշտութիւն մըն էր Ապու Նաուասի տրամա-նութեամբ, որովհետեւ մեղքի ճամբով միայն ջերթոյր կը հասնէր ամբողջական ազատութեան, այլ խօսքով՝ ազատութեան սեմպուն էր մեղքը, կամ Ատոնիսի բացատրութեամբ՝ «առօրեայէն եւ իր մեղքի լուծէն ձերբազատուելու, ինչպէս նաեւ ազատութեան ու փոխաբերական միակ յորիւրորդը»:

Այսպէս՝

«Իր բանաստեղծութիւնը ճամբորդութիւն մըն է՝ իրագործելու համար խոր երազը, այսինքն՝ նոր աշխարհ մը: Ապու Նաուասի մօտ բանաստեղծութիւնը կը քեղազրէ մարդկային ներաշխարհի ամէնէն հեռուստը կէտերուն ճամբորդելու անհրաժեշտ հրամայականը, ինչպէս նաեւ հոգեկան հագուստ-գիւտ պահերու մէջ ապրելու ծարուր, այնպիսի՝ պահերու, ուր իրարու կը հանդիպին չոր ասօրեան ու յստիտեանկանութիւնը, օտեմանեմն ու անստեմն-մանը, ուր տրամաբանական ու ջղային դրութիւնները չեն զանազանուիր իրարմէ եւ քերթուածը ստեղծող խորհանգիւրը կը դառնայ ամէնէն անվիճելի ճշմարտութիւնը:

«Ապու Նաուասի բանաստեղծութիւնը սրբազան առաքելութիւն մը ունի: Արդարեւ, տարականն մեղքերու գծով է միայն, որ քերթուածը կ'իրագործէ իր առաքելութիւնը՝ կայտարդութիւնը, որուն շնորհիւ աշխարհը իր բոլոր արտայայտութիւններով՝ (ամպերով, կայծակներով, ջրհեղեղով, քաղաքով եւ քաղաքին մութ ու լայն հոգեվիճակներով) կը վերածուի սիրոյ, ազատութեան, ու բանաստեղծին շուրջ սշինչ կը մնայ բացի սէրէն եւ սիրոյ համիներէն»

Մագուսոյ պարսիկ Ապու Նաուասի գրականութիւնը իր գեղիս կեանքին արտացոլումն է: Սանճարձակ խառնուածքով բանաստեղծ՝ ան ներկայ եղաւ արքունիքի եւ նոյնիսկ ամէնէն աննշար բնակչարտններուն մէջ սարքուող գինարբութիւն սեղաններուն, մասնակցեցաւ հեշտանքի ամէնէն ախտադին հաւաքոյթներուն, բայց այս բոլորէն շահեցաւ իր գրականութիւնը:

Արդարեւ, գինարբութիւն անվիճելի բանաստեղծն է Ապու Նաուաս, որ դերագանացիք թէ՛ չին եւ թէ նոր բոլոր գիներդակները, որովհետեւ իրեն հասարակ զինին խմիչք մը չէր միայն, այլ իր էութիւնը, ազատութեան երկունքը, արուեստագետին գերմարդացումը իրականացնող սրբազան շաղախ մը:

Գիներգութեան ուղիներով Ապու Նաուաս կը մտնէ միջազգային գրականութեան անդամանէն ներս, ուր իր կողքին պիտի դար կանգնիլ դարձեալ պարսիկ բանաստեղծ մը՝ Օմար Խայեամ:

762ին, Պարսկաստանի Խուզեստան նահանգի պիւլիերէն մէկուն մէջ ծնած Ապու Նաուասի վառարկը, 1123ին ծնած Օմար Խայեամի շնորհիւ հասաւ իր կատարելագործութեան ու գիներգութիւնը սուսցաւ աւելի խորախորհուրդ իմաստներ:

VIII

915ին, Իրաքի Բուճէ քաղաքին Քինտի թաղին մէջ լոյս աշխարհ կու գայ Ապու Թալէպ Ահմէտ Պուն էլ Հուսէյն էլ Մութէնէպպի Եմէնի, որ հասագային գրականութեան ներս մուտք գործեց էլ Մութէնէպպի գրչաւնումով, եւ դարձաւ հոմանիշը անհանդուրժող, փառամոլ, ինքներգուկ, դրժուարամերձ ու հոգեկան քառասյին մթնոլորտի ակերն ի վեր երթեւեկող արկածախնդիր բանաստեղծներուն: Յաւիտենական ճամբորդն է էլ Մութէնէպպի, ինչպէս եղաւ իր կեանքը: Փառամոլ ու բախտախնդիր բանաստեղծը, թափառականի ցուպը ձեռին՝ իր անյայ փառամոլութեան պոհացում տալու համար թափառեցաւ պալատէ պալատ:

Գերմարդացումի կրքոտ այս սիրահարը, պալատէ պալատ ու Պաղատտէն մինչեւ Դամասկոս, եւ դեռ մինչեւ Նեղոսի ափերը կատարած թափառումներուն պծով ուղիքեցաւ ստեղծագործ մարդուն յատուկ բարդ հոգեվիճակներ:

Ընկերութենէն անխառնելու ներքին մարմալը էլ Մութէնէպպիի մօտ կը ստանայ աւելի ժեծ հեռաւորութիւններ: Ան ո՛չ միայն զուրա կու գայ ընկերութենէն, այլեւ կը պարտադրէ ինքզինք, եւ իր մատանը կը դասնայ մարդուն անասման կարելիութիւններուն վաւերապիտի՛ յի կուտ, իրապաշտ, Հոստորական ճտախոսութիւններով եւ մարդորէտաւոր ինքնավստահ պատու պաճներով:

Իրեն համար արկածախնդրութիւնը սպրեւու ձեւ մըն է, որովհետեւ անիկա ճակատադիքն է ստեղծագործ բոլոր կարողութիւններուն: Էլ Մութէնէպպի հեշտանքի ալիքներուն մէջ լող եկող կրաւորական մենակեացը չէ, ինչպէս է պարտական Ապու Նատուսի, ընդհակառակն, ինք զայրացկոտ ու պայրարող մենակեացն է, յախուռն ասպետ մը: Իր դրականութիւնը աշխարհն ու կեանքը գիմակայելու ոճ մըն է, աշխարհին հետ խաղալու եւ նուաճուած սահմաններէն անդին անցնելու վճռակամութիւն մը:

Ինքզինք էլ Մութէնէպպի (մարդարէացողը) կուած ինքնավստահ այս քերթողը, շնորհիւ իր տաղանդին կրցաւ ըլլալ մարդուն երկնային կարողութիւնները հաստատող մարդարէն: Փարթամ ու հոստորական նախադասութիւններով, արադրեթաց ու սանձարձակ պետի մը նման վազող իր քերթըւածները երկինքն ի վեր բարձրացող ջրվէժներ են, որոնք կը ձգտին անցնիլ ժամանակի ու վայրի սահմանները եւ հոսիլ ապագայի բացերուն: Հոս բառերը տաք ու կրքոտ ձեւով մը կը ձուլուին իրարու մէջ, կ'արիւնեն զիրար ու կը ստեղծեն բաժը երաժշտութիւն մը: Իւրաքանչիւր առդի հետ ընթերցողը կը զգայ, որ ահաւոր հրդեհումներու ենթակայ է քերթողին մարմինը, բայց սահմանում ու հանդիստ չճանչցող իր հողին կը թաւալի աւելի ուժականութեամբ, եւ կը թուի, որ մէկէ աւելի հողի ունի համակցասում ու տենչածք բանաստեղծը:

Էլ Մութէնէպպիին համար մարդէն ուժեղ, ի՛ մասնաւորի ստեղծագործ մարդէն գերիմեր ոչ մէկ երկրային ուժ գոյութիւն ունի, նոյնիսկ մահը կը մարդանայ, կը մերկանայ՝ բանաստեղծին հետ, կը ստրկանայ ձեւով մը, երբ կը հանդիպին իրարու: Աւ դեռ, այն մտերմութեամբ է միայն, որ կը զօտեպնդուին ներկան ու բացական, այսինքն՝ սահմանեալն ու անսահմանը, կեանքն ու Աստուածը, երկիրն ու երկինքը, արքութիւնն ու երջանկութիւնը կը հասունանան, կը պայծառանան, կ'իմաստասիրուին ու թեւածելու տենդով մրդկած բանաստեղծը կը սաւառնի անհունն ի վեր:

Այսպէս, ըստ Ատոնիսի-

«Մարդը էլ Մութէնէպպիի մօտ ալիք մըն է, որ ափ չաւնի: Մշտանորոգ շարժումն է ան: Յալիսեան ստեղծագործումը: Ի՛նքն է արար առաջին բանաստեղծը, որ կը փշրէ քաւարալման եւ համոզման շրջանակը, կ'ազատի շրջանակին խեղդիչ մթնոլորտէն, եւ այսպէսով, սահմանեալը կը վերածուի անսահմանութեան: Իր քերթումը շարժումի, տաքութեան, տենչանքի, սահմանեալէն անդին անցնելու ուժով է վաւերագրուած: Էլ Մութէնէպպի վեր բանաստեղծութեան յեղափոխութիւնը առաջնորդող առաջին պոէթն է: Մշտանորոգ եւ անկէզ հրդեհը: Աւ տակաւին, ի խորոց սրտէ պոէթն կացող մարդկային ջրհեղիկ մը, ուր մահը առաջին բանն է, որ կը մեռնի»:

Ու բանաստեղծը երգեց՝

«Մենք պատանգներն ենք մահուան, բայց պէտք է, որ չմտածենք շիրմին մասին»:

Մահուան առջեւ սարսափն ու ընկրկումը անհեթեթ եւ անբնական համարող բանաստեղծը ո՛չ միայն հաւաստին արժէք մը չստուաւ, այլեւ հեղինկ

ու նուաստացուց կրօնական սկզբունքները, ինչպէս խորաննց մարդու հոգին, որ բոտ քերթողին՝ «զիշակերի բնոյթ ունի»:

IX

973ին, էլ Մութէնէպպիի մահէն 8 տարի հոտք, մաււորական ընտանիքի մէջ ծնաւ Ապու էլ Ալա էլ Մաարբի: Մարդոց բարոյական անկաշկանդ կեանքը եւ ընկերութեան օրբստօրէ գէպի վատթարացում առաջացող անկումը տեսնելով, բարեպաշտ հայրը զինք կոչեց Ապու էլ Ալա, որ կը նշանակէ հայր բարձրութեան: Բայց բարձրութեան մէջ գտնուող հօր, այսինքն՝ Աստուծոյ խաղող ափերուն հասնելու բախտին շարժանացաւ նորածին մանուկը: Ընդհակառակն, տնոր քաժին ինկաւ դառնութեան թանձր ու զորշ կաթսային մէջ եռեւեփող կեանք մը:

Այսպէս՝

Ձոր տարեկանին՝ ծաղկախոտ ու կուրութիւն: Տառնչոտին՝ կորսնցուց հայրը: Հօրը մահէն հոտք՝ չքաւորութիւն: Քայքայուած մարմին: Պատանի՝ վատաբարոյ մարդոց քոր անդամութիւններ, կոյր աշխարհ, կոյր ու զորշ ճակատազիր, անհարազատ, տաղտկալի ամառութիւն մը չորս դին, ապերախտ կեանքի օձապտոյտ ընթացք, յարատեւ մղձաւանջ եւ քմահաճօրէն գործող սեւ նակատազիր:

Պահ մը երեւակայեցէք կոյր քերթողը ու քալեցէք կոյր, յոռի ընկերութեան մը տաժուկ ու լպրծուն փողոցներէն, էջերէն, պողոտաներէն քաղաքէ քաղաք, մատենէ մատան, կրօնքէ կրօնք: Աերտեցէք բոլոր փիլիսոփայութիւններն ու կրօնքները՝ Պրատոնէն մինչեւ Աւետարան, սուրբ հայրերու թուղթերէն մինչեւ պուտոտայականութիւն, ասորական մշակոյթէն մինչեւ գրադարտականութիւն, մահմետական աղանդներէն մինչեւ Նիկիոյ Հանդանակ եւ, էթէ կրնաք, սառն արամարանութեամբ դիտեցէք հետզհետէ խաւարն ի վար դահաճիժող ընկերութիւնը:

Իրը եղան մեծ խենթութիւններու ընդարձակ արամները: Ապրեցաւ սուրբէ մը աւելի մաքրածազուր կեանք մը, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար, էթէ բռնիք՝ ապրեցաւ տառապանքը: Քննադատեց մարդկային բոլոր նենգութիւնները, ախտազին հիւանդութիւններն ու կրօնաւորներուն խաւարամտութիւնները:

Լաթաքիոյ յունական վանքերէն մէկուն մէջ քրիստոնէութիւնը սերտած շրջանին, էլ Մաարբի տկանատես ու մասնակից կ'ըլլայ Լաթաքիոյ ողջ խոռվքներուն, կ'ընդվզի, կը փշրուի ինքն իր մէջ ու կը ստիպուի հեռանալ քաղաքէն: Որովհետեւ, ճշմարտութեան ծարաւով իր կեանքը լուսազրիւրէ լուսազրիւր վազցուցած Ապու էլ Ալա էլ Մաարբի այդ մասին պոռթկացած էր:

«Լաթաքիա խոռվարան մըն է:

«Մուսամմէտի եւ Իսայի միջեւ գծուութիւն կայ: Արեղան տիւլպէյէ(*) շինուած փայտը կը սլաշտէ, մոլլամ միմարէիմ գազաթը բարձրամալով կը բարբառնի, իրաւամշիւրը իմէզիմէ կը ներբողէ, չգիտցանմ, թէ որո՛ւմ հաւատանմ: Երանի՛ր՝ ճշմարտութեան վերահասու եղողներուն»:

Մօրը մահով կը սկսի բանաստեղծին գործունէութեան երկրորդ շրջանը:

(*) Տեւոյժ — Փայտի տեսակ: Ավետարանները յիշեալ փայտով շինուած խաչիմ մասնն է:

Բարեպաշտ խոսնուածք՝ հետզհետէ կը մթազնի հոգին: Գորշ է ամէն
բան: Երկինքը կոյր՝ իր աշքին պէս, իսկ «սուրբերը կեղծաւորներ են պար-
գապէս»:

Կեանքը...
«Մահուան ամպն է»:

Իր բառերն են, որոնք միայն ի՛րը կրնան ըլլալ: Եւ դաշնակցած մահ-
ւան շէտ՝ բառերը հայածեցին քերթաղբ: Ուրեմն, ինչո՞ւ մոռնալ կամ անտե-
սել մահը, երբ ներկայ է ամէն վայրկեան, ամէն շունչի մէջ, ամէն թուփի
տակ:

Այս հարցականին ամբողջական կերպով պատասխանելու փորձն է էլ
Մտարբիի գրականութիւնը: Մահուան եւ անմահութեան միջեւ միեմարանու-
թիւն մը՝ կրթող, անրհնէլի, խոհական:

Բազմադասական մը կատարելով Ապու Նաուասի եւ Ապու էլ Ալալի մի-
ջեւ, կը ստանանք այն պատկերը, որ Ապու Նաուաս չհասաւ ողբերգութեան
հորիզոններուն, մնաց մեղքին ու հոգիին միջեւ տեղի ունեցող տիպազին
սահմաններուն մէջ, այլ խօսքով՝ ներկայ-հետանքին եւ ապագայ-փրկու-
թեան միջեւ: Մինչդեռ, երկրորդը պարագրիկեց սղբերգութեան հորիզոննե-
րը, անցաւ կեանքէն իսկ անդին, որովհետեւ էլ Մտարբիի համար մահը իս-
կական ու ճշմարտագոյն կեանքին դուռն է, սկիզբը: Այն՝ որ Ապու Նաուասի
մօտ այսօր է (ներկայ), մեծ իմաստաւէրին համար վաղն է (ապագայ), որ
կու գայ մահուան հետ, այս իսկ պատճառով, էլ Մտարբի իր ներաշխարհն
ու հոգին մերածեց դժոխքի, ի՛նչու մինչեւ անոր ամենախորունկ կէտերը,
սեռակցեցաւ մահուան հետ, դարձաւ անոր գրուցակիցը:

«Մարմինը իմ կտոր մըն է լոկ Քուրշի, որ անդադար հողին, հողին կը
կարուի,
Ո՛վ աշխարհներ կարող դերձակ, անապարտ եւ իմ կարը աւարտէ...»

Հոս այլեւս մահը անազու աւարտ մը չէ, մարդուն մարմինը քուրշի
կտոր մըն է, ա՛յն ապակին, որ ջարդուփշուր ըլլայէ ետք՝ անգամ մըն ալ չի
ձուլուիր, իսկ մահը փրկութիւնն է, հաճոյք է եւ յարաւթիւն, անմահութեան
խնձոյքը, բոլոր մամանակներէն վեր գոնուող անսահմանեալը, միջք:

Ժ. դարուն, հնդկական իմաստասիրութենէն կատարուած թարգմա-
նութիւններուն ազդեցութիւնը ակներև է հոս: Վերի մէջընթաց արտայայ-
տութիւնն է հնդկական իմաստասիրութեան մէջ ծանօթ հոգեշրջութիւնը(*) և
հոգեփոխութիւնը(**) վարդապետութիւններուն:

Ըստ էլ Մտարբիի, հազուադէպ, զոր կը հաշնինք՝ պատանքն է մար-
դուն, բնակարանը գերկզմանն է, կեանքը՝ մահուան բանասրկութիւնը: Գե-
րեղմանը դուռն է կեանքին, յառաջարանը լինելու թեան, իսկ մահը ճշմար-

(*) Հոգեշրջութիւն (transmigration) — Այն ետևում է, որ մարդու մարմինն
մահէն ետք հոգին, որ անմահ է, կը փոխտ իր բնակարանը եւ կը հաստատուի նորածին մար-
դու մը, կենցաղի մը կամ բոյսի մը մէջ:

(**) Հոգեփոխութիւն (metempsychose) — Transmigrationի մէկ տարբերակն
է, որ նախորդէն կը զանազանի պատկի տարբերութեամբ մը: Մարդու մը փոփոխակա՛մ մա-
նէն ետք, հաս կոցի՞ն կը փոխտ իր բնակարանը եւ կը հաստատուի միա՛յն նորածին մարդու
մը մարմինն մէջ:

տապոյն կեանքն է: Պայծառ ու ջիւղ է Մահուան Արքայաւթիւնը^(*), մինչ կեանքը անդադար անկումն է, հիւանդութիւն մը, որուն միակ դեղը մահն է: Մահը տուն է հոգիին:

Ապու էլ Այա էլ Մարբէրի ինչին պատտիւանող գրողն է, իսկ ինչպէս Երկրորդական հարց մըն է իրեն համար: Աւելի՛ն. ան փրփրոտփայ մը չէ բառին ընթացիկ տուումով, այլ գիտնական մը, այս է պուշէ պատճառը, որ իր գրականութիւնը շունի Ապու Նաուստի, Ապու Քամմամի կամ էլ Մութէնէպպիի գրական ճոխութիւնը, անակնկալ պատկերներու բազմազանութիւնը, կուռ լեզուն եւ ոճի նոր նորերանկները:

«Թուզք փառքեան» եւ «Անիրաճեշտութիւններ» անուն իր հատորներուն խորքը, ինչպէս եւ տասնինիս կողմէն ունին ճանթէի «Աստուածային կատակերգութիւն» պոեմին հետ նմանողութեան մէկէ աւելի կէտեր: Պարագայ մը, որ քննութեան առանձին նիւթ է:

Իրողութիւն է, որ էլ Մարբէրին առաջ այդ ինչին սահմաններէն ներս մտած են նախորդները, Ապու Քամմամին սկսեալ մինչեւ էլ Մութէնէպպի: Ճշմարտութիւն է նաեւ, որ Ապու էլ Աթաշի եւ Ըպն Պապէք, որուն դիւանը ցարգ կը մտայ իր մազաղաթեայ միճակին մէջ՝ շօշափած են «կեանքը մահ է», «կեանքը քանտարկութիւնն է մահուան» կացութիւնները, սուգած են այս հողմմիճակով ուղիւնին մէջ, բայց ճշգրտեք անմիջապէս, որ էլ Մարբէրի սովորական լուրորդ մը չեղաւ, այլ եղաւ այն բացառիկ լուրորդը, որ իջաւ ուղիւնին մինչեւ ամէնէն խորունկ յատակը, տարսողնեց տիղմը, շօշափեց բոյսերը, բացաւ կուղպ ոտորէները, թափանցեց մանրամասնութիւններուն ու դարձաւ այդ բոլորը իր մէջ պարունակող անպարփակ պարունակեալը:

Ատոնիս արդարացի է, երբ կ'ըսէ.

«Ապու էլ Այան մեր բանաստեղծական մշակոյթին առաջին բնագոնակալ քանաստեղծն է, մայր-հողին զարնալու կարօտեալը: Հազը, այս տեսանկիւնէն դիտած՝ բացարձակն է, մահը. ոչնչացումը, յաւիտեանակամութիւնը, եւայլն...»:

«Ապու էլ Այան շունի մասնայատուկ ձե մը: Ան կը էրբէ բնագոնական հարցերը, կը խօսի անոնց մասին, կը քաղէ գաճնիք, որպէսզի հաստատուէ ու երկարացնէ բոլոր այն ճշմարտութիւնները, որոնցով կը գգայ, թէ կը լեցուին իր խոր եւ անաւարկելի համոզումները: Իր բանաստեղծութեան մէջ, ան կը խօսի այս հարցերուն մասին ինքնավստահ ու ճշմարտութեան ծանօթ մարդու շեշտով: Իր մօտ իմաստն ու խորհուրդը առաջնակարգ մտահոգութիւն է, եւ թերեւս առավել կարեւոր է բացատրել այն իրազուրթիւնը, որ ան չճգնեց գեղարուեստական այնպիսի ժառանգ մը, որուն կարելի չլիար աշակերտիլ, ինչպէս եղաւ, օրինակի համար, Ապու Քամմամի կամ Ապու

(*) Մահուան Արքայութիւն — Թ. Ս. Իյեքի «Քասարկ մարդիկը» մերթուածին հոգեշանակամ մթնոլորտը կ'առաջանայ հնդկական նոյն իմաստասիրութիւնէն: Բանաստեղծը հոն կը խօսի «Մահուան միւս Քաղաքութեան» մասին, կը հարցադրէ «Մահուան երազէ Արքայութիւնը»: Անձանօք աշխարհիմ հետ ծանօթամալու անանձ մարմար կ'ակնածէ նաեւ Իյեքի, որ, իր կարգին, յաւապէս ուսումնասիրած էր հնդկական եւ չինական մշակոյթն ու իմաստասիրութիւնը: Հանգիստութիւնը այնքան է: «Գեանքը շատ է երկար»: Հագնական տեղատուութիւններու եւ մակընթացութիւններու կ'ենթարկուի նաեւ մարդտեճեանայացման աշարտ տառապանքը իր կաշիի վրայ ապրած անգլիացի էրբազը, որ կը ցանկայ գտնուի զամբի նման, մինչեւ վերջական հանդիպումը Մահուան Արքայութեան Արքայութեան, այնքան: սուրբ միջնու մահ, որ վախճան մը չէ, այլ զատարկ մաքառց լինելութեան սկիզբը, նաեւ թանկան Արքայալոյսը:

Նաուսի պարագաներուն: Էլ Մաարրի միակ գիտնականն է, որ ո՛չ միայն կը գտնագանուի կանխող քանաստեղծներն, այլև իր ժամանակակիցներէն: Ապա էլ Ալան մարդաց մէջէն առանձինն քարձրացող երկնաչափ աշտարակ մըն է, որ կը տեսնուի բալար հարկաններէն ու կը փայլփլի անդադար...»:

Պատճառը այդ էր, որ մեծ իմաստասէրը թարգմանուեցաւ, ուսումնասիրուեցաւ, մեծարուեցաւ եւ արժանացաւ միջազգային պատուանդաններու: Մեր մամուլի էջերէն հայ ընթերցողն ալ, իր կարգին, մասնակցած է մեծ իմաստասէրին մտքի խնճոթին:

Այս ուզումներէն աւելի Տարաթորեանէի 1944ի Մարտ 3էն ուսուցչական շրջանակն ետքը թիւերուն մէջ, Ա. Լէյլանի ստորագրած է ուշադրաւ ուսումնասիրութիւն մը: Վերջերս լոյս տեսած տոգթ. Միսակ Վարժապետեանի «Ապա Այա էլ Մաարրի» հատորը յարգանքի գեղեցիկ ժեսթ մըն է, իսկ մեծանուն քննադատ, անկրկնելի Յ. Օլախանի «Ապալ Այա Մաարրի» անտիպ հատորը, որուն կարգ մը հատուածները բժշկական հոսիքը միայն ունեցած ենք, հեղեղային հանդիսարան մըն է: Կարելի չէ պահ մը կանգ չառնել: «Ապալ Այա Մաարրի» անտիպ հատորէն «Նայիրի» ամսագրի էջերուն մէջ լոյս տեսած այդ հատուածներուն առջեւ, ուր հայ դրահանութեան մեծ տեսանողը ո՛չ միայն թուղթին կը փոխանցէ գոյները, բոլորքը, հունչերը ու մասրացի բանաստեղծին ողջ աշխարհը, այլ կը դառնայ իմաստութեան հորիզոններն ի վեր թեւածող ա՛յն հրահալը, որուն թռիչքին հետ հորիզոնները կ'ընդհանուին իրարու, եւ մեղի այնպէս կը թուի, որ ներկայ կը գտնուինք իմացական չքեղ երգահանուէսի մը:

Հակառակ անոր, որ Ապա էլ Այա էլ Մաարրին ուսումնասիրող աշխատանք մը չէ այս յօդուածը, այսուհանդերձ պիտի ուզէինք մեր մեծ քննադատէն քանի մը հաստատումներ յանձնել ընթերցողին ուշադրութեան, արտական գրականութեան այս մեծ գէմքին մասին:

«Մահուան մէջ տուեալն եղած, աշխարհին մեծ վայելքներուն չափով մը գոցուած, անո՞ք հրքան մտքի նարագատ մեծութեան այլ քարձրացած են, Արեւիկի յուզումնաւոր քարձրումն մէջ պարզելով հարագաւ մեծածանոթիւնը: Ան, հանդարտ ու համակերպուց, մերժած է գործողութեամբ մը աչքերուն նոր իզած վարագոյրը վերցնելու, յայտարարելով վիրաբոյժին:»

«— Տեսայ աշխարհը ու իմ գգուանքը անկէ այնքան խորունկ է, որ պիտի չյօծարէի գայն տեսնել վերստին, ո՛չ մէկ գնով:

«Պաղտատէն, աս իւրթրամտէրն ու իմաստուն քերթողը ունի ուրիշ ալ ընկերներ, իրենց այնքան յստակ դժբախտութիւնը այսպէս քիւրագին երբանկութեան մը վերածելու մէջ սա հոգեկան արիւթիւնը վկայող: Բանին հօգր իշխանները, աշխարհի մը մէջ, ուր ակամքը զգայարաններէն գերազայնն էր նաւանարար, մինչ Արեւմուտի մէջ, մինչեւ մեր օրերը զգայարաններուն գերազանցութիւնը կը պատկանէր աչքերուն:

« — Հրա՛շքը:

« — Մի անապարտք:

« — Անկա մէկն է անսովոր այն տիպարներէն, որոնք Աստուծով իրբն ուղի ստացած են մեր գիտածէն տարբեր խելութեամբ մը ազդուած իրտ մը միտի, ճիւթի: Այդ բացառումով, այդ ցանցը հիւսուածներու, քու՛ք ըստք կտար բոլորներու գտած է գարմանայի ընկալչութիւն, ընդարձակման կարողութիւն:

«Հրա՛շքը Ապալ Այային:

« — Կը նետմ բառը,

«որ բախտն ալ չունի ամբողջութեամբ ժարդկայինով պայմանաւոր ըլլալու: Ու ինչպէս իր մտածողութիւնը — իր լայնագոյն մտայնութիւնը — օտար չէր մեր օրերուն, ուրախ եմ կարենալ յայտնելու, որ իր հրաշքն ալ կը շրջագծուի մեր օրերու կարելիութիւններով: Պահ մը մոռցէ՛ք ժԹ. դարս գիտական հարստութիւնները կոյրերուն, խուլներուն, համբերուն ուսում, ընթերցում մատակարարող: Ապու Ալան իր խօթութիւնները գիտցաւ վերածել արուեստի: Կեցէ՛ք միայն ու միայն իր *իմացականութեան տոչեւ*: Իսլամին այդ դարուն, բռնութեան, սկիզբարուն, անիկա ազատ մտածումին, ժողովրդավար սկզբունքներուն արի մունետիկն է: Առանց այլեւայլի: Ու ասիկա ինքնին:

« — գերագահնց հրաշքը:

«Ապուլ Ալայի *«Թուղթ քաւութեան»*ը, գրեթէ լայնախոհ մտածողութեան մը պատգամն է, քաղցր է հրեշտակը իրաւ, եիմա կ'ըսեն՝ աշխարհափառաբացի մարդու մը, երազմուտն, Պէյքընէն շատ առաջ, ու առաջ ալ Տանքէն ու Միլտոնէն: Անոր *Նամակահիթի* դարուն վրայ այնքան քանկ, անխախտ լայնի վկայութիւններով, գրեթէ արժանի է մօտիկը դրուելու մէկ կողմէն կիկերունի նամակներուն, ու միւս կողմէ՝ վալթերին, — երկու մեծ միսէր, այնուհետեւ մշակոյթէն թէեւ հեռու, բայց խորքին մէջ մէկ նկարագիրները խտագնող, բայց որոնց ներսը նոյն յատկութիւնը, տախտիւնը, ինչպէս իրաւ մարդկութիւնը իրարու կը հազորդութիւն մեծ բնականութեամբ մը:

«Ապուլ Ալան, ըսի անգամ մը, քիսելով հանդերձ իր ժամանակէն, գրտած է կերպը *անկէ անցնելու*: Նիքըլսըն *«Լուզումիայթ»*էն փոխադրած է անգլերէնի երեք հարիւր տակի բերքումներ (Studies in islamiq poetry, 1921), որոնք մեզ ո'չ միայն չեն նեղեր, այլեւ կը համակեն որոշ հանոյճով: Հպարտութիւն մըն էր հազար տարի առաջ մտածել

*Միակ կրօնն է կրօնքն այն
— Որ դուն ըլլաս արդար՝ հանդէպ
Բոլոր մարդոց:*
*Միքն է կրօնքն այն մարդերուն,
Որ կը ծագրեն արդարութիւնն:*

Բայց զայն գրե'լը: Ձեզի կը ձգեմ դատաստանը, դու՛ք, որ կը ճանչնա՛ք *խօֆիյան* ու իմամը:

«Ապուլ Ալան մարդն էր մեր օրերուն, առանց պատկանելու, արեան իր դրութեամբը, արեւմտեան բարեխառնութեան, բայց իր իմացականութեան որակովը անցնելով անլի անդին, քան մշակոյթը:

«Թեքեւս հոս է բանալիմ իր շահեկանութեան ու վարկին:

«Յետոյ, մոռնալու չէ՛ք, որ զգացումներու, երեսակայութեան գործուոր մը չէ անիկա: Անոր բերքումներէն մեր գտած յոյզը ուղեգային է բացարձակ ծեւով մը: Ու բարոյախօսութիւնը, անուագն իր արգելներուն շարանովը, մեզի կը բերէ ընկերութեան մը կերպարանքը:

«Ապուլ Ալան հազարդամն է արեւմտեան մշակոյթին»:

Մեծերու առանձնայատկութիւններէն զխառնարդոյնը, այլ մեծութիւններ ըստ արժանոյն մեծարելու կիրքն է անկասկած:

Հայ զբաղանութեան մեծ քուրճին «Ապուլ Ալա Մարի» մենազբուրթիւնը կրնայ լուսազոյն ապացոյցը հանդիսանալ յիշեալ մտածումին:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(Շար. 2 եւ մնացեալը յաջորդով)

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ

«ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ» ԶԱՅՆԱՊՆԱԿԸ

Մեկնարանութիւն՝ ԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

Ներկայ յղուածը՝ որ գրախօսական մը չէ, ինչպէս նաև թատերական քննադատութիւն մը չէ եւ կը վերաբերէ միայն Պ. Սեակի շարք մը բանաստեղծութիւնները մեկնարանած Արա Յովհաննէսեանի Վարդաշէր Սնտիք ձայնապնակին, առինի պատիկ պատմական մը, եւ թերեւս առավել թաւառարտութիւնի, եւ առավել հրնայ հասկնալի դառնալ, թէ ինչու այդքան ուշացումէ ետք կ'անդրադառնամ այդ ելույթին:

Տարի մը առաջ էր, ամբան սկիզբները, Համազգայինի զբախանութիւն յայտնեցին, թէ Արա Յովհաննէսեան իր նոր հրատարակ հանած ձայնապնակէն հաս մը կը փոփոքի նուիրել ինծի, զգրախօսականի ինչքանքով:

Արա Յովհաննէսեանի թատերական շնորհները տեսնելու առիթը ունեցած էի Վ. Խորշիանի տունը ներկայացումներուն ընթացքին, ուր ան երեսուն կու դար որչա՞ր ընդունակութիւններով ու կարողութիւններով, սակայն մեր առած արդարութիւնները չէին եղած անխառն, բուսական երկար ճամբայ մը կը սպասէր իրեն՝ ցեմական արևաօրէն մէջ առաջնաւոր եւ յաջող դերասան մը դառնալու համար: Յայտնաբերուող շնորհն ու կարեւորութիւնները տեսնելի էին ու հաստատու-

լի: Այդպէս ալ արասյայտաւած էի թատերական քրտնիկներուս մէջ:

Հիմա, Արա Յովհաննէսեան կը յանդգնէր հրատարակ դալ արտասանութիւններով, բոլորն ալ առնուած Պարոյր Սեակէն:

Առաջին մասնումս կ'ըլլար վաղատամ համարել նման ձեռնարկ մը, երիտասարդ, դեռ սկսնակ Արա Յովհաննէսեանի կողմէ. ջիշ մը յուսակնոտութիւն կը վերազրէի իրեն, երեւալու ժարժալ մը թերեւս: Չայնպիսիան անդրադառնալու ինչքանքով իր առաջարկին, որ կը հասարուէր Համազգայինի գրախօսութիւն քարտուս գարուէրին կողմէ, կը պատասխանէի:

— Սիրով, սակայն թող նկատի ունենայ, որ կը դրս՝ այնպէս՝ ինչպէս կը սպասուրուիմ իր ձայնապնակին. դրածս կրնայ դրական չլլալ:

— Ինքն ալ այդպէս կը փոփոքի արդէն, — եղաւ օրիորդին պատասխանը:

— Մաս լաւ, այդ պարագային թող զրկէ ձայնապնակը:

Այցան օրեր, մէկ-երկու շաբաթ ու ձայնապնակը չհասաւ ինծի: Մտածեցի, թէ Արա Յովհաննէսեան մտքը փոխած է եւ չ'ուզեր իր արտասանութիւնները ենթարկել քննադատութեան:

ժամանան՝ որ թերթերուն մէջ սկսան երևան զալ ընթացիկ զովասանքներ, որոնց կ'ընկերանային իր՝ արտասանողին նկարները, ինչ որ տեսակ մը բնականային բնոյթ կու տար գրտածնորուն եւ կը ճշէր մտածել, թէ այդ ձեւով կը փորձուէր ձարձէքաւորել արտասանութիւնները:

Այդ օրերուն էր նաեւ, որ Պէյրութի Հայկական ուստիտեմէն արտայայտուեցան ժամանակակի ժամին եւ իրրիւ Նժոյշ Ներկայացուցին արտասանուած կտոր մը, որ կը յիշեցնէր «Մարտիկ» ներկայացման մէջ Արա Յովհաննէսեանի շարժիչ աւելի արագ խօսակցութեամբ կատարուած հարկերն խաղարկութիւնը, որով՝ կիրարկուած ոճը չէր նպաստէր Պարոյր Սեւակի հատրին («Մարտիկ») հարազատութիւնը փոխանցելու արուեստին: Ունկնդրելով միայն այդ կտորը, կանխարձանագրութիւնները իմ մէջ կ'աւելնային, ի մասսա ժամանակակից, կամ արտասանողին եւ գոհունակութիւն մը կը զգայի ժամանակակից ինչի յրկուսն շըլլալուն համար, քանի որ սպաս պիտի ըլլայի չորհուր այդ մասին:

Գանի մը ար ետք, սակայն, Համալսարանի գրախանութիւն կը զրկէին «Պարոյր Սեակի» ժամանակակից, մեկնարանութիւն՝ Արա Յովհաննէսեանի:

Հարկ էր ունկնդրել ժամանակակից: Հակառակ կանխարձանագրութիւններուս՝ չէի՛ կրնար կտրել մը կազմած համարել միայն մէկ կտորը լըսած ըլլալով, այն ալ ուստիտեմի ընթացքին արուած ձեւին տակ:

Ջամնապուսի շարժիչները, արտասանուած կտորներու ցանկին առնթեր, գրուած էր հետեւեալը. «Այս ալլանքը պոռթկում է: Իմ պոռթկումս: Ինձի համար զպոռթկումսը արտայայտութեամբ միջոց — միտիում — մըն է: Հոն յիկամ յագեցած եւ կուտ տրամադրութիւններու կտորներ, այլ հոգեվիճակի մը (ընդհանրապէս վարակիչ ու անհամոզուող) զարգացող ու չըզգածից պատաստուց. եւ այս, կը հտատոսմ, կարիզն է Պարոյր Սեակի «Եղիցի Լոյս»-ին:

Այս սողնքը եւս կանխարձանագրութիւն մը կ'առաջացնէին: Զէ՞ որ կրնային արտասանողին եւ իր մեկնարանութեան վրայ ուշադրութիւն հրահրող պարզ միջոց մը ըլլալ միայն:

Այսպիսի արձանագրութիւններով կը սկսէի ժամանակակից ունկնդրութեան:

Առաջին ներսին վրայ ժամանակուած է Պարոյր Սեակի հետեւեալ կտորներուն մեկնարանութիւնը՝ «Նորօրնայ տղօք», «Ճակատամարտ պատի հետ», «Ծարածուն», «Երազալիք սարգազը», «Պարապոյրիւն»:

Երկրորդ ներսին վրայ կանխեալ կտորները՝ «Ծիրանում եմ», «Այստեղ իստի մասին», «Ճառագայթային այտ», «Ժողովուրդներ», «Անարդարութիւն», «Մերումները հեքիաս փոխութիւնը», «Ողբում մեռից» (ժամանակի բեմադրութիւն):

Առաջին իսկ կտորին ունկնդրութիւնը («Նորօրնայ տղօք») կը զսոհար ինչպիսի պարտադրող ու ապրումով, ըմբռնումով վերաբարձուած մը Պարոյր Սեակի հոգեկան ու մտային աշխարհին, որով՝ յալորդող կտորները, մինչև անգամ «Մարտիկ», կ'ունկնդրէի հետեւեալ անգամ ուրախութեամբ, ներքին խոր գոհունակութեամբ, ըմբռնութեամբ:

Այս Պարոյր Սեակի բանաստեղծութեան ըմբռնութեամբ պիտի ըլլայ այս ժամանակակից ունկնդրութիւնը բոլոր անոնց համար, որոնք յանձն պիտի առնեն անհրաժեշտ լուծութեան մը մէջ հաղորդուելու Արա Յովհաննէսեանի մեկնարանութեան:

Որովհետեւ, ժամանակակից շարժիչները վրայ գրուած տողերը ունկնդրին ուշադրութիւնը գրաւելու համար գրուած տողեր չեն. սպրո՛ւմ են, արտասանողի հոգեկան աշխարհին անկեղծ արտայայտութիւններ. ա՛յլ կը վկայէ ամբողջ ժամանակակից, արտասանուած իւրաքանչիւր կտորին մէջ գրուած ապրումը, իւրաքանչիւրին վերաբարձուութիւն համար փնտրուած ու գտնուած մըթնոյտը:

Արա Յովհաննէսեան արուեստագէտ արտասանող մըն է: Ան կը բերէ իր արտասանութեանց այն հազուադիւս ու կենսական արժէք ունեցող տարրը, որ կը պակսէ շատերու՝ ներքնանկերու ըմբռնումն ու համապատասխան արտայայտութիւնը անոնց: Իր արտասանութեանց մէջ հազուադիւս են այն տողերը, թերեւս մէկ կամ երկու տող միայն, որոնց արտայայտութիւնը կարելի է անհրաժեշտ ներքնանկերը զուրկ համարել: Միևնոր կերպով կուտ են լրիւ ըմբռնուելու հրահրի մը: Կարելի է անվարան ըսել, թէ Յովհաննէսեան շատ մեծ շարժիչով յալորդած է ըմբռնել Պարոյր Սեակը եւ, մանաւանդ, ան կրցած է հարազատութեամբ վերաբարձուել իւրաքանչիւր ու-

զի հտին սպրտած զգայնութիւնները: Հազուա-
դիւս են այն արտասանողները, որոնք բոլոր ար-
տասանած կտորներուն մէջ ալ չէլաները դրուած
ըլլան իրենց ճիշդ տեղը: Արա Յովհաննէսեան
այդ քաջաբնիկներէն է:

Արտասանական արուեստին գլխաւոր, հիմ-
նական գաղտնիքը արգէն կը կայանայ շնչանքու-
իրական գործածութեան մէջ եւ ոչ թէ արուես-
տական յիշատարութեան կամ եզրեակաւոր ե-
լեւէջներուն մէջ:

Քերտութիւններ կան անշուշտ, զխաւորարար
առողանութեան մէջ, որոչ զիրերու համար
(Մասնաբարար Ռ գիրը): Կայ նաեւ, անշուշտ, ար-
եւելանայ Շնչանքու արեւմտասոյերէնին յա-
տուի նրբերանգներ առանձն ըլլալու իրողութիւնը:
արեւմտասոյ մը դժուար թէ կարենայ հարազա-
տորէն տալ Շնչանքու այնպէս՝ ինչպէս կու տան
արեւելանայերը: Արեւմտասոյ արտասանողները,
սակայն, պէտք չէ փորձեն ամբողջովին են-
թարկուիլ արեւելանայ Շնչանքուին, որովհե-
տեւ կրեան լրջողիլ ու ինչալ անբնականի, ար-
ւեստականի վտանգաւոր սահմաններուն մէջ: Ա-
րա Յովհաննէսեան խուսափած է ատկէ, սակայն
տեղ-տեղ, որոչ զիրերու Շնչանքու քիչ մը աւելի
ուսումնասիրելով՝ կրնար քիչ մը աւելի մտնե-
նալ արեւելանայ Շնչանքուին, առանց անբնա-
կանութեան մէջ ինչալու:

Մեծ նպաստ մըն է նաեւ ձայնը:

Արա Յովհաննէսեանի ձայնը ազուր դործիք
մըն է արտասանութեան արուեստին ու ինք զի-
տէ լուսազոյնս սպասարբի իր այդ առաւելու-
թիւնը: Մէկ կտորի մէջ իրան (ՎՄազրստուն),
զուցէ խաբուելով անոր վերնադէն, մացուցած
է ձայնական որոչ խաղեր, որոնք կրնային զեղը-
նիլ եւ կտորին մեկնարանութեան բերել յաւելալ
հարազատութիւն մը:

Ըսինք թէ ըմբռնումով ու խոր պարումով

արտասանուած են զրեթէ բոլոր կտորներն ալ,
սակայն կ'ուզենք ունկնդիրներուն մասնաոր ու-
շաղթութեան յանձնել առաջին երեսին վրայ գըտ-
եւըող զնապալիք արքազը եւ Վերորիայ արքա-
նը: Երկրորդ երեսին վրայ՝ Վերամուսի Եմէ,
Պարոյր Սեւակը, ՎՍիալ խոփ սիալի մապնջ
կտորը եւ, անշուշտ, վերջին կտորը, որ Հասուած
մը չէ, ամբողջական բանաստեղծութիւն մը չէ,
Արա Յովհաննէսեանի մասշտաբումը կողմ ձայ-
նային բեմադրութիւն մըն է Պարոյր Սեւակի
ՎՍիգի լոյսէ վերջին կտորին, Հոյակապ ՎՄա-
ւայն սպասարագի վերջին երեք տողերուն ՎՍի-
քամ Միսիլո՛ց... Բնկանիմ շաքիբ՛ը... Կոչիմ
պարոյր՛ց...: որոնք ձայնական ու երաժշտական
մթնոլորտի մը մէջ կը կրկնուին արտայայտու-
թեան այնպիսի՝ այլապէս կոչանքներով եւ ապ-
րումի այնպիսի՝ աստիճանական յաներումով մը:
Մը, իրօք, կը դասանան ձայնական բեմադրութիւն
մը, որուն երեք տողերուն ետին ամբողջ քա-
նաստեղծութիւն մը, որքերգութիւն մը կ'անգին
կու գայ:

Երաժշտական դասական ձայնայնակները կա-
րելի է կրկին ու կրկին ունկնդրել միշտ նոյն
հանգիստ ու նոր վայելքներ ստանալով անոնցմէ:
Հազուադէպ է, որ արտասանութեանց ձայնա-
պակ մը կրկին ու կրկին ունկնդրելու փոփոքը
ուենաք: Պարոյր Սեւակի բանաստեղծութիւննե-
րը մեկնարանող Արա Յովհաննէսեանի այս ձայ-
նայնակը անոնցմէ է:

Պէտք է անկնդրել զայն կրկին ու կրկին եւ,
մա'նասանդ, պէտք է մղել պատանիները, երկտա-
սարդները, որ ունկնդրեն զայն, ըմբռնեն թէ՛
արտասանութիւնը եւ թէ Պարոյր Սեւակը, որուն
հոգեկան սուք ճիշդ իր հտին կը պարունակէ
զեւեւա լրիւ լքնուած, լրիւ լթափանցուած խո-
րութիւններ, համաշխարհային արժէքով ազ-
րումներ ու գեղեցկութիւններ:

Բ. Փ.



Վ Ե Ք Ն Ա Յ Ա Ր Ժ Ի Ա Ր Կ Ա Ծ Ո Վ ...

«1971-1972ի մերան, բազմաթիւ արհիւրճերէ Ի-
մագած էի, թէ կը պատրաստուիմ զիս սպաննի
«Ինքնաշարժի արկածով»:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈՒԹՅՆԻՑԻՆ

«Էտոյիէլըրտ Փրէս» լրագրական գործակալութեան թղթակից Ճրէնք
Քրիփոյի եւ «Լը Մոնտ»ի թղթակից Ալէն Ժաքոպի շնորհուած հարցա-
զրոյցի մը բնթացքին կատարուած յայտարարութիւն մըն է վերի տողերուն
մէջ Սոյժենիցիներէ արտայայտած մտափախութիւնը, որ բնդարձակ հարցա-
զրոյցին ամէնէն մտահալիչ բնդգծումներէն մէկը կը հանդիսանայ անկա-
կած:

«Ինքնաշարժի՝ արկածով»...

Բունաստեղծներ, գրադէտներ, պատմարաններ ու դերանակներն ու շնորհ-
յացներու այնքան առատ միջոցներ ունեցող համայնական մասնաշէտները
իշխանութիւններուն անբազմալի տարբեր «ինքնաշարժի արկածով» հաշուե-
յարդարի ենթարկելու նոր ո՞ճ մը որդեկրէցին ու կիրարկեցին արդեօք
1971ին, որ հռչակաւոր ուսու գրադէտը նախընթաց փաստեր ունեցող մարդու
մը ինքնափաստահաճութեամբ կը խօսի «ինքնաշարժի արկածով» իրենց մեքենա-
յութիւնները պատկող գործակալներու ինքնաշարժային խորհրդաւոր շար-
ժումներուն մասին:

Արտասահմանի ընթերցողը շատ ծանօթ չէ այս նոր դաւին, պարզա-
պէս մէկ (միա՞յն մէկ) փաստ կարդացած է, ա՛յն, որ խորհրդային ըմբոստ
գրադէտներէն՝

«Օվիշկիմ եւ Տուտիցիւր գրի գացիմ հմտօրէն քեմադրուած սոխովը-
քարներու»:

Ինքնաշարժային գործանքներէն մեկի իմացուած փորձառութիւնը այս
է միայն:

Սոյժենիցիներ, սակայն, կը թուի, թէ աւելի շատ բան դիտէ «հմտօրէն
քեմադրուած ավտովթարներու» մասին եւ անհաւանական շնկատելով «ինք-
նաշարժային արկածով» ջախջախուած բանաստեղծներուն ու գրադէտներուն
ճակատադրին ենթարկուելու բախտը, կ'աւելցնէ.

«Եթէ յայտարարուի, թէ սպաննուած եմ եւ կամ յանկարծ խորիքա-
ւոր կերպով մեռած, կրնա՞մ անվարանօրէն եզրակացնել, որ սպաննուած եմ
Քէյ. ձի. Պի.ի կամ գաղտնի աստիկանութեամբ հաւանութեամբ»:

Յանկարծ եւ խորհրդաւոր կերպով պատահած մահերուն կամ «ինքնա-
շարժի արկածով» ջախջախուածներուն առիթով ուրիշ ի՞նչ կարկացութեան
կարելի է զալ արդէն, երբ ամէն ոք դիտէ, թէ առանց զպետութեան ապահա-
վութեան պիտակցութեան կամ հաւանութեան՝ ո՛չ թէ ինքնաշարժ, այլ տե-
րե՛ւ անպա՞մ չի շարժիւր աշխարհի այդ մասին մէջ...

«ԻՄԱՍՏՈՒՆ ԸԱՍԿՈՎ»...

Հայասանի մէջ հրատարակուած դիրքերը եւ գիրքի ծաւալով լոյս տեսած հրատարակութիւնները իրենց ծալքերուն յաճախ կ'ունենան յատուկ թերթիկներ, ուր կ'ատարուած կ'ըլլան նկատուած վերադասարան ուղղումները:

«Սովետական գրականութիւն» ամսագրի Յուլիսի թիւին մէջ ի միջի ալլոց կար կարեւոր վերադաս մը, բայց մեր օրինակին մէջ ուղղիչ թերթիկ չկար դժբախտաբար:

Հասաւ նաեւ նոյն ամսագրին Օգոստոսի թիւը, որուն մէջ վերադաս սրբազրոյ նշանը կը պահօք դարձնալ: Փորձենք ուրեմն կատարել այդ պարտականութիւնը, որպէսզի թիւրիմացութիւնը չընդհանրանայ:

Խնդիրը կը վերաբերի Վախտանգ Անանեանի առիթով գրուած «Բնաշխարհի երգիչը» խորագրեալ գրութեան իրբեւ մեկնակէտ ծառայող բանաստեղծական հետեւեալ Լրկտողին եւ անոր կցուած ստորագրութեան:

... Այդպէս ցօղունն է ծանրանում համդում,
Երբ լցում է ձայլ, իմաստուն հասկով:

Հ. ՍԱՀԵԱՆ

1. Կարագետեան ստորագրոյ ոչ շատ ծանօթ յօդուածագիրը յայտնապէս թիւրիմացութեան մէջ է եւ ամաթերթին շատ ծանօթ խմբագիրն ու շարենցողէաներ (Ս. Աղաբաբեան) հաշուող խմբագրական կօլեգիան չեն անդրադարձած Ձարենցի չափազանց շատ ծանօթ «իմաստուն հասկ»ին, եւ զայն եզածին պէս ձգած են նման նպատակներու բնաւ պէտք չունեցող բնաշխարհի բանաստեղծ երգիչին, Համօ Սահեանին:

Ի հարկէ, Սահեան իմաստութեան խորթ բանաստեղծ մը չէ եւ իր անունին պիտի երբեք անբնական պիտի չթուէին նման յիցք ստացած տողերը, բայց բնական չէ ու նաեւ խիստ զարմանալի է, որ տակաւին այսօր Ձարենցի ստեղծած այդ պատկերին անծանօթ յօդուածագիրներ ու խմբագիրներ կը գտնուին մեր իրականութեան մէջ:

Երբ Հայաստանի օահմաններէն ներս հանդում ծանրացած հասկին հատկաներուն թիւով ու իմաստութեան չափով մտաւորականները տիրական ներկայութիւններ են եւ մէկ կողմէ դարերու հետունները թափանցող ու վերծանումներ կատարող նախանձախնդիր դիմանկաններ հայուելու մակարդակին հասած ենք, ներելի չէ մեզի միւս կողմէ, որ ժամանակակից գէմքերու տողերը իրարու խառնենք կամ անխառն տողերու տակ ժամանակակից բանաստեղծներէն մէկուն անունը տեղաւորենք միւսին տեղ:

Ձարենցի խնդրոյ առարկայ տողերը կը գտնուին իբրեւ «Պատասխան թշնամիներու» գրուած «Ես այլն չեմ այլեւս» անուն կտորին մէջ, որ գրական պայքարներու բուն շրջան մը կը պատկերացնէ վիպալիով միաժամանակ նախնիքաց պղտորութիւններէն, թեթեւ թմբիահարութիւններէն եւ ամէն կանչի արձագանգող գոտում-գոշումներէն վերադարձող եւ Կաւելի խորունկ, աւելի անշեղ» հունի մը մէջ մտած, հանգստացած, պայծառացած, խռնով ծանրացած բանաստեղծին հակայ ու հրաշալի բարելոյնութեան մասին:

Առիթը պատեհ համարելով՝ կ'արտագրենք քերթուածը, ընթերցողին ուշադրութիւնը հրաւիրելով անոր իմաստութեան հասած ըլլալու պատճառին եւ իմաստութեամբ նուաճելի հեռանկարային բաժիններուն վրայ:

Ե Ս Ա Յ Ն Չ Ե Մ Ա Յ Լ Ե Ի Ս

(Ներքոյ լիրիկական)
ՊԼՏԱՍԽԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՍ



Օ. դո՛ւ՛՛, ապետներ չնչի՛ն զուերի,
Ի՛նչ է՛ք էջփշում հանկերդ սրած. —
Եւ ոգով հիմա պի՛նզ եմ աւելի,
Աւելի՛ սուկուն, քան էի առաջ:
Եւ եթէ երգով ես առում եմ, թէ
Ես ա՛յլ եմ հիմա, այլ եւս այն չեմ —
Նշանակում է՛ ձոր ետե՛ն եմ մտնի՛
Աւելի՛ խորանկ, աւելի՛ անշեղ:

Ես յախում էի, ինչպէս պղտոր գետ,
Եւ սրտով թփերէ, ու երգով շառլի, —
Եւ ոգով այսօր չե՛մ փոխուել թէպէտ,
Գարծով եմ, սակայն, ծանր ու ժլատ:
Իմ հոգին այսօր էլ չի՛ մանքանում,
Ձի՛ մսկում իրեն բռնում յաւտով —
Կնչպէս ցօղունն է հանգում ծանրանում,
Երբ յցում է ձոյլ, իմաստուն հասկով:

Ես այն չեմ հիմա... Յոյզերիս քամին,
Որ էշում եր ի՞նչ անկումից-անկում —
Համզոտացել ու նստել է հիմի
Եւ ամէն կամչի չի՛ արձագանգում: —
Ել չի՛ հոնգում սիրտս վայրենի,
Ինչպէս զաշտերում ճոռոց սանձարձակ. —
Գզուեց իմ սիրով մի ձեռք հայրենի,
Եւ ես մի գիշեր իմաստուն դարձայ:

Հասկացայ հոգով, որ կենցիկ համդում,
Մարդկային ծիւղն ծռվում հաղմածած
Միայն երգերով ու անձեւ խանդով
Օ, ա՛յ մի ցօղուն դեռ չի՛ բարձրացել:
Ես ձեռք քաշեցի կրփերից վարար,
Ջգայունցների յարձանքից անձեւ
Եւ աշխատանքի բոցը փրկարար
Իմ անձրուածե՛ծ երեսը յանձեց:

Ու դա՛շտ եմ ելնում ես երկին անա,
Ինչպէս հնձուորը ելնում է հնձի.
Թո՛րկի փոխարէն ձեռքերիս պահած
Խանով ծանրացած էնար պղնձի:
Իմ գլխի վերեւ կէտո՛ր է արդէն,
Ամբամ արեւն է կամոցնէլ գեղերում,
Իմ դէմ-խոհերի չե՛նձած արտեր, —
Եւ հոգսն է անա յոմէրը կիտում:

Ինչե՛ս եմ վասնել ես անգին ժամեր,
Եւ ինչե՛ս հուճտեր ցրել եմ ձրի, —
Եւ ինչե՛ս գիտի հիմա աշխատե՛մ,
Որ գտնեմ ես այն, ինչ գո՛ւր կարցրի...
1929

Ես դեռե՛մ հիմա, որ յամա՛ն է,
Ատորեայ աշխատանք է անդուլ —
Այն ամէնը, որ վարար, հողմավար էր,
Որ դալու էր երգով ու խանդով...
Ե. Ձ.

Ես շառլի եզայ իրբեւ սերմնացան,
Ժլա՛ս կը լինե՛մ՝ ելնելով հնձի, —
Եւ աշխատանքի բոցը սրբազան
Թո՛ղ մինչեւ գիշեր երեսս խանձի: —

Որքա՛ն աշխատանք ու յոն կայ այստեղ,
Երկարաւորուող իմ հայրենիքում,
Որի վրայով հողմեր են անցել
Եւ մեզ լուացել երէ մրրիկում: —
Որի գարեթից գոտացած դեմքին
Փչել է այսօր շունչը լե՛նքին, —
Կիզուել է երգով երկիրը հիմքից
Ու շունդալով շինուել է հիմի:

Առաջին անգամ իմ հայրենիքում,
Որ հառում էին արեւուն գետեր —
Այս այգարացի երթը գրնգուն
Իմ բարձրաշառլի երթն է աւետել:
Հիմա՛ վատակած ու ձեռքս ձնար՝
Ելնում եմ անա կրկին ժպտապէմ,
Որ սերունդների գարեթի անկարար
Խանով ծանրացած իմ երգը խանձի:

Ես չե՛մ երգելու այժմ շառաչում
Գալիքի մասին, որ գալու է պե՛տ.
Իմ ներումն հիմա յուզում եմ, անում
Ու շարժում ուրի՛շ խոհերի գեղեր: —
Ներկա՛ն է հիմա իմ զէ՛մ ազկում,
Ինչպէս կրճերի ամենի մի ծով, —
Եւ անցնում եմ ես, կնարս բեկում,
Այս հազարազայն ովկիանի միջով:

Անցնում եմ՝ իմ ձեռք խոհերի գեղի —
Եւ շուրջս անա, մտնելն ու հեռուէ,
Անհուն կրճերի գագաւունքների
Լա՛յն, անծայրածիր ովկիանն է եռում:
Ճամբայ եմ ելնում ես անա մե՛նակ,
Քնա՛րս է միայն ինձ հետ միտսին, —
Եւ երգում եմ ես, երգում եմ անա
Իմ պայծառացած խոհերի մասին:

Դժուար կը լինի իմ երթը հիմա,
Դժուար ու դժնի, քան երբեւիցէ,
Եւ նարբիս գուցէ օձերի նման
Ինձ արիւնտանե՛ծ ժամիկները ձեք, —
Բայց պի՛նջ է ազիս... Ու ա՛յ մի ժամիկ
Ինձ չի՛ բաժանի իմ անդուլ զարից,
Ինչպէս ա՛յ մի ու՛ժ ինձ չի՛ բաժանի
Իմ շունդալից, պայծա՛ն քնարից...
1929

Ե. ՁԱՐԵՆ

ՀՆԱՐԱԻՈՐ Է...

Գրիգոր Աճէմեան, որդին Գուրգէն Մանարիի, չորս դրած նամակներէն այս տարի շարք մը արամադրեց «Գրական թերթ»ին (1978, թիւ 33), որոնցմէ մէկը, Շահնուրին մէկ դիտողութեան արձագանքը բովանդակող թուղթը, կը ներկայացնենք ստորեւ:

Հոն արծարծուած «պէտք եղածից աւելի օգտագործուած» Հիւժարի ճասին, օրին, «Այրուող այգեստաններ» վէպին առիթով դարձեալ, ուրիշներ կու նայն դիտողութիւնը բրին Մանարիի: Հայաստանի գրողներու քարտուղարութիւնը յիշեցուց, որ «պատմական բազում դէպքեր երթարկուել են կամայական, անբարեխիղճ մեկնաբանութիւնների: Վէպում առատ տեղ են գտել անհաշիւ բամբասանքներ ու երագներ, անպատշաճ արամտութիւններ, չարդարացուող գաւեշտ», իսկ «Բագին»ի մէջ գրուեցաւ, որ «Մահարին գոհն է որքան իր կիրքերուն, նոյնքան եւ արամտութիւններու փորձութեամ չկարենալ դիմանալու իր շնչուած տկարութեան»:

Կը թուի, թէ Շահնուրը նոյն բաները ըսած է իրեն: Բարեբաղ անդրադարձին ճասին կը խօսի եւ ինք: Այս բեկումը, իմացած ենք առկէ ստաջ, վըճուական եղած է վէպին վերամշակման առեւ: Ահուստիկ նամակը.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻՆ

20 ՅՈՒՆԻՍԻ 1987 Թ., ՊԱՆԱՆՔԱ

Թանկագին Շահնուր.

Կը հաւատա՞ս, եթէ ասեմ՝ երագի՞ս տեսայ, որ երանդ ես, եւ անհաւանակդ: Ես կարծես թէ կամաց-կամաց կարգի եմ գալիս, որքան կտրող է կարգի գալ մի մարդ, սրը ժամագրավայր է տարբեր ու տարբեր երանդներին...

Պատրաստում եմ «Այգեստաններ»ի հատարային երատարակութիւնը: Նկատի պիտի առնեմ բարեկամներին նկատողութիւնները, պիտի երթարկեմ որչա՞ մշակման, պահելով, ի հարկէ, գեղարուեստական մակարդակը: Գրիր բոլոր նկատողութիւններդ, հաշուի կ'առնեմ սիրով եւ երկիւղածութեամբ...

Քո գրած «երգանիկ» ոճի մասին շատ եմ մտածել ու շատ եմ ծանր ու թեքել առել: Նկատողութիւնդ տեղին է, հնարաւոր է, որ ես պէտք եղածից աւելի օգտագործել եմ հումորը, չեմ պահել չափի գզացումը, խախտել եմ այն... բայց ինչպէ՞ս դարմանեմ՝ չգիտեմ: Եւ եթէ ձեռք տամ այդ տեղերին, չե՞մ կտրի վէպի մէջքը:

Գրքիս շուրջը բարձրացած այս ադմուկին մէջ մի ուրախալի բան կայ, այն, որ մարդիկ ազատ-համարձակ պաշտպանում են մեր ազգային՝ ասեմէ՞ սրբութիւնները, բայց այս բարի գզացումը չպէտք է հասցնել չափազանցութեան: Զափի գզացումի բացակայութիւնը արդէն մեր ազգային դժբախտութիւններից մէկն է: Դրանով է առաջում գուցէ նաեւ իմ գիրքը...

Ինչեւէ: Գիրքը չի գրուում մի սերնդի համար: Կը գան նոր սերունդներ եւ նոր աչքով կը կարդան այն գրքերը, որոնք դիմանում են ժամանակի անդամ քննութեանը:

Քա՛ Գ. ՄԱՀԱՐԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
ՄԱՅԱԿՈՎԱԿՈՒ ՀԵՏ

— Դու Հայաստանի ո՞ր մասի ծրնունք ես, — հարցրեց Մայակովսկին, տխուր հոգոց հանելով: — Ես Հայաստանը համարեմ՝ չգիտեմ:

— Չանդեկուրից եմ, Գորիս քաղաքից: Առայժմ այս խնձորներից միայն հայրս ունի:

Ծնորհակալութիւն յայսնեց, յետոյ յիշեց ու գոզեց ինչ-որ «մի չոր քրի համն ու հաւր»:

— Իսկ ի՞նչ է անում Չարենցը՝ Եղիշն՝ ուժեղ բանաստեղծ ունէ՞ր դուք, ու՞ժեղ...

Հեռու, մտիկ ընկերներին, — աշխարհներին, — հրաման հագնելին...

Պոեմի այս հատուածը նա արտասանեց հայերէն: Լեղուի մի քանի անհարթութիւնները ամենեւին էլ չիանդարեցին նրան՝ ջուլջուլելու իր՝ ամուսնույն տաղանդը: Մի ուրիշ դրել էր արժանի վերայ, և՛ ձեռքը բարձրացրել վեր:

Յետոյ արտոյնաց, որ առաջներում արքայի մեջ աւելի լաւ էր արտասանում, իսկ հիմա արդէն մոռացել է:

— Մի ժամանակ գիտէի Չարենցի «Ամենապոեմը»: Հսիք, փորձեմ հայերէն արտասանել:

«Ես
Հայաստանի մի պոետ
...
Բոլորին, բոլորին, բոլորին...»

— Այ, տես, սա էլ եմ մոռացել: Ամօթ է, ամօթ: Ես Չարենցին շատ եմ սիրում: Պէտք է վերջիչել... Բայց, ե՞րբ, ո՞ւր է ժամանակ:

Երբ ես ուզում էի գնալ, Վ. Մայակովսկին յանկարծ հարցրեց Հայաստանի պոեզիան, Ֆրիդ, Գրիգոր Նարեկացի, Իսահակեան, Չարենց, Մկրտիչ Նաղաշ, Նահապետ Քուչակ, Մայակովսկի, Թուժանեան...

— Թող մեր յեղափոխութիւնը հաստատուն արժատներ պիտի թող ի սպաս վերանան բուրժուան, նեպոստները, մեր թշնամիները, որոնք մեզ հանգիստ չեն տալիս ամէնուրեք, ես սկսելու եմ հայկական տեղիայի հիմնական ուսումնասիրութիւնը:

ՎԱՀԱՆ ԲԱԿՈՒՆՏ
(Հատուած)

ՀԱԶԱՐ ԱՓՈՍԱ...

Այս տարի, Վլադիմիր Մայակովսկիի մահուան ՅՕամեակին առիթով, հայրենի մեր մածուր լայն տեղ յատկացուց ողորմականի բանաստեղծին, հրատարակելով անկէ հին ու նոր թարգմանութիւններ, ու իր մասին՝ վերլուծական յօդուածներ, սպաւորութիւններ, յուշեր:

Եղերարարստ բանաստեղծին մասին գրուած յուշերէն մէկը ստորագրած է Էդերարարստ Բակունցի եղբայրը, Վահան Բակունց, «Գարուն» ամսագրին մէջ, զով խորազրին տակ:

Նորութիւն է, ցոնէ մեզի համար, Մայակովսկիի ծանօթութիւնը հայոց լեզուին, բանաստեղծութեան, բանաստեղծներուն, Նարեկացիէն մինչեւ Չարենց:

Հետաքրքրական է կողմուած ծրագրի մը հնչեղութիւնը ունեցող Մայակովսկիի հայոց բանաստեղծութիւնը հիմնական ուսումնասիրութեան ենթարկելու արամագրութիւնը:

— Թող մեր յեղափոխութիւնը հաստատուն արժատներ պիտի թող ի սպաս վերանան բուրժուան, նեպոստները, մեր թշնամիները, որոնք մեզ հանգիստ չեն տալիս ամէնուրեք, ես սկսելու եմ հայկական պոեզիայի հիմնական ուսումնասիրութիւնը:

Վահան Բակունցին հետ հաստատուելով ծանօթութեան ընդամէնը տարի մը հոգ, 1930ին, առանց սպասելու «մեր յեղափոխութեան» արժատացումին ու բուրժուաներու եւ նեպոստներու վերացման, կորսնցուցած ամէն հաւատք ու լաւատեսութիւն, Մայակովսկի տարնանակի հարուածով մը վերջ տուաւ կեանքին, հարուածելով նոյնպէս հայկական բանաստեղծութիւնը ուսումնասիրելու իր ծրագրերը:

1929ին, Վահան Բակունցին հանդիպած օրերուն, Մայակովսկին չէր գիտեր տակուին ու տարի մը ետք միայն ու իր անձնապայանութեամբ հաստատեց, որ «մեր յեղափոխութիւնը» դուրսը այնքան թշնամի չունէր, որքան ունէր ներսը եւ ներսի թշնամիներուն առաջին «թշնամիները» իրենք էին, «մեր յեղափոխութեան» հաւատացող մեծերը, մեծատաղանդները, բոլոր ասպարէզներուն մեծահասակները:

Ափսո՛ս, որ Մայակովսկին կանուխ մեկնեցաւ կեանքէն ու հազար արհուս, որ հայ բանաստեղծութիւնը կորսնցուց միջազգային մեծ վկայ մը...

ԱՅՍ ՔԻՉ ԾԱՆՕԹ ՔԵՐԹՈՒԱԾԸ...

«Սփիւռք» շարժումների այս տարուան թիւ 34ին մէջ, «Ողջուն, Պարսի Սեւակին» տողով սկսող խմբագրական նոթ մը կայ, որուն շարունակութեան մէջ Սեւակը «Նկած է ահա իր կրգով, իր «Երգ երգոց»ով, բայց կրակներով, որոնք կրքեմ պիտի չմարին»: Ու մէկ տող վար՝ «Կարծէք կեցած է քիչ անդին եւ սիրավատ կը գրուցէ Սուլամիթայի հետ, ու իր բառերուն ընթացքով կը հասնի մեզի, մեր մարտն անդին, մինչև խորը հոգիին»:

Պարսի Սեւակը, իր «Երգ երգոց»ը, «Երգ երգոց»ին Սուլամիթան: Ինչ խօսք, որ թէ՛ բանաստեղծին տրուած ողջունը, թէ՛ «Երգ երգոց»էն զգացուած կրակները եւ թէ՛ Սուլամիթա Հերոսուհին հրապոյրները մօտ են ընթերցողին սրտին: Վարակիչ է նոյնպէս տրուած գնահատանքը: Բայց ստացուած ազատութիւնը այսպէս պիտի չըլլար ու թերի՛ պիտի ըլլար անպայման, եթէ մարդիկ կարգային միայն «Սփիւռք»ի մէջ տրուած «Երգ երգոց»ը եւ ամբողջութիւնը ծանօթ չըլլար իրենց:

«Երեսնի մէջ, — կը կարդանք «Սփիւռք»ի առաջին էջին, — տպագրուող «Նրկիրու ժողովածու»ին (6 հատարով) Յրդ հատորէն (էջ 143-5) վերցուած է ստորեւ դրուած քերթուածը, որ քիչ ծանօթ է արտասահմանի ընթերցողներուն»:

Ընթերցողը այն ազատութիւնը կ'ստիչ, որ վերը գնահատուած եւ «ստորեւ դրուած քերթուածը» ամբողջութիւն մըն է, բայց երեւանեան հրատարակութեան վերցուած եւ «Սփիւռք»ի ընթերցողներուն ներկայացուածը «Երգ երգոց»ի հինգ գլուխներէն առաջինն է միայն, մէկ հինգերորդը, շուրջ եօթնասուն տող հինգ հարիւրի հասնող ամբողջին:

Մեր մամուլին առաջ պարտականութիւններէն մէկն է քիչ ծանօթ գեղեցկութիւններուն հմայքը տարածելու դործը, բայց մեր աշխատանքին մէջ պիտի բնութագրուի ըլլանք ու չ'ոտնանք, որ առանց պատճառաբանութեան կամ ծանօթագրութեան քերթուած մը հատուածային ձեւով ներկայացնելու արդարեւ իրենց կրնայ շուք նետել հետապնդուած ամբողջական պայծառութեան վրայ:

1957ին յղացուած, 1960ին աւարտած եւ 1963ին «Մարդը ափի մէջ» հատորին մէջ անցած այս պոետր եղերարարտ բանաստեղծին ամէնէն գնահատուած ստեղծումներէն մէկը եւ սերունդներու հերթափոխութեան զինաց պիտի մնայ նոյն մակարդակին վրայ, ինչպէս եղած է ճակատագրէր իրենց թարմութիւնը շկորնցնելու բախտով օժտուած գործերուն:

Յաւելեալ ծանօթութիւն մը տարու համար «Երգ երգոց»ի մասին, կ'արժէ արտագրել «Գրական քերթ»ին (1964, թիւ 4) մէջ երեւցած Մահարիի խանդավառութիւնը:

«Զափնակաց բնօրջ է Պարսի Սեւակի համար, որպէս սիրերգակի, «Երգ երգոց» պոետը, այս փոքր քերթարարներով եւ մեծ առաւելութիւններով օժտուած գործը բանաստեղծի սիրային գործերի գլուխ-գործոցն է: «Երգ երգոց»ում աւելի քան մի ուրիշ գործում, շեշտուած է բանաստեղծի ինքնութիւնը, նրա կարողութիւնը՝ քայքայելու իր ներաշխարհը, ինքն իրեն դնելու ընթերցողի ափի մէջ»:

Որպէսզէ աւելի շօշափելի դառնան վերի գնահատանքները, Պ. Սեւակի գործերը իրենց տրամագրութեան ասկ չունենող ընթերցողներուն համար մեր յաջորդ թիւով պիտի տանք «Երգ երգոց»ին ամբողջութիւնը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ



ԱՓՐԻԿԵԱՆ ՀԱՄԱՆՈՒԱԿ (Պատմաւածմներ), Պ. Գուրիլեան, Պէյրուք, 1973:

ԵՐԵՔ ՀՐԱՇՔՆԵՐ ԿԱՑԻՆ (Պատմաւածմներ), Լ. Շահոյեան, Պէյրուք, 1973:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ (Ուսումնասիրութիւն), Ա. Տօնոյեան, Թեհրան, 1973:


ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՁՐՈՅՑՆԵՐ, Ա. Տօնոյեան, Պէյրուք, 1973:

ԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՔԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՀԱԶԱՆԿ (Յօդուածներ եւ ֆերքը-
ւածներ), Մանաէ Գաբրիէլեան, Պէյրուք, 1973:

ՎՐԻՊԱԿ

*ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆԻ «ՇԻՂ» բանաստեղծութեան մէջ Կրդ տան քաւ մտլքը
կարգալ քումայթ, իսկ «Անդրադարձին» (էջ 9) վերջին տան հաւփիլը՝
հանքիլ:*

«ԲԱԳԻՆ»ի խմբագրատունը բաց է ամէն օր, առաւօտեան ժամը 9-13, կէտօրէ
հաւ՝ ժամը 4-30-7-30: Շաբաթ օրերը՝ ժամը 9-12:



ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2.50 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدير المسؤول
السيد أرتين كارنيك قزاحيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԴՐԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՒ ԱՐԴՈՒԾՍԵՐ

ՎԱՐՈՑ ԽՐԱԳԻՐ
Գ. ՍԱՍՈՒՆԻ
ԽՐԱԳԻՐ
Գ. ՄԵԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

G. SASSOUNI
Rue Sélim Boustani
Beyrouth - Liban